



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1897

Ա Պ Ր Ի Լ

1897 № 4

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	հրաձ	
1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.	419	Խորտակած կեանք (վէպ շար.):
2 ՇԱՆԹ.	445	Գրիչը (բանաստ.):
3 "	446	Աստղիկը (բանաստ.):
4 "	447	Անցաւ (բանաստ.):
5 "	448	Գիշերապահը (բանաստ.):
6 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.	450	Արտը (Տուրիտի լիշողութիւնից):
7 ԴՐ ՄԻՒՍՍԷ, ԱԼՖՐԷԻ.	454	Մալիսեան գիշեր (պոէմա):
8 ԲԱՔԿԵՆՅ, Գ.	462	Նորեկ (վէպ, շարունակ.):
9 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ.	488	Քանի ժամանակ (բանաստ.)
10 ՅՈՎ ՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ.	489	Էտլիւցիալի դադարարը:
11 ԱՂԲԱԼԵԱՅ, Ն.	504	Էլիզա՝ «կախարդը»:
12 ԼՈՒՍԻՆԻ.	508	Թիֆլ. Հալոց հրատ. ընկերութիւնը:
13 "	518	Լէօի պատասխանի առիթով:
14 ՍԵԻՆԱՆ, Հ.	528	Թատրոնի շուրջը, XIII.
15 ՄՈՒՐԱԴԵԱՆՅ, Յ.	530	Մարդահամար:
16 ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ.	536	Հալ փախտակաւորները վառնալում:
17 Շ.	542	Անցքերը կրեւէլում:
18 ԽՄԻ.	548	Զանազան լուրեր:


Տնդնկատու և Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротшиана, Гол. пр., д. № 41.

1897



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1897

Ա Պ Ր Ի Լ

1897 № 4

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ա. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. 1. № 41.

1897

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Апрѣля 1897 г.

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ Է Պ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

(Շարունակութիւն ¹)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՈՅՍԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

V

Երեկոյեան օր. Աշխէնը շարադրեց «Ժամանակի» մէջ եղած յարձակողական յօդաւորի պատասխանը: Իւր գրածը նա կարգաց Գարեգինին, որը մի քանի կրճատումներ արաւ և մեղմացրեց ոճը: Հետեւեալ օրը այդ գրութիւնը առաջարկեց դպրոցի ուսուցիչներին և վարժուհիներին կարդալու և ստորագրելու:

Զառիկեանի պաշտօնակիցները, ինչպէս երևաց, սաստիկ զայրացած էին իրանց գաղտնի թշնամու վրայ: Ամենքը համարեա հաւատացած էին, որ յօդաւորի հեղինակը իրանց անարժան պաշտօնակիցն է: Դա մի մութ անձնաւորութիւն էր և ծոցի դրպանում միշտ պահում էր մի յուշատետր, ուր նա արձանագրում էր դպրոցի մէջ պատահած զանազան դէպքեր, ուսուցիչների պատմած անեկտորաներ, անմեղ գրոյց և կտտակներ, և նա այդ անում էր,

¹) Տէս «Մուրճ» 1897 թ. № 1, 2—3:

իհարկէ, ոչ բարի զիտումներով, ինչպէս սյդ ապացուցեց լրագրական նենգամիտ յօդաածով:

Պատամիջոցներին ուսուցչական սենեկի մէջ տհաճին աղմուկ էր բարձրանում: Ամեն մէկի դէմքը արտայայտում էր բարկութիւն կամ ղղանք: Կասկածը աւելանում էր շնորհիւ այն հանգամանքի, որ այդ օր «սեահոգին» շարունակ խուսափում էր պաշտօնակիցներին հանդիպելուց: Հէնց որ դասը վերջանում էր, նա իսկոյն վազում էր բակը սաների և սանուհիների վրայ հսկելու պատրաստով:

Ստորագրելուց առաջ ուսուցիչները մի քանի փոփոխութիւնների ենթարկեցին օր. Աշխէնի ներկայացրած գրութիւնը, և պատասխանի ոճը առաջւանից աւելի խիստ ու կծու դարձաւ: Բացի այդ, թէև մի քանիսը դէմ էին, բայց այնուամենայնիւ ձայների մեծամասնութեամբ վճռեցին առաջարկել այդ պատասխանին ստորագրելու նաև կասկածելի պարոնին: Պա, իհարկէ, միայն մի խորամանկ միջոց էր յանցաւորին մերկացնելու, որովհետև նա կամ պիտի ստորագրէր, որ նշանակում է երկրորդ խոչտառակութիւն գործել, կամ պիտի հրաժարէր ստորագրելուց և այդպիսով ինքն իրան ակամայից մատնէր:

Ուսուցչանոցից նորան կանչեցին, և նա եկաւ:

Օր. Աշխէնը նորա առաջ դրեց ստորագրւած թերթը և ասաց.

— «Ժամանակի» երէկւայ համարի մէջ դուք անշուշտ կարդացած կ'ընենք այն յօդաածը, որի մէջ անյայտ հեղինակը հազար ու մէկ զրպարտութիւններով շօշափում է ուղղակի մեր ուսուցչական խմբի պատիւը: Այն ստերը հերքելու համար մենք պատրաստել ենք ահա այս պատասխանը, ամենքս ստորագրել ենք և խնդրում ենք, որ դուք էլ ստորագրէք:

Նա վերցրեց գրութիւնը և սկսեց մտքումը կարդալ: Նա սպրդնաձ էր: Թուղթը ձեռքին ղողզողում էր: Զորս կողմից սլաքների պէս աչքեր էին ուղղւած նորա դէմքի վրայ և ուշի ուշով հետևում էին նորա շարժումներին: Երևի թշուառականը բան հասկացաւ կարդացածից, որովհետև նորա ուղեղը զբաղւած էր այն մտքով, թէ ինչպէս պէտք է դուրս դալ արագիկովիկական գրութիւնից:

— Ես հիմա զնում եմ դասի, արտասանեց նա, զնելով թերթիկը սեղանի վրայ: — Յետոյ մի անգամ էլ կը կարդամ...

—Ո՛չ, պարոն,—վրայ բերեց ուսուցիչներին մէկը,—այստեղ փրկիսոփայեական խոր մտքեր չկան, որ ասենք, դուք չհասկացաք գրւածի իմաստը: Սորա մէջ բոլորը պարզ է: Եթէ ցանկութիւն ունիք ստորագրելու, բարեհաճեցէք ստորագրել, իսկ եթէ ոչ...

—Ես ասացի, մի անգամ էլ պիտի կարդամ,—կրկնեց պարոնը. կան մի քանի վիճելի կէտեր...

Եւ խօսքը կիսատ՝ նա առաւ ցուցակը և դուրս եկաւ ուսուցչանոցից:

—Ստոր արարած! գոչեց մէկը նոյա ետեւից:

—Սպասեցէք, պարոններ, նա ղեռ ստորագրելու է,—հեղնեց երկրորդը:

—Յիմար հօ չէ, որ ինքը վեր կենայ իւր գրածի դէմ բողոքի,—նկատեց երրորդը:

—Հիմա հօ պարզ է, պարոններ, որ այն յօդւածի հեղինակը մեր այս լիրբն է?

—Միթէ դուք մի ըսէք կասկածել էք?

—Այսքան էլ ցածութիւն!

—Եւ այս զծուծը մեր պաշտօնակիցն է!

—Կատարեալ անպատուութիւն է մեզ համար այս խաջտառակ մարդու հետ միասին ծառայելը!

—Խնդրում եմ, պարոններ, կամաց խօսեցէք,—նկատեց Զառիկեանը:—Երեխաները կը լսեն, լաւ չէ: Եւ վերջապէս զանգը արդէն տւել են, և դասի գնալու ժամանակ է: Տեսաք, նա ինչքան ճշտապահ է. իսկոյն շտապեց դասի, չուզեց նոյն իսկ մի վայրկեան կորցնել ստորագրութեան համար:

Աւագ ուսուցչի այս խօսքերի վրայ ուրախ քրքիջ բարձրացաւ խմբի մէջ: Շուտով ուսուցիչները գնացին դասի, և դպրոցում վերականգնեց խաղաղութիւն:

Զառիկեանը այդ ժամին ազատ էր: Նա մնաց միայնակ և խորասուզեց մտածմունքի մէջ: «Վատ մարդիկ լինում են ամեն տեղ և ամեն ժամանակ: Բայց ինչու մամուլը, որ իրան հասարակաց մտքի ղեկավար է յայտարարում, ինչու մամուլը թոյլ է տալիս այդ վատ մարդկանց ասպարէզ զալ և անգութ արշաւանք գործել բարեխիղճ աշխատատեղերի դէմ? Ինչու մարդ չպէտք է կարողա-

նայ հանգիստ արտով իւր սիրած գործով պարասել? Միթէ դա մի անէծք չէ մեր ժամանակի համար, որ մեզանից ոչոք իւր պատիւը ապահով չէ կարող համարել լրագիրների մէջ վկայող զեռուկների կողմից? Եղիւր պարտաճանաչ, որքան կ'ուզես, եղիւր շիտակ և գործունեաց, դարձեալ քեզ չեն խնայիլ, և հէնց վաղը և եթ զանազան գրչակներ ինչ տեսակ սև բծեր ասես չեն դրոշմիլ անարատ անուկնիդ վրայ!...

Այսպէս էր մտածում Զառիկեանը: Աննկատելի կերպով ժամն անցաւ: Լսւեց զանգի ձայնը, և ճիչերով ու աղաղակներով դուրս թափւեցին աշակերտները և աշակերտուհիները իրանց դասարաններից:

Վերջին դասամիջոցին ուսուցիչները շրջապատեցին տխրահուշակ պաշտօնակցին, բայց սա այժմ բացէիբաց հրաժարւեց ստորագրութիւն տալուց, առարկելով, որ ինքը վճռել է չխառնուել լրագրական բանակիւիների մէջ: Ներկայ եղողների միահամուռ, սպանիչ քրքիշը եղաւ այդ խօսքերի պատասխանը: Այնուհետև էլ հանգիստ չուին խեղճին: Նորան հալածում էին ակնարկներով, չար կատակներով, ծաղրով և արհամարհական նշաններով: Նա շատ նման էր գամփռներից հալածւած գալլի:

Զառիկեանը, տեսնելով որ ուսուցչական ամբողջ խումբը մէկի դէմ է կանգնած և մեծահոգութեան նշոյլ անգամ չէ կամենում ցոյց տալ յանցաւորի վերաբերմամբ, սաստիկ խղճահարւեց: Նա ստիպւած եղաւ նոյն իսկ մօտենալ մի քանիսին և նկատողութիւն անել, ասելով.

— Պարոններ, անդթութեան էլ չափ ու սահման կը լինի թէ ոչ?

Բայց ով կը լսէր:

Այդ օրը ուսուցչական խմբի «պատասխանը» տարան յանձնեցին «ձառագայթի» խմբագրութեանը, որը խոստացաւ զետեղել նորան լրագրի առաջիկայ համարներից մէկում:

VI

Երբ Ոսկերչեանի ծանօթներից մի քանիսը խմացան, որ նա վճռել է թողնել ուսումը, սխեցին նորան զանազան խորհուրդներ

տալ: Մէկը ցանկութիւն էր յայտնում, որ նա զոնէ զիմնազիւնը աւարտի և ապա միայն ձեռնամուխ լինի որ և է գործի: Միւսը յորդորում էր նորան ետ կենալ արտիստ դառնալու զիտաւորութիւնից, համարելով այդ միտքը անմտութիւն, քանի որ հայ դերասանի վիճակը խախտու է և անապահով: Մի ուրիշը ջանք էր գործ դնում համոզել, որ նա գնայ Մոսկւայ կամ Պետերբուրգ և մտնի մի որ և է դրամատիկական ուսումնարան:

Այս բոլորը լսում էր Ոսկերչեանը և զլուխը շարժելով բացականչում.

—Ա՛խ, բարեկամներիս խորհուրդներից իմ զլուխը պտույտ է գալիս! Նա այդ ասում էր, ինչպէս մի մարդ, որ գերազանց կերպով կշռադատել է իւր անելիքը:

Վերջին անգամ տեսնելուց մի երկու օր անցել էր, և Ջառիկեանը նորից եկաւ Արտաշէսի մօտ՝ սորա ապագայի մասին յատուկ խորհրդածելու նպատակով: Բայց արդէն ուշ էր: Ոսկերչեանը յայտնեց, որ նա ետ է վերցրել իւր ծննդականը և ծաղկի վկայականը, որ իւր անուն ազգանունը ջնջւած է V-II-դ դասատան ցուցակից:

—Ինչ ես ասում, Արտաշէս? Արդէն վերցրել ես թղթերդ? Հարցրեց Գարեգինը զարմանքով և յանկարծակի վեր ցատկելով նստած տեղիցը:

—Ա՛յ, եթէ չես հաւատում, աչքովդ տես,—ասաց Ոսկերչեանը և, բերելով վկայականները, ցոյց տւեց նորան:

Ջառիկեանը ապշած հայեացքով մի քանի անգամ ոտից ց'զլուխ չափեց իւր բարեկամին, անբաւականութեամբ զլուխը շարժեց և հազիւ զսպած վրդովմունքով արտասանեց.

—Արտաշէս, դու խելագարւել ես!

Բայց Արտաշէսը ուրախ էր և ինքնագոհ ժպիտով նայում էր Գարեգինի երեսին, որի վրայ այդ միջոցին լրջութեան դրոշմ էր երևում:

—Սիրելիս,—խօսեց նա,—արդէն բանը բանից անցել է: Ես այրել եմ նաւը իմ ետեւից, և էլ անկարելի է վերադառնալ: Հաշտւելիք իմ մոքի հետ, Գարեգին: Նստի՛ր, խնդրում եմ, և լսի՛ր ինձ: Ես քեզ կը պատմեմ, թէ ինչ պէտք է անեմ այսուհետև:

Ջառիկեանը նստեց և, հոգոց հանելով, ասաց.

—Պատմի՛ր, տեսնենք, ինչ ես պատմում

—Դու գիտես, Գարեգին, որ Ադամեանը շուտով պիտի տայ իւր վերջին ներկայացումը և յետոյ ուղևորւի Ռուսաստան զանազան քաղաքներում ներկայացումներ տալու?

—Լաւ, յետոյ?

—Ես էլ պիտի գնամ նորա հետ:

—Բայց նա համաձայն է քեզ վերցնել իւր հետ?

—Ինչու պէտք է չհամաձայնւի?

—Դու իրան տեսել ես?

—Երէկ ես նորա մօտ էի: Ճիշտ է, այդ մասին ես չկարողացայ նորա հետ առանձին խօսել, որովհետև նորա մօտ շատ մարդիկ կային: Բայց ինձ թւում է, որ նա ուրախ կը լինի մինչև անգամ այդ բանի համար:

—Այդ հարց է: Իսկ ես, ընդհակառակը, կարծում եմ, որ նա քեզ չի առնիլ իւր հետ: Եւ ահա ինչու: Եթէ նա ընկերակցի կարիք զգայ, յամենայն դէպս չի ցանկանալ մի անպորձ երիտասարդի վերցնել իւր հետ, այլ եղած ոյժերից լաւագոյնին կ'ընտրէ:

—Տեսնենք: Ես յոյս ունիմ: Այս օրերս նորան դարձեալ պիտի տեսնեմ: Ես խնդրել եմ, որ նա կարգաց իմ պիեսը...

—Որը?

—Վերջինը, «Ընտանիքի բաղդը»...

—Լաւ, լաւ, յետոյ?

—Նա պիտի կարգաց և կարծիք յայտնէ: Նորա կարծիքը ինձ շատ հետաքրքրում է: Երևակայիր. յոնկարծ բանից դուրս գայ, որ Ադամեանը հաւանել է իմ դրաման, և մի գեղեցիկ օր հասարակութիւնը կարդում է ափիշաների վրայ. «Հայոց դերասանական խումբը մասնակցութեամբ պ. Ադամեանի առաջին անգամ կը ներկայացնէ «Ընտանիքի բաղդը», դրամա հինգ պորժողութեամբ, հեղինակութիւն Արտաշէս Ոսկերչեանի: Յհ, այն ժամանակ... Սպասիր, սպասիր, Գարեգին:

—Այո, սպասենք, տեսնենք,—խօսեց Զառիկեանը քիչ մօտ ծելուց յետոյ: Ես տեսնում եմ, որ դու կատակ չես անում. վճիռդ վճիռ է: Յաջողութիւն եմ ցանկանում, Արտաշէս: Երանի մինչև

կեանքիդ վերջը երբէք չընկճես և մնաս հաստատակամ այնպէս, ինչպէս այժմ քեզ ցոյց տւիր! ց'տեսութիւն:

Մի քանի օրից յետոյ Ոսկերչեանին յաջողեց այն այցելութիւնը, որին նա վաղուց է փափագում էր: Նա շատ ուրախացաւ, երբ տեսաւ, որ արտիստը միայնակ է: Աղամեանը հագած էր կապտադոյն ժակետկա: Նա նստած էր աթոռի վրայ և փոքրիկ վրձինով իւր նոր պատրաստած նկարն էր ուղղում:

—Ներեցէք, պարոն Աղամեան, ես ձեզ, կարծեմ, խանգարեցի, —ասաց Ոսկերչեանը՝ բանալով սենեկի դուռը և շեմքի վրայ կանգնելով:

—Խնդրեմ, խնդրեմ, ներս եկէք, —պատասխանեց նկարիչը, վայրկենական հայեացք ձգելով այցելուի վրայ: Ինչու կանգնած էք? Նստեցէք, խնդրեմ: Ես այս բոլէիս գործս կը վերջացնեմ, այս բոլէիս:

Ոսկերչեանը նստեց Աղամեանից ոչ այնքան հեռու և սկսեց դիտել նկարը և հետեւել վրձինի շարժումներին: Արտիստը աշխատում էր լուրի: Մերթ դուռն էր մօտեցնում իւզանկարին և զգուշաբար ուղղում նորա վրայ մի որ և է բան, մերթ աթոռի թիկունքին յենելով ուսերը, նայում էր ակնապիշ, և այդ բոլէներին աչքերի կոպերը իրար մօտենալով զողոզողում էին և կրկին լայն բացում:

—Առայժմ այսքան, —խօսեց վերջապէս նկարիչը, բաւականութեան շարժում անելով և վերկենալով տեղիցը: Քիչ էլ սպասեցէք, ես իսկոյն կը գամ:

Այդ ասելով՝ նա շփեց ձեռքերը և մտաւ իւր ննջարանը, որը բաժանւած էր ընդունարանից փայտեայ շագանակագոյն պատնէշով, ու սկսեց այնտեղ լւացւել:

Ոսկերչեանը երկու քայլ առաջ գնաց և սկսեց մօտիկից նայել պատկերին: Դա մի փոքրիկ իւզանկար էր և ներկայացնում էր բազմանիստ բաժակ, գդալը միջին և մինչև կէսը մոյգ թէյ լցրած: Գողտրիկ բան էր, աչքի ախորժելի: «Ահա ինչ է նշանակում հարուստ ընդունակութիւններ ունենալ, անցաւ Ոսկերչեանի մտքով. «հանճարաւոր դերասան և շնորհալի նկարիչ... բայց ինչ եմ ասում՝ նա բանաստեղծ էլ է»!

Եւ ապա, երբ նա երեսը դարձրեց դէպի հակառակ կողմը, նորա հայեացքը կանգ առաւ պատից կախած երկու դափնեայ պսակների վրայ, որ ստացել էր արտիստը իւր վերջնթեր ներկայացմանը. նոքա դեռ թարմ էին և երկար ժամանակ թարմ մնալու յոյսեր էին տալիս:

Իրան Ադամեանի հետ համեմատելու միտքը ինքն իրան ծագեց Ոսկերչեանի ղլխումը: Բայց ինչ համեմատութիւն!... Նա ինքն էլ չիմացաւ թէ ինչու յանկարծ տխրեց, բայց սաստիկ տխրեց: Մեկները մեքենաբար կռացան, նա ընկաւ բազկաթուռի վրայ. արմունկը կրթնեց կրոր սեղանի եզրին, գլուխը հանգստացաւ ձեռքի ափի վրայ, և մատները կորան զեղեցիկ սև դանդուրների մէջ:

Արտիստը երևաց վերջապէս: Սիրալիր ժպտով կրկին բարեկեց երիտասարդ հիւրին, սեղմեց ձեռքը և, ներողութիւն խնդրելով սպասել տալուն համար, նստեց նորա կողքին բազմոցի վրայ:

—Ձեր այս նկարը ինչ սքանչելի է, պարոն Ադամեան,—խօսեց հիւրը: Մանաւանդ թէյը որքան բնական է!

—Իսկ բաժակը? մանկան պարզութեամբ հարցրեց արտիստը:

—Բաժակն էլ շատ սիրուն է:

—Գիտէք, պարոն Ոսկերչեան, այնքան էլ դիւրին բան չկարծէք բաժակին իսկական գոյն տալը: Ապակին օդի գոյն ունի, իսկ ներկերով օդի գոյն պատրաստելը բաւական դժւար է: Այժմ, եթէ կ'ուզէք, ես ձեզ ցոյց տամ իմ մի ուրիշ իւղանկարս, տեսնեմ այն էլ կը հաւանէք:

—Ինդրում եմ:

Մի խճեայ մոխրաման, վրան՝ պապիրոս, պապիրոսի ծալրին մոխիր, մոխրի տակից երևում է մարող կրակը. ծուխն էլ իւր կարգով—ահա այն մանրանկարի բովանդակութիւնը, որ ցոյց տուց Ադամեանը հիւրին: Վերջինս յայտնեց իւր հիացքը:

—Այդ էլ սիրուն է,—ասաց նկարիչը. հա, ես էլ հաւանում եմ: Բայց մենք ինչ նկարիչներ ենք? նկարը պէտք է այնքան բնական լինի, որ մենք խաբւենք, շփոթենք իսկականին հետ և էլ չասենք թէ ճման է բնականին, այլ որ ասա ինքը բնութիւնն է: Զևեկիսը մի ողիւղ նկարեց, և թռչունները խաբւեցին, որովհետեւ, իսկական խաղող կարծելով, եկան պտուղները կտցահարելու: Ահա

ինչպէս պիտի լինի նկարը: Գեղարւեստը որ կայ, երկրորդ բնութիւնն է: Տարբերութիւնը այն է միայն, որ բնութիւնը Աստծոյ ստեղծագործութիւնն է, իսկ գեղարւեստը՝ մարդու ստեղծագործութիւնը: առաջինի մէջ արտափայլում է երկնային հանճարը, իսկ երկրորդի մէջ՝ մարդկային հանճարը:

Ինչ արտիստ է այն զերասանը, որը չգիտէ իլլիւզիոն, պատրանք առաջ բերել: Նոյնպէս և բանաստեղծութիւնը. եթէ նա անգոր է յափշտակելու մեր հոգին մինչ այն աստիճան, որ մենք ամեն ինչ մոռանանք և մի վայրկեան ապրենք նորա ըործած տպաւորութեամբ, էլ ինչ բանաստեղծութիւն է այն բանաստեղծութիւնը...

Նա այդ բոլորէն ողևորած էր: Աչքերը լայն բացւում էին, և բիբերը արագ շարժւում սպիտակուցի հետ: Եւ լայնաչիւր նոր միտք, նոր զգացմունք ցոլանում էր նորա դէմքի, ձաչնի և ձևերի վրայ: Խօսքերը թափւում էին կարկուտի պէս: Գալիս էր բոլոր, որ կարծես ուրիշի ներկայութիւնը չէր զգում և մենախօսում էր: Նա շարունակ օդի մէջն էր նայում, երբեք միայն վառվռուն հայեացքը սահում էր Ոսկերչեանի դէմքի վրայով:

Ոսկերչեանը ձաչն ծպտուն չէր հանում: Այդ միջոցին Աղամեանը նորա համար մի կենդանի նկար էր, որին հարկ էր միայն լսել, վրան նայել և հիանալ:

Կարճատև ընդհատումից յետո՝ արտիստը շարունակեց.

—Գանք այժմ ձեր թատերգութեան: Կարդացի, մինչև վերջ համբերութիւն ունեցայ կարդալու: Բայց այդ ինչ բան է, թոյլ տւէք ինձ ձեզ հարցնել, պարոն Ոսկերչեան? Եթէ ողբերգութիւն է, ապա ուր է գործողութիւնը? Եթէ վէպ է, ապա ինչու նման է ողբերգութեան? Ես ձեզ անկեղծ ասեմ, և խնդրեմ չնեղանաք. ձեր գրածը անյաջող բան է:

—Ես ինքս այդ զգում էի, պարոն Աղամեան: Բայց դա իմ առաջին...

—Այո, գիտեմ, ինչ կ'ուզէք ասել: Թոյլ է, շատ թոյլ է: Եւ ինչ շատ սիրում էք դուք բարոյական խրատներ կարդալ գործող, կամ, աւելի ճիշտ, խօսող անձանց բերնով: Բայց՝ դրամաները մոռալ չեն վերցնում: Մոռալը մեռցնում է ողբերգութիւնը: Այնտեղ բոլորը պիտի բնական լինի, կենդանի լինի, շարժուն լինի: Արդարեւ,

պիեսի մէջ կան տեսարաններ, որ իրականութիւն են յիշեցնում: Բայց գեղարւեստական տեսակէտից նայելով, ընդհանուր առմամբ գործողութիւնները և տեսիլները միմեանց հետ թքով կպցրած են. միմեանցից չեն բղխում, կան երեոյթներ, որ աւելորդ են և նպատակին չեն ծառայում: Ինչ որ իրական է, դուք կարծում էք, պէտք է անպատճառ մտցնել հեղինակութեան մէջ: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Այլ ամեն բան հարկաւոր է գեղարւեստօրէն մշակել, ընտրել կարևորագոյն դիտւածները, պատահականը դուրս վռնտել, այնուհետև բոլորը խելացի կերպով դասաւորել և հոգեբանական կապերով շղթայել իրար հետ այնպէս, որ միացած՝ սիրուն ամբողջութիւն կազմեն: Զգիտեմ, պարոն Ոսկերչեան, ես ձեզ կարողացայ հասկացնել իմ միտքը:

—Հասկացայ, պարոն Ադամեան, դուք ասում էք, որ անհրաժեշտ է կարևոր դէպքերի մի այնպիսի կոմբինացիա...

—Այո, այո, ճիշտ այդպէս. կոմբինէզոն: Այդ լաւ ասացիք: Այդպէս ինձ օգնեցէք: Դէպքերի խելացի կոմբինէզոն...

Ոսկերչեանը կամեցաւ խօսել, բայց խօսքը լեզւի ծայրին մնաց, որովհետև արտիստը, վայրկենական լռութիւնից յետոյ՝ խկոցն շարունակեց.

—Ներողութիւն: Արդարութիւնը չմոռանալու համար, ես ձեզ մի բան պէտք է ասեմ: Որքան էլ անյաջող լինի ձեր այս առաջին անարւեստ փորձը, այնուամենայնիւ նորա մէջ տաղանդի նշաններ ես նշմարում եմ: Դուք ապագայում կարող պիտի լինիք յօրինել բեմական գործեր: Աշխատեցէք. դուք դեռ շատ երիտասարդ էք: Բայց իմացէք, որ ձեր առաջին յաջողւած ողբերգութիւնը ես կը փայլեցնեմ բեմի վրայ:

Շուտով խօսակցութեան առարկան փոխւեց: Ոսկերչեանը յայտնեց թէ ինքը սիրում է թատրոնը և վճռել է իրան նւիրել բեմին, միայն ցանկանում է լսել նորա կարծիքը և հետեւել նորա խորհուրդներին: Այդ առիթով Ադամեանը գլխի խորհրդաւոր շարժումով ասաց.

—Բեմը փառքի ասպարէզ է այն մարդու համար, որին Ասուած ի բնէ օժտել է ընդունակութեամբ. բայց միևնոյն ժամանակ նա թշուառութիւնների և անկման ասպարէզ է այն անձանց հա-

մար, որոնք այստեղ սէր ունին, իսկ այնտեղից բան ստացած չեն։
Վերջին խօսքերը արտասանելիս՝ նա ձախ ձեռքը դրեց կրծքի վրայ, իսկ աջը պարզեց դէպի երկինք։

— Եթէ, — շարունակեց նա, — դուք ձեր մէջ զգում էք սէր և կարողութիւն, ելէ՛ք բեմ և այդ մասին մի հարցրէ՛ք ուրիշ Բայց դուք բեմ ելած էք երբ և իցէ՞

— Այո, սիրողների հետ։ Բայց կատարածս դերերը այնքան չնչին դերեր են եղած, որ...

— Այդ ոչինչ։ Գլխաւորը սէրն է, ճիշդը և աշխատանքը, մանաւանդ այս վերջինը։ Այդ շնորհալիք երբէք։ Եթէ դերասանը ինքը իւր վրայ երկար ժամանակ չաշխատեց, իմացէ՛ք, որ նորա տաղանդը կը խեղդւի սաղմի մէջ։

— Բայց բեմական ուսումը անհրաժեշտ է դերասանի համար?

— Բեմական ուսում? Հը՛: Ինչ ասել է բեմական ուսում? Մեր ուսումնարանը բեմն է և մեր առանձնասենեակը. մեր ուսուցիչը՝ մենք ինքներս և կենդանի օրինակները։ Դերասանը տանը պիտի կարդայ իւր դերը, մտածէ, ուսումնասիրէ։ Մի այսպիսի տրիւմֆի առջև նա պիտի ձևէ չափէ իւր շարժումները, դիտէ իւր հայեացքը, դիմագծերի փոփոխութիւնները նկատէ։ Եւ շիտակ այնպէս, ինչպէս մի կէս ժամ առաջ ես ուղղում էի իմ իւզանկարը, դերասանն էլ հայելու առջև կանգնած՝ պիտի ջանաց գեղեցիկ դարձնել իւր ձեւերը, եթէ տգեղ են, շտկել, եթէ խորտ ու բորտ են։ Ահաւասիկ մեր դպրոցը։ Ապա թէ ոչ, ինչ անէ բեմական ուսումը, եթէ մարդ ի բնէ անտի զուրկ է տաղանդից? Ասացէ՛ք, տեսեմ, Ադամեանը որտեղ է բեմական ուսում առել? Բայց Ադամեաններ շատ ունին հայերը?

Մեծ արտիստի այս միակողմանի, բայց օրիգինալ կարծիքը դերասանի ուսման մասին խիտ հաճոյ թւաց Ոսկերչեանին։

Յարմար վալրկեան ներկայացաւ երիտասարդի համար իւր այցելութեան բուն նպատակին դիմելու։ Առիթը բաց չթողեց նա և ասաց.

— Պարոն Ադամեան, ես լսել եմ, որ «Թէլլօն» ներկայացնելուց յետոյ՝ դուք մտադիր էք ուղևորւել Ռուսաստան և զանազան քաղաքներում ներկայացումներ սալ։ Ես խնդրում եմ, եթէ հնա-

րաւոր է, ինձ էլ վերցնէք ձեզ հետ: Աղամեանը ցաւելով յայտնեց, որ այդ խնդիրքը նա անկարող է կատարել, պատճառ բերելով մի կողմից՝ իւր նիւթական սղութիւնը, միւս կողմից՝ սկսնակի անփորձութիւնը: Այդ բանը ապագային յանձնելով, նա խորհուրդ տուեց Ոսկերչեանին վարժել՝ տեղական խմբի հետ ներկայացումներ տալով:

Երիտասարդ հիւրը կամեցաւ մի քանի առարկութիւններ անել նորա խօսքերի հակառակ, բայց արտիստը ընդհատեց նորան, ասելով.

— Չգիտեմ, գուցէ ես սխալուեմ եմ, բայց այս իմ կարծիքս է: Այդ երեք նախադասութիւնները մի այնպիսի շեշտով, այնպիսի հաստատամտութեամբ արտասանւեցին, որ ապագայ դերասանին մնաց միայն լռել և գլուխը տխուր խոնարհել:

Արտիստը նկատելի կերպով սկսել էր յորհածութիւն զգալ: Վերջումը նա սակաւ էր խօսում և այնքան էլ ուշադրութեամբ չէր լսում իւր հիւրին: Այնչայտնի էր, որ նա ձանձրացել է կամ որ և է պատճառով ցանկանում է մենակ լինել: Ոսկերչեանը ուշ հասկացաւ նորա անհանգստութեան պատճառը: Արտիստը սկսեց զանգատել իւր գլխացաւից: Երիտասարդը վեր կացաւ:

— Ինչու շտապում էք? հարցրեց հիւր նկալը, իւր քաղաքա-վարական պարտքը կատարելով:

— Ժամանակ է, — պատասխանեց Ոսկերչեանը ժպտալով:

— Ախ, գլուխս, անպիտան գլուխս ինչքան տանջում է ինձ!

Ոսկերչեանը գլխարկը ձեռքումը բռնած՝ սպասում էր, որ արտիստը ձեռքը հեռացնի ծակաւոր վրայից, որպէս զի ինքը «մնաք բարով» ասի և մեկնի: Աղամեանը խնդրեց հիւրին սպասել մի րոպէ ասելով.

— Ես կամենում եմ յիշատակի համար ձեզ ընծայել իմ լուսանկարս:

Նա առաւ իւր փոքրադիր պատկերներից մէկը և վրան մակագրեց. «Պ. Աղամեանից պ. Ոսկերչեանին»:

Ոսկերչեանը շնորհակալութեամբ ընդունեց այդ «թանկագին ընծան» և անմիջապէս դուրս եկաւ սենեկից:

Աղամեանի մօտ նա եկել էր ուրախ, բայց հեռանում էր դժգոհ և տրտում: Կարծես մէկը վիրաւորած լինէր նորա ինքնասիրութիւնը: Բայց ինչ էր այդ օտարոտի զգացման շարժառիթը — նա

այդ չկարողացաւ հասկանալ: Դորա պատճառը գուցէ այն էր մասամբ, որ նա երբեք իւր կեանքի մէջ այնքան խորը չէր զգացել իւր «պզտիկութիւնը», ինչպէս պոլսեցիք կ'ասէին, որքան նա այդ զգաց այսօր, մեծ արտիստի բնակարանում:

Ոսկերչեանը այդտեղից գնաց Զառիկեանների տունը և բոլորը պատմեց իւր բարեկամին:

— Ես քեզ չասացի, — նկատեց Գարեգինը, — չասացի, որ նա քեզ չի վերցնիլ իւր հետ?

— Ախտոս, ես մեծ յոյս ունէի!... Հիմա չգիտեմ, որն է լաւ. մոնել դերասանական խմբի մէջ թէ նորանից անկախ գործել:

Զառիկեանը ոչինչ չպատասխանեց:

— Դու ինչ խորհուրդ կը տաս, Գարեգին? Հարցրեց Արտաշէսը՝ իւր բարեկամի լռութեան վրայ զարմացած:

— Սիրելիս, — խօսեց Զառիկեանը, — ես տեսնում եմ, որ իմ խորհուրդները բանի տեղ չեն անցնում: Ինչիդ է պէտք իմ կարծիքը այդ մասին? Ես միայն այսքանը կ'ասեմ. այն ճանապարհը, որ դու ընտրել ես, շատ նեղ է և տատաակոտ: Դու արդէն ոտդ դրել ես այդ ճանապարհի վրայ: Յարգարի՛ր ուրեմն դու ինքդ քո շաւիղը:

— Հարկաւոր է լաւ մտածել, — ասաց Ոսկերչեանը և, գլխաւորէ առնելով, կամեցաւ մեկնել:

Դրան մօտ հանդիպեց օր. Աշխէնին: Սա յայտնեց, որ վաղը չէ, միւս օրը իւր տարեդարձն է, և խնդրեց նորան շնորհ բերել իրանց մօտ:

— Անպատճառ, — պատասխանեց Ոսկերչեանը շեշտով և սեղմելով օրիորդի ձեռքը, շտապեց իւր բնակարանը: Նա մեծ կարիք էր զգում առանձնանալու, իւր ցրած մտքերը ամփոփելու, և այդ ներքին պահանջը, ինչպէս մի խթան, կարծես աշտանակում էր նորան, և նա արագ քայլում էր՝ առանց դէս ու դէն նայելու:

VII

Օր. Աշխէնի տարեդարձի օրն էր: Զառիկեանները վճռել էին այս անգամ մեծ շուքով կատարել այդ տօնախմբութիւնը, որովհետեւ անցեալ տարի, մօր տկարութեան պատճառով, հանդէսը շատ անշուք անցաւ:

Տիկին Զատիկեանը վեր էր կացել առաւօտեան կանուխ և թեւերը կշտած՝ հաւաքում էր սենեակները, տունը-տեղը մաքրում կարգի բերում, և հասարակ տնային զգեստով օր. Աշխէնը օգնում էր իւր մօրը: Աշխատանքի մի մասը կատարւած էր արդէն նախընթաց երեկոյ. մշակը թափ տւել, փայտով ծեծել էր դորգերը և կոպերոնները. ծառան աւել էր բակը, սանդուխքները, իսկ դահլիճի պարկէտը այն սատիճան խտակած մոմած էր, որ նա փայլում էր նոր յղած սեղանի երեսի պէս: Առատաղից կախւած ջահի մոմակալների մէջ շրջանաձև տնկւած էին մոմեր. անկիւններում կըր սեղանների վրայ շքեղ ծաղկամանների մէջ դրւած էին վարդեայ փնջեր: Պատերի մօտ երկու տեղ թախտեր կային՝ ծածկւած պարսկական թանկագին զորգերով, և նոցա վրայ ճաշակով դարսւած էին թաւշեայ ալ մութաքաներ և ոսկեթել բարձեր—օր. Աշխէնի ձեռագործը:

Առաւօտեան շնորհաւորութիւնները տւեցին մինչև ճաշը: Եկողներին հիւրասիրում էին զաֆէով և զանազան խմորեղէններով, և իւրաքանչիւրին առանձնապէս խնդրում էին շնորհ բերել երեկոյեան ժամանակ անցկացնելու: Օրիորդ Աշխէնը բաւական ընծաներ ստացաւ այցօր: Օր. Վարթումեանը տւեց նորան իւր լուսանկարը՝ սիրուն քանդակներով զարդարւած սպիտակ մարմարեայ շրջանակի մէջ: Հասկանալի է, թէ որպիսի հաճոյք պատճառեց այդ լուսանկարը յատկապէս Գարեգինին, որը օգուտ էր քաղում ամեն մի առիթից քրոջ սենեակը մտնելու և նորա գրասեղանի վրայ դրած պատկերի վրայ զմայլելու: Հօրեղբայրը ընծայեց մի փառահնչ ալբոմ՝ կազմը բոցազոյն պլիւշ և պլիւշի վրայ ոսկեձոյլ օռելիէք: Աւումեանից ստացաւ Նադսոնի «Բանաստեղծութիւնների» փառակազմ հատորը, մի դիրք, որ այն ժամանակ շատ էր կարգացում, նորութիւն լինելով ընթերցողների համար: Ոսկերչեանը մատուցեց մի գեղեցիկ ծաղկափունջ՝ մէջը իւր բանաստեղծական ձեւերը: Բացի այդ բոլորից, օրիորդը ստացաւ նաև մի քանի այլ երկրորդական ընծաներ:

Երեկոյեան, մութը ընկնելուն պէս, Զատիկեանների տունը լուսաւորւեց: Փողոցի անցորդները անշուշտ պիտի մտածէին, որ այնտեղ հարսանիք կամ մի ուրիշ հանդէս կայ: Երկայն պատշգամբում երկու տեղ վառւում էին լապտերներ՝ լացւած մաքրւած ապակի:

ներով, և լուսոյ ճառագայթները խաղում էին բակի մէջ բարձրացած երկու ակացիաների կատարների վրայ:

Դահլիճի լուսաւորութիւնը այնքան առատ էր, որ հեռւից նշմարւում էին այնտեղ ջահը, կանդելաբրը և երթեկող անձանց դէմքերը պրոֆիլ և en face.

Ձէր անցնում մի երկու-երեք րոպէ, որ դրան զանգը չքաշէին: Օրիորդ Աշխէնը՝ իւր կրեմի գոյն շրջազգեստը Փրֆոսացնելով՝ վազէվազ շտապում էր դէպի սանդուխների գլուխը՝ հիւրերին դիմաւորելու: Քչքչում, ընկերուհիների հետ համբուրւում էր, սիրալիր ողջունով թոթաւում էր պարոնների ձեռքը և առաջնորդում դէպի դահլիճը: Ներս գնալով, նա ծանօթացնում էր անձանթներին և իւրաքանչիւրի բնաւորութեան համեմատ մի խօսք էր գտնում ասելու: Նստելով մէկի կողքին՝ առողջութիւնիցն էր տեղեկանում, միւսին՝ օրւայ նորութիւններիցն էր հարցնում. երբ նկատում էր, որ հիւրերից մէկնումէլը կղզիացած է և լուռ է, նա սթափեցնում էր նորան, ժպտում երեսին, բարձր ձայնով հետը խօսում, բայց հէնց որ զանգը հնչում էր, նա հապճեպ գուրս էր վազում սենեկից:

Օր. Աշխէնի առանց այն էլ կենդանի բնաւորութիւնը այժմ, ուրախ տրամադրութեան շնորհիւ, մի արտասովոր զրաւչութիւն ու վայլ էր ստացել:

Մարդկանց հետ վարւելու շնորքը, որ ամեն մարդ չունի, օրիորդի մէջ մի տաղանդ էր: Հիւրերի թիւը երեսունից անց էր, բայց նա այդ տարբեր հասակների, սեւերի և բնաւորութեանց խառնակութեան մէջ իրան բնաւ չէր կորցնում: Նա գիտէր դեղեցնել թախտի վրայ ծալապատիկ նստած պառաւին, ոչ պակաս սրախօսութեամբ պատասխանել սրամիտ պարոնի նկատողութեանը և ընկերուհու վրայ կատախով մատը թափ տալ, ասելով. «էյ, օրիորդ, նայիր, ինձ հօ ճանաչում ես?» Եւ այսպէս ամեն մէկի հետ:

Համարեա բոլոր հիւրերը ժողովւած են, և դահլիճը ծալրէ-իծալր լիքն է: Բռնւած էր նոյն իսկ ընդունարանը, որը դահլիճին կից մի ամփոփ սենեակ էր:

Այնտեղ դիւանի բարձին կռնակը չենած՝ թեք էր ընկել Աղա-տեանը մի այնպիսի հայարտութեամբ, որ կարծես Ռոտշիլդի գանձերի տէրը նա լինէր: Նորա մի կողմում բազկաթոռի մէջ ընկղմ-

ւած էր Սեռումեանը, իսկ սորա դիմաց նստած էր Զառիկեանը։ Այնտեղ էին և մի քանիսը վերջինիս պաշտօնակիցներին։

Խօսք ու զրոյց էր բացւել երիտասարդների մէջ։

Զառիկեանի հարցին՝ ստոյգ է այն լուրը, իբր թէ «Ճառագայթի» խմբագիրը գնում է Եւրոպա, Սեռումեանը պատասխանեց զլիսի բացասական շարժումով։

—Ո՛չ, եթէ այդպիսի մտադրութիւն ունենար, նա մեզ յայտնած կը լինէր այդ մասին, — ասաց և նայեց իր բարեկամ Աղատեանի երեսին։

Աղատեանի դէմքին խաղաց խորամանկ ժպիտ, որի խորհուրդը ոչ ոք չհասկացաւ։

—Զարմանալի է, — մէջ մտաւ «Ճառագայթի» աշխատակիցը, — ինչպէս արագ տարածւում են լուրերը. իրաւ է, մի այդպիսի բան նա ինձ ասաց երէկ։

—Երէկ երեկոյեան ես խմբագրատանն էի, ապա այդ մասին ինձ ոչինչ չյայտնեցիք, այդ խօսքերը արտասանելիս՝ Սեռումեանը հետախոյզ աչքով գննում էր Աղատեանի դէմքը։

—Զգիտեմ, այդ ինչպէս է պատահել, որ զուէս չես իմացել, — ասաց Աղատեանը, աշխատելով զսպել իւր նախկին խորհրդաւոր ժպիտը։

Սեռումեանի սիրտը կասկած ընկաւ, և նա մտածեց. «ուրեմն «Ճառագայթի» խմբագրատան մէջ ինձնից բաներ են թաղցնում?»

Աղատեանը կարծես հասկացաւ թէ ինչ կատարւեց բարեկամի զլխումը, ուստի շտապեց խօսակցութեան առարկան փոխել և, դիմելով Զառիկեանին և նորա պաշտօնակիցներին, խօսեց։

—Զեր պատասխանը՝ հօ արդէն սուլել է։ Հիմա պատրաստ կացէք. «Ժամանակի» ճանկերից էլ չէք պրծնիլ։

—Ինչ ուզում են, թող գրեն, — անտարբերութեամբ նկատեց Զառիկեանը։

Մի քանիսը ներկայ եղողներից կարծիք յայտնեցին, թէ հակաճառելու բան չեն գտնիլ, քանի որ իրանց «պատասխանը» հիմնւած է ֆակտերի վրայ։

—Այդ նշանակութիւն չունի զոցա համար, — վրայ բերեց Աղատեանը, — բան չգտնեն, կը հնարեն, ինչպէս միշտ անում են։

—Աւելի վատ թերթի համար,—սկսեց Սևումեանը, ընդհանրացնելով խօսքը: Երբ բանակաւորների հիմքը ոչ թէ ֆակտն է, այլ լոկ զրպարտութիւնը, սուտը, ենթադրութիւնը, երբ բանակաւորները, բացի հայհոյանքից և փուճ ֆրագներէից, ուրիշ բան չեն պարունակում իրանց մէջ, այն ժամանակ վնաս չպատկուի թերթին. անկումը անխուսափելի է!

—Ասում են, «Ժամանակի» բաժանորդագրութիւնը այս տարի սաստիկ նւազել է,—յայտնեց Զառիկեանի պաշտօնակիցներից մէկը, շեշտելով «սաստիկ» բառը:

—Գա բնական հետեւանք է այդ թերթի վատ ուղղութեան,—բացատրեց Ազատեանը:

—Ինձ թւում է,—մէջ մտաւ Զառիկեանը,—որ թերթի յաջողութիւնը կամ անկումը պայմանաւորւում է ոչ միայն այս կամ այն ուղղութեամբ, այլ և մի քանի ուրիշ հանգամանքներով: Եթէ թերթի ներկայացուցիչները իրանց գործը վարեն տաղանդով և բազմաթիւ փաստերով ապացուցեն իրանց շիտակութիւնը, ես կարծում եմ, մի այդպիսի թերթ երկար ժամանակ կարող է կանգուն մնալ, բոլորովին անկախ այս կամ այն ուղղութիւնից:

Այդ նիւթի մասին դարձեալ մտքերի փոխանակութիւն եղաւ: Յետոյ Սևումեանը անցաւ իւր «մատենադարանի» խնդրին և սկսեց տրտունջ յայտնել, որ գործը խիստ դանդաղ է առաջ ընթանում, որովհետեւ, բացի Ազատեանից և Զառիկեանից, ուրիշ ոչ ոք իրան չէ կամենում օգնել, նպաստ տւողներ քիչ կան, մի տնային հարուստ գրադարան գնելու համար ստիպւած է պարտք վերցնել և այլն:

Սևումեանը դեռ չէր աւարտած իւր խօսքը, յանկարծ ներս եկաւ օր. Աշխէնը և յանդիմանութեամբ դիմելով եղբօրը, ասաց.

—Գարեգին, այդ անքաղաքավարութիւն է քո կողմից: Մայրիկը խոհանոցումն է: Այնքան հիւրերին զբաղեցնողը միայն ես եմ: Ոչ ֆանտն է յաջողւում, ոչ պարերը: Խնդրում եմ, պարոններ, եկէք դահլիճ:

Պարոնները ներողութիւն խնդրեցին և, անցնելով դահլիճը, խռնակեցին բազմութեան հետ:

Օրիորդը մօտեցաւ իւր մօրեղբօրը և խնդրեց նւազել:

—Ուրախութեամբ, — պատասխանեց քեռին և իսկոյն նստեց դաշնամուրի առաջ:

Դա հասակն առած և ազդու կերպարանքով մի տղամարդ էր. հաղնւած ճաշակով. Եւրոպա պտտած, վարժ Ֆրանսերէնին. հայերէն գեղեցիկ խօսում էր. կեանքի աշունը անցրած և դարձեալ աճողի, բայց միշտ ուրախ, միշտ զւարթ և աշխոյժ:

Յարմարեցրեց իւր տեղը, սրբեց իւր մնալի ձեռքերի քրտինքը և ճակատը և թաշկինակը ետեւի գրպանը խոթելուց յետոյ՝ թխլիկ մատները վաղեցրեց մի անգամ ստեղանունքի վրայով. դաշլիճը ղղրղաց. դաշնակահարը ետ ընկաւ աթոռի թիկունքի վրայ:

Մասնաւոր խօսակցութիւնները ընդհատեցին: Ամեն մէկը իւր տեղը բռնեց:

Վայրկենական դադար, և դաշնամուրը նորից հնչեց: Պարողները վեր կացան: Սեռւմեանը դիտէր լաւ վալս պարելու նա մօտեցաւ օր. Աշխէնին, որը երիտասարդի թևի տակ մտաւ իսկոյն, և երկոքեան թեւ առածի պէս սահեցին միասին: Նոցա հետեց պարողների երկրորդ զոյգը, յետոյ երրորդը, չորրորդը: Զառիկեանը ուզում էր մօտենալ օր. Վարթումեանին, բայց մինչև նա իւր տեղիցը ծանր ու բարակ շարժւէր, մի աւելի յաջողակը նորան կանխեց և օրիորդի սեղմ իրանը իւր կրծքին հպած՝ թռան անցան նորա մօտից, և շրջազգեստի երկայն ծալքերը քսեցին նորա ոտներին: «Աշխարհը ճարպիկ մարդկանցն է», մտածեց Քարեգինը և անյապաղ մի այլ պարընկերուհի վերցրեց, իւր դպրոցի վարժուհիներից մէկին:

Օր. Աշխէնը պարելուց դադրած՝ հանգստանում էր: Նորա մօտ երկտակ կանգնած էր Սեռւմեանը: Այդ րոպէին երեաց Ոսկերչեանը:

—Օհօ, եկար վերջապէս՝ բացականչեց օր. Աշխէնը: Հէնց քո մասին էինք խօսում պ. Սեռւմեանի հետ: Այս որտեղ ես? Ինչու այսքան ուշացար? Սպասում էիր մարդ ուղարկենք ետեւիցդ?

Ոսկերչեանը բացատրեց իւր ուշանալու պատճառը: Նորա խօսքերից երեաց, որ նա գնացած է եղել իւր հիւանդ ընկերոջ տեսնելու և աչնտեղ նորա մօտ է ուշացել:

—Խեղճը, — շարունակեց նա, — ընկած է անտէր, անխնամ մի փոքրիկ և մոլթ սենեկի մէջ: Նայող չկայ: Ինքը զաւառացի է և

իմ նախկին դասընկերներից: Սաստիկ տաքութիւն ունէր: Գնացի բժիշկ բերի, դեղ գրեց: Յետոյ դեղատուն վազեցի...

—Ուրեմն դու բարի գործ ես կատարել, և քեզ ներում եմ ուշանալուդ համար,—ասաց օր. Աշխէնը:

—Է՛հ, սա ինչ բարի գործ է. մի հասարակ ընկերական պարտք, ուրիշ ոչինչ,—պատասխանեց Ոսկերչեանը:

—Ձեա կամենում պարել?

—Ինչպէս չէ, պարելու մեծ ախորժակով եմ եկել այստեղ:

Եւ Ոսկերչեանը օր. Աշխէնի հետ սլացան իսկոյն: Մի երկու շրջան անելուց յետ՝ նա պարընկերուհուն իւր տեղը նստեցրեց, շնորհակալութիւն առաւ և վազեց դէպի օր. Վարթումեանը: Բայց սա յոգնած էր. շնչառութիւնից հասուն կուրծքը բարձրանում ցածանում էր: Այնուամենայնիւ նա չմերժեց Ոսկերչեանին, որի սեւ աչքերը աւելի ևս սեւացած էին այդ բոպէին, և փայլը կրկնապատկւել էր: Երբ նա մի փոքր կորացած՝ սպասողական դիրքի մէջ նայում էր օրիորդի դէմքին, նորա աչքերը կարծես շողեր էին արձակում, և այդ շողերը շեշտակի ցոլացել էին օրիորդի ծովի նման կապոյտ աչքերի մակերևոյթի վրայ: Նոքա սկսեցին պարել: Ոսկերչեանը թռցնում էր օրիորդին այնպէս թեթև և արագ, որ կօշիկների ծայրերը հազիւ դիպչում էին յատակին: Մինչդեռ երիտասարդը գոհ ժպիտով իւր աչքը չէր կարողանում հեռացնել պարընկերուհու երեսից, սորա հայեացքը համեստաբար գետնին էր խոնարհած, իսկ երբ նա օրիորդին իւր տեղը տարաւ և խորին շնորհակալութիւն յայտնեց,

—Շատ ուրախ եմ,—պատասխանեց օրիորդը,—որ ես ձեզ հետ պարեցի:

Այդ խօսքերը լոկ քաղաքավարական խօսքեր չէին, այլ այդ բոպէին կրած զգացման անկեղծ արտայայտութիւն, որովհետև օր. Վարթումեանը իրօք հիացած էր Ոսկերչեանի հմուտութեան վրայ. այն աստիճան գրացիող և սահուն դիտէր նա պարել:

Արտաշէսը պտուեց բոլոր օրիորդների հետ, չարհամարհեց նոյն իսկ մի տգեղի, որի մօտից յաճախ անցնում էին երիտասարդները՝ առանց ուշադրութիւն դարձնելու վրան հէնց միմիայն այն պատճառով, որ նա տղեղ էր:

Փոքրիկ ընդհատումից յետոյ՝ նորից սկսեցին պարերը: Այս անգամ նւագում էր օր. Վարթումեանը: Ոսկերչեանը դարձեալ փայլում էր իւր արեւստի հմտութեամբ: Օր. Աշխէնը ոչոքից ետ չէր մնում: Նա մի երկու շրջան անցաւ նաև իւր մօրեղբօր հետ: Նա տաքացած էր, ինչպէս և ամենքը, և թուխ երեսի աչտերը կարմրելին էին տալիս: Սևումեանը նորա մօտից չէր հեռանում: Երբ նա պարում էր, հովհարն էր պահում. երբ օրիորդի ձեռքից ընկնում էր թաշկինակը, թաշկինակն էր բարձրացնում յատակից, մի խօսքով, մատուցանում էր օր. Աշխէնին զանազան ծառայութիւններ:

Երբ պարերը վերջացան, և օր. Վարթումեանը վեր կացաւ իւր տեղից, իսկոյն աչքին դիպաւ. Զառիկեանը: Դաշնամուրի կողքին կանգնած՝ բոլոր ժամանակ զմայլւած հետևում էր նա օրիորդի երկայն սպիտակ մատներին, որոնք արագութեամբ ետ ու առաջ էին վազվզում ստեղանունքի վրայ: Երկուսն էլ ժպտացին:

—Դուք չէք պարում, պ. Զառիկեան? Հարցրեց օրիորդը, ուղղելով դաստակի վրայ բրասլէտը:

—Ո՛չ, օրիորդ,—պատասխանեց Գարեգինը,—ես լսում էի ձեր նւագը: Երաժշտութիւնը ինձ աւելի մեծ հաճոյք է պատճառում, քան թէ պարը:

Օրիորդը յայտնեց, որ ինքն էլ սիրահար է երաժշտութեան: Նոցա մօտ եկաւ Զառիկեանի մօրեղբայրը: Եւ որովհետև երեքն էլ երկրպագու էին երաժշտութեան, ուստի չընդհատեց խօսքը սկսւած նիւթի մասին: Օր. Վարթումեանը հրապուրւած խօսում էր իւր սիրած կոմպոզիտորներից և օպերաներից: Գարեգինի յայտնած կարծիքներից երևում էր, որ նա մի պրոֆան չէ գեղարւեստի այդ ճիւղի մէջ: Իսկ նորա մօրեղբայրը իւր երկայն փառաւոր մօրուքը շփելով պատմում էր Եւրոպայում լսած երգիչներից և երգչուհիներից:

Օր. Աշխէնը, նկատելով, որ Ազատեանը աչքի չի ընկնում հիւրերի մէջ, հետաքրքրւեց իմանալ, որտեղ է նա, և գնաց ընդունարանը: Նա այնտեղ նստած էր մի ուսուցչի հետ, և միասին ծխում խօսում էին:

—Ինչու դուք չէիք պարում, պ. Ազատեան? Հարցրեց օրիորդ Աշխէնը:

—Ես պարել չգիտեմ, օրիորդ,—պատասխանեց նա,—և, իսկնասած, չեմ էլ սիրում պարել:

Օր. Աշխէնին թւաց թէ Ազատեանը զժգոհ է, բայց ինչ բանից, չկարողացաւ հասկանալ:

—Շուտով սկսելու ենք Ֆանտեր խաղալ, զուք էլ կը մասնակցէք, պ. Ազատեան?

—Ինչու չէ, ուրախութեամբ:

Օր. Աշխէնը գնաց Ոսկերչեանին փնտռելու:

Նա չսխալեց Ազատեանի վերաբերմամբ: Սա անբաւական էր, որ իւր ներկայութիւնը կամ բացակայութիւնը օչոք չէր նկատում: Ինչ բան է պարը? Բայց Ոսկերչեանի պարելու վրայ ամենքը հիացած են: Նա այդ երեկոյի հերոսն է, օրիորդների ուշադրութեան առարկան: Մինչդեռ ինքը, «Ճառագայթի» գլխաւոր աշխատակիցներից մէկը, որի անունը հասել է մինչև հայաբնակ ամենատեղեր, կամ անկիւնները, ինքը աննկատելի է այդքան բազմութեան մէջ: Թող նա վէճի բռնելի մէկի հետ, թող լսեն նորա պերճախօսութիւնը, տեսնենք այն ժամանակ, թէ որ անկիւնը կը մտնէ Ոսկերչեանը...

Շուտով սկսեցին Ֆանտերը Բայց «նամակներ» խաղալու ժամանակ տեղի ունեցաւ մի մեծ անախորժութիւն: Ոսկերչեանը Ազատեանի հետ ընդհարեցին: Եւ ահա այդ ինչպէս պատահեց:

Խաղացողները միմեանց նամակներ էին զրում անստորագիր և առանց ստորագրելու պատասխանում ստացած գրութիւններին: Ոսկերչեանը իւր հասցէով մի նամակ ստացաւ: Վարդալուց յետոյ յանկարծ նա վեր կացաւ տեղիցը սաստիկ զայրացած և նամակը բռնեցքի մէջ ճմլելով, գոչեց.

—Ով ինձ գրել է այս նամակը, նա անագնիւ է, որովհետեւ, որովհետեւ!...

—Ինչ կայ? Ինչ է գրած? Ինչ է պատահել?... լսեցին ձայներ այս ու այն կողմից:

—Մի մարդ, որ խաղի ժամանակ իրան թոյլ է տալիս մի այսպիսի կողիտ վիրաւորանք!... լսեցէք խնդրեմ: Պարոն տանցմէստէր! Ես լսել եմ, որ զուք թողել էք բանաստեղծութիւնը և այժմ կ'ամենում էք ղերասան դառնալ: Իսէր Աստուծոյ, Գամառ-Քաթի-

պաշի հացը կտրեցիք, հիմա էլ Աղամեանի հացը չկտրէք! Սա ինչ բան է? Սա ծաղր չէ? Ինչ իրաւունքով ինձ ծաղրում է սորա հեղինակը? Նա երբ է տեսել իմ խաղը? Նրբ է կարդացել իմ բանաստեղծութիւնը?...

—Պարոն Ոսկերչեան, դա կատակ է,—կամեցաւ հանգստացնել Սեւումեանը։

—Ո՛չ, սա կատակ չէ, այլ ես գիտեմ թէ սա ինչ բան է! Ես գիտեմ, ինչպիսի աղբիւրից է բղխել այս կեղտոտ!...

—Դուք ձեզ մոռանում էք, պարոն! խօսեց Աղատեանը, տեղից բարձրանալով։—Ես եմ գրել այդ նամակը!...

—Ա, ես այդ գիտէի! Լաւ է, որ ինքներդ խոստովանեցիք!... Կարելի է երեակայել, թէ ինչ մեծ աղմուկ պիտի ծագէր այս պէպքի պատճառով, եթէ չմիջամտէին օր. Աշխէնը, Գարեգինը, Սեւումեանը և վերջ չտալին անտեղի ընդհարման։

Ոսկերչեանը վրդովւած էր։ Նրբ յուզումը նստեց, նա ներողութիւն խնդրեց հիւրերից, որ իւր պատճառով խաղերը խանգարւեցին, և ապա դուրս եկաւ պատշգամբ, ուր սկսեց ծխել և անց ու դարձ անել։

Նորանից յետոյ Փանտերը շարունակեցին, բայց աշխոյժ չկար խաղի մէջ։ Աղատեանը իրան ձեւացնում էր ուրախ, ծիծաղում էր, ժպտում էր, կատակ էր անում։ Քող իմանան ամենքը, որ նա Ոսկերչեանի վարմունքը համարում է տղայական, ուստի և վիրաւորւած չէ զգում իրան։ Բայց պարզ էր շատերի համար, որ նա կեղծում էր։

Ոսկերչեանը և Աղատեանը առհասարակ միմեանց չէին սիրում։ Նոքա իրար համարում էին մեծամիտ և հպարտ, և, ի հարկէ, չէին սխալւում։ Ներկայ դէպքից յետոյ՝ նոքա ոխերիմ թշնամիներ դարձան։

Շուտով հիւրերը նստեցին ընթրիքի։ Դահլիճի երկարութեամբ մի պատից մինչև միւս պատը բաց էին արւած սեղանները՝ ծանրաբեռնւած զինու շիշերով, բազմաոտեսակ ուտելիքներով, նարինջներով լցւած ապակեայ մեծ վազերով և ծաղկամաններով՝ կարմիր ու դեղին վարդի փնջերով պճնւած։ Զառիկեանների առատաձեռնութիւնը ոչինչ չէր խնայել հիւրերին արժանի կերպով պատուելու

համար: Ամենալաւ տեսակից էին հողանդական և օսի պանիրները, խաւեարը, շամային, սարդինկան, զուրգելը, կարագը և ընդհանրապէս բոլոր միւս ուտեստները:

Սեղանի վերի ճակատին բազմել էր օր. Աշխէնի մօրեղբայրը, իսկ սորա հանդէպ՝ հակառակ ծայրին՝ Ոսկերչեանը: Սեղանի մէկ թւի վրայ տեղաւորւել էին օրիորդներ և տիկինները, իսկ միւս շարքը բռնել էին պարոնները, այնպէս որ, օրինակ, Գարեգինի դիմաց՝ օր. Վարթումեանն էր նստած, Սևուսեանի դիմաց՝ օր. Աշխէնը, Ազատեանի դիմաց՝ Զառիկեանի պաշտօնակից վարժուհիներից մէկը և այսպէս մի ծայրից մինչև միւս ծայրը:

Սևուսեանի առաջարկութեամբ և ընդհանուրի հաւանութեամբ թամաղա ընտրեց Զառիկեանի մօրեղբայրը, որը առանց նազ անելու անմիջապէս ստանձնեց իւր պաշտօնը: Թամաղան օգնական նշանակեց Ոսկերչեանին: Սա կամեցաւ հրաժարուել: Բայց ամեն կողմից ստիպեցին, և նա զիջեց:

Թամաղան պատուիրեց լցնել բաժակները և ինքը կարմիր գինով լեցուն բաժակը բարձրացնելով՝ սկսեց այսպէս.

—Այսօր լրանում է օր. Աշխէնի քսան տարին, և նա մտնում է քսան մէկի մէջ: Միայն մէկ հատ տարի է, որ օրիորդը ուսուցչական ասպարէզ է ելած, չնայած դորան, այսքան կարճ ժամանակէն ընթացքում, նորան յաջողւել է արդէն հմուտ մանկավարժութուն անուն վաստակել...

—Խնդրեմ, առանց կոմպլիմենտների,—ընդհատեց օրիորդը դժգոհ եղանակով:

—Որովհետև օրիորդ Աշխէնը,—շարունակեց թամաղան անվերջով, բայց խորիտ ձայնով,—ընդհատեց իմ խօսքը, ուստի ես իմ պարտքս եմ համարում առաջարկել, իբր տուգանք, մի բաժակ ջրախառն գինի, որ նա պիտի ըմպէ մինչև վերջին կաթիլը: Որ. Աշխէնը կատարեց մօրեղբօր պատուէրը չարածճի մանկան ժպիսով և յատակն ի վեր պարանելով բաժակը՝ ցոյց տւեց նորան:

—Այո, —խօսեց կրկին թամաղան,—հմուտ մանկավարժութուն անուն է ձեռք բերել: Գրաւել է աշակերտուհիների մատղաշ սըրտերը, հոգաբարձուների ուշադրութեան և դովասանքի առարկայ է դարձել և արժանացել իւր բոլոր պաշտօնակիցների խորին յար-

գանքին, բացի, ի հարկէ, մէկից, որը իւր սրիկայական մի արարքի համար այս նորերա վայելեց տասը ձեռքերով ապտակներ...

Հոմերեան քրքիջ բարձրացաւ սեղանակիցների մէջ այս վերջին խօսքերի վրայ, որոնց ակնարկը պարզ էր գրեթէ ամենքի համար:

Թամադան շարունակեց.

— Եւ այս բոլորը, ի հարկէ, շնորհիւ օրիորդի պարզ, անկեղծ և անարատ բնաւորութեան և այն խոր գիտակցութեան, որով նա ձեռնամուխ է լինում իւր գործին: Ուրեմն այս բաժակով նախ շնորհաւորենք օրիորդ Աշխէնի տարեդարձը և ապա ցանկանանք նորան երկար կեանք, կատարեալ առողջութիւն և անսպառ եռանդ, որպէս զի առանց թուլանալու, առանց վհառելու խոչնդոտների առաջ, միշտ ուրախ, միշտ ոգևորւած՝ շարունակէ բարւոյ և զեղեցիկ սերմեր ցանել իւր սանուհիների ամբիժ սրտերի մէջ և, վերջապէս, կարողութիւն ունենայ մարմնացնելու իւր բոլոր նւիրական գաղափարները!

Ճառին հետեւեցին կեցցէներ և բաժակների չխկչխկոցը:

Օր. Աշխէնը անհուն ցնծութեամբ և բարի ժպիտով ընդունում էր շնորհաւորութիւնները:

Ոսկերչեանը թոյլտուութիւն խնդրեց Թամադայից, որպէս զի կարդաց օր. Աշխէնի տարեդարձի առիթով յօրինած իւր բանաստեղծութիւնը:

— Սպասում ենք, — ասաց Թամադան՝ նայելով Ոսկերչեանի երեսին:

Օր. Աշխէնը ձեռքը մեկնեց և սեղանի վրայ դրած ծաղկափնջի միջից հանեց գեղանկար թղթի վրայ մաքուր գրած ոտանաւորը և յանձնեց Արտաշէսին:

Ոսկերչեանը ոտի ելաւ և դեկլամացիայով կարդաց իւր ճառը: Արտասանութիւնը յստակ էր, շեշտաւոր և ազդու, այնպէս որ շատ նպաստաւոր տպաւորութիւն գործեց բոլոր սեղանակիցների վրայ, որոնք խկոյն վարձատրեցին հեղինակին ծափահարութիւններով և էքստրաներով: Միայն Ազատեանն էր, որ բանաստեղծութեան ընթերցման ժամանակ անտարբերութեամբ խաղում էր իւր պատառաքաղի հետ, և դէմքը արտայայտում էր ծաղր ու հեգնութիւն:

Գինու աղղեցութեան տակ Գարեգին Չառիկեանի գլուխը սկսել էր տաքանալ: Լաւ տրամադրութեան մէջ էր, շարունակ խօսում և կատարում էր հարեանների հետ, ժպիտը բերնից չէր հեռանում, և յաճախ ոլորում էր բեկները:

Քամադան առաջարկեց Չառիկեանների մօր կենացը: Բայց նա ներկայ չէր: Կանչեցին, եկաւ:

Քամադան մի երկու խօսքով շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր նեղութիւնների համար, որ նա օրով յանձն է առել այդ երեկոյ հիւրերին պատուասիրելու: Տիկին Չառիկեանը նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց և, Ոսկերչեանի ձեռքով մատուցած լի բաժակը վերցնելով, շնորհաւորեց քստեր տարեդարձը, բարեմաղթութիւններ արաւ, աջ ու ձախ գլուխ տւեց և գուրս եկաւ դահլիճից:

Տիկին Չառիկեանը մայր և տնտեսուհի էր բառիս բուն նշանակութեամբ և իւր անձը դրած էր սիրելի որդոց համար:

Յետոյ խմեցին բոլոր հիւրերի կենացները զոյգ-զոյգ, և կենացներին յաջորդում էին խմբերգ կամ solo: Երբ հերթը հասաւ օր. Վարթումեանին, օր. Աշխէնը խնդրեց իւր եղբօրը երգել:

—Իսկոյն, ուրախութեամբ,—ասաց Գարեգինը, կոկորդը մաքրեց և ախորժալուր բաստով սկսեց ձայն տուր, ով ծովակը: Վիթխարի և լիքը ձայն էր Չառիկեանի ձայնը, այնպէս որ ունկնդիրը կարծես զգում էր հնչիւնների ալիքները օդի մէջ:

Օր. Վարթումեանը հիացած և ակնապիշ նայում էր երգչի երեսին: Աչքերը զամառ էին նորա դէմքին, և նա այդ միջոցին նման էր սուրբ յատկերի առջև աղօթող կոյսի: Նորա մտքովն անգամ չէր անցել երբեք, որ Չառիկեանի նման համեստ երիտասարդի մէջ թաքնւած կարող է լինել մի այնպիսի տաղանդ, որով այդժամ նա փայլում էր: Նա զմայլւած էր, և, ինչպէս ջերմաչափի սնդիկը եռուն ջրի մէջ սկսում է արագ վեր ու վեր բարձրանալ, այնպէս արագ բարձրացաւ օրիորդի սրտի մէջ համակրութիւնը դէպի Աշխէնի եղբայրը: Յաճախ նա խոստովանել է իւր ընկերուհիների առաջ, որ իրան շատ երջանիկ կը համարէր, եթէ իւր ամուսինը լինէր մի նշանաւոր երգիչ: Եւ ահա, թէև անյայտ, բայց կորովի երգիչը նորա առջևն է և իւր ձայնով տիրապետում է բոլորի սրտերին!...

Ձառիկեանը գլխի ամենախոնարհ շարժումով իւր շնորհակալութիւնը յայտնեց՝ կեցցէների, ծափահարութիւնների և էքստրաների համար: Սևուժեանը մօտեցաւ և խմեց նորա հետ բրուդերշաֆտ:

Մասնաւոր կենացներին յաջորդեցին զաղափարական կենացները՝ ճառախօսութիւններով հանդերձ, և այդ ժամանակ միայն սկսեց լաւ զգալ իրան Ազատեանը, որովհետեւ առիթ ունեցաւ իւր ճարտար լեզուի բոլոր հմտութիւնը երևցնելու՝ գեղեցիկ բառերով և գեղեցիկ ֆրազներով:

Արդէն շատ ուշ էր, երեքից անց: Սեղանից վերկենալու պահանջը ընդհանուր էր: Գոհունակութեան բռնն ցոյցերով խմեցին թամադայի կենացը և ամենքը բարձրացան տեղներից:

Կամաց կամաց ցրեցին հիւրերը՝ չափազանց ուրախ տրամադրութեան մէջ: Իսկ թէ ինչ զգացումներ տարան իրանց հետ օր. Վարթումեանը, Արտաշէս Ոսկերչեանը, Ազատեանը և Սևուժեանը, այդ թողնում եմ իրան ընթերցողին երեակայել:

(Շարունակելի)

Գ Ր Ի Չ Ը

Շ Ա Ն Թ Ի

Գլորոցիս մէջ մէկ կողմ նետւած է հիմա՝
Գրած-ջընջած թուղթերուս մէջ ցանուցիր.
Ժանգէ պատանք մը ձգւած է իր վրայ.
Եւ ալ հպարտ չառկայծիր:

Մինչ նայւածքս այդ հին գրչիս է յառած՝
Մէջս միտք մը զիգզագ կու տայ. մի՞ գուցէ
Անշարժ կեանքէս զգացումներս ալ յանկարծ
Ժանգի խաւ մը գայ գոցէ:

1893 սեպտ. Պոլիս:

Ա Ս Տ Ղ Ի Կ Ը

Շ Ա Ն Թ՝ի

Նուրբ, շղարշային
Ամպերը թեթև
Վերը կը սահին
Իրար ետև.

Եւ զողողջ, քնքուշ
Աստղի մը ծաւի
Ետևէն զգուշ
Կ'ենեն արշաւի.

Մինչև ամթիսած
Աստղիկը դուցէ
Ամպի գիրկն ինկած
Իր զէմքը գոցէ:

1894 ապրիլ, Լալբցիկ:

Ա Ն Յ Ա Ի

Շ Ա Ն Թ Ի

Անցաւ աղջիկը. թեթեւ, ժպտաղին.
Քափւած մազերուն ստերին մէջէն
Անփոյթ հայեացք մը նետելով չորս զին՝
Հայեացք մը իր խոր հմայիչ աչքէն:

Ու դուն կանգնած ես յուզւած ու շրւար,
Յրիւ մազերուն աչքերդ գամած,
Որոնք կը ծըփին հպարտ, ոսկեվառ.
Թաւիշ գդակը ցընցելով կամաց:

Զէ, աղջիկ մը չէ. այլ սիւքն անդգուշ,
Որ բլրակէն վար գայթեկով ծիծղուն
Քեզ կը պարուրէ պահիկ մը աշխուժ
Ու ծառերուն մէջ կը կորչի խփոյն:

1893 Նոյեմբ. Լայպցիկ.

ԳԻՇԵՐԱՊԱՅԸ ¹⁾

Շ Ա Ն Թ Ի

Գիշեր է. տանկ, տանկ. հըսկայ ժամացոյց:
Խաղաղ է չորս զին՝ կը ննջեն բոլոր.
Միայն ինքն է որ հանգոյցէ հանգոյց
Փողոցներ կ'անցնի լուռ, քայլամոլոր:

Պաղ հովը կու գայ կը զարնէ ճակտին,
Ուր հին-հին ջուգեր յանկարծ կը յածին,
Ինչպէս երկընքի քօղէն ալ անդին
Մուցըլաժ աստղեր մերթ վառ կ'առկայծին:

Խորունկ, հոգեզմայլ վերացման մը մէջ
Իր անցեալովը կ'ապրի մէկ վայրկեան.
Մանուկ օրերու երազներն անշէջ
Սրտի խորքէն դուրս խուռըն կը պոռթկան:

Ալ միտքն ակամայ թափով մ'ինքնաբեր
Կը թռչի հեռուն՝ տունը հայրենի.
Է՛, կեանքն ուրիշ էր, սրտերն ալ տարբեր
Այն լեռներուն մէջ վեհ ու ամեհի:

¹⁾ Տաճկաստանի քաղաքները ղեռ սովորութիւն է, որ գիշերը պահապաններ կը շրջին փողոցները և իրենց զազանակի հարւածներուն թւովը ժամերը ցոյց կու տան:

Եւ ան կը յիշէ. դիշեր է խորին.
Իրենք՝ քոյր-եղբայր՝ տենչանքով անհուն
Լըռիկ պաշարած ալեհեր հանին
Կ'ունկընդրեն վէպերն իր հին ու սիրուն:

Եւ հանին ինքն ալ ներշնչած արդէն
Մըհերի ուժը կը պատմէ տղոց,
Երբ յանկարծ բուքը տընակի երդէն
Այլանդակ ձայնով կը հանէ հոգոց:

Ահեղ ունումով կարծես կը խօսի,
Կը սուլէ բառեր բիրտ ու չըլսւած,
Բան, որ դժոխքի խորքէն կը հոսի.
Ու խաչ կը հանէ հանին երկիւղած:

Իսկ տղաքը լուռ կը նային իրար.
Եւ ամեն մէկը կը խորհի ինքնին,
Որ նոր Մըհեր մը լինի անպատճառ.
Երբ ինքն ալ հասնի անոր տարիքին:

...Եւ ահա տանկ, տանկ. խորհող ժամացոյց:
Խաղաղ է չորս դին՝ կը ննջեն բոլոր.
Միայն ինքն է որ հանգոյցէ հանգոյց
Փողոցներ կ'անցնի լուռ, քայլամոլոր:

1892 Նոյեմբեր, Պոլիս:

Ա Ր Տ Ը

(Տուրիստի յիշողութիւններ)

Վ. ՓԱՓԱՁԵԱՆԻ

Անիից էի վերադառնում և անցնում էի մի հայկական գիւղի միջով:

Գիշերը սաստիկ անձրև էր եկել. այնքան սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ փլեցրել էր: Փողոցներից հեղեղներ էին վազում կշկշալով: Երկինքը միաձուլ կապարագոյն ամպերով ծածկւած էր. դեռ էլի մի-մի անձրևում էր:

Լոյսը նոր էր բացւել: Կանչում էին մի քանի ուշ մնացած աքաղաղներ, զողանջում էին եկեղեցու զանգակները: Խրճիթների երթիկներից սկսել էին ծխի սիւնակներ խիստ ծանրութեամբ բարձրանալ և տարածւել տանիքների վրայ:

Զիռն սանձը քաշեցի. և ոչ իսկ արագ քայլել էր հնարաւոր. փողոցներում առւակներ էին գոյացել:

Գիւղի վերջին խրճիթին էի հասել, երբ նրա դուռը ճռնչաց, գոմի ներսում կովի բառաչը լսեց, մի քանի մանուկների ճիչեր ականջիս հասան և առաջս դուրս եկաւ մի ալեգարդ ծերունի, բահը ուսի վրայ դրած:

Մի վայրկեան ինձ նայեց, յետոյ պատերի տակով անցք փնտռեց քայլելու:

Բիւ յետոյ գիւղից դուրս էինք եկել: Ես էլ նրա քայլերով սկսեցի գնալ:

— Բարի լոյս, ծերունի. այդ հար աչալիսի եղանակին:

— Արտն եմ գնում:

—Հեռու է:

—Հեռու, լեռան ամենախուլ կողմերում:

—Վախենում ես որ անձրևը աւերած լինի:

—Ո՞վ գիտէ... Վայ է եկել, եթէ արտի վերեւից հեղեղ կազմըւած լինի. արտիս տեղը վատ է:

Նրա ձայնը, այդ ասելիս, յուզիչ կերպով դողաց:

—Ձեմ կարծում, մխիթարեցի ես—Ասուած ողորմած կը լինի: Ընտանիքդ մեծ է:

—Մեծ...

Եւ սկսեց չորս կողմը դիտել: Նրեւում էին ուրիշ գիւղացիներ էլ զանազան կողմերում: Նրանք էլ դուրս էին եկել արտին աչք տալու:

Ծերունին աշխատում էր արագ քայլել. բայց ոչ ինձ էր յաջողում և ոչ էլ նրան: Սաստիկ մածուցիկ և խորունկ ցեխ կար: Նա ճանապարհի կողքովն էր գնում, աշխատելով չոր տեղեր որոնել. իսկ ես ցեխերի միջով էի քշում ձիս: Գրեթէ միասին էինք գնում. երևի արտը իմ անցնելիք ճանապարհի վրան էր:

Դէմ ու դէմ, ալիքաձև բարձրանալով, մինչև մշուշալից հորիզոնն էր տարածւում սև լիւնաշղթան: Նրա անծայրածիր կուտակած տարածութիւնը վերեւից թափնում էր մառախուղի մէջ և ցածի կողմից ճղփում թացութիւնով: Ձիւն էլ, թւում էր որ կար. բայց շատ հեռու. ամպի սպիտակ շերտեր լինէին կարծես: Թանձր, սևագոյն սպիտակախառն մշուշը ծանրացել էր նաև ձորերի և հովիտների, լեռների ու բլուրների շուրջը: Տեղ-տեղ, ցանցաձև, երկնքից գետին իջնող շեշտակի գծերը ցոյց էին տալիս, որ խիստ անձրև էր տեղում զանազան կողմերում: Նրեւում էր որ ամպերը դեռ չատ ջուր ունէին և այդ գծերը պիտի քայլէին: Մշուշի քուլաներ էր, որ թաւալում էին բլրակներն՝ ի վար, քարշ գալիս—ցրւում դէպի դաշտերը... և արօտների կանաչ խոտերը, արտերի ցորենի հասկերը կուացրել էին գլուխին՝ կաթիլների ծանրութեան տակ:

Ծերունին սկսել էր աւելի հանդարտ քայլել: Նրա հնամաշ արեւններից ջուրը հոսում էր գուլպաների մէջ, ոտը թրջում: Խոնաւութիւնը թափանցում էր բաց կուրծքը և վերարկուի վրայ մշուշից՝ կաթիլներ էին դիզւում:

Անցնելով, մի առ մի դիտում էի երկու կողքի արտերը: Շատերի միայն մի քանի ակոսներն էին աւրել և մէջ տեղերում լճակներ գոյացել: Մի քանիսները լիովին ողողել էին: Ջրի հոսանքները արմատախիլ էին արել, քշել-տարել ցորենի դալար ծիլերն և հաւաքել ակոսների մէջ: Յեկ էր գոյացել ամեն մի փոքր շաւիղի վրայ, ամեն մի փոսութեան մէջ պղտոր, կարմրագոյն ջուր կիսւել և շատ հասկեր լողում էին նրանց երեսների վրայ, որպէս խեղտւածներ:

—Վախ, վախ, արեց ծերունին:

Ու առաջ գնաց:

Բայց փնասն ընդհանրապէս շատ էլ մեծ չէր երևում: Հողը զիմացել էր. երևում էին բոլորովին չփչացած արտեր անգամ. ծիլերը զիմացել էին և այժմ զւարթութեամբ ցցել էին սկսում իրենց գլուխները. միայն թէ կային այնպիսիները, որոնք ոտաբորիկ էին դարձել, արմատը մերկացրել: Ջուրն էր այդպէս շինել նրանց:

—Ե՛հ, փառք Աստուծոյ, խօսեց ծերունին՝ տեսնելով դրանք— շատ փնաս չէ եղել:

—Քո արտն էլ այդպէս կը լինի, ծերո՛ւկ, սրտապնէցի նրան:

Անխօս՝ գլուխը երերցրեց: Կասկածում էր. հայեացքը միշտ դէպի հեռուներն էին: Այսպէս քայլելով մենք հեռացանք գիւղից և յետոյ ծուկեցինք դէպի լեռները:

Ծուկիս, ծերունին մի րոպէ կանգ առաւ և աշխատեց հեռից նշմարել իր արտի դրութիւնը:

—Ո՞րն է արտը:

—Այն բարձրինը:

Ինչ որ ջրի հեղեղներ էին հոսում այնտեղ, ջրակոյտներ փալփելում: Մի՞ գուցէ այդ ջրերը նրա արտի միջովն էին անցել, ամեն ինչ սրբել տարել:

Ծերունին զուհատեց:

—Տունս օանդել է, մրմնջեց նա:

—Մի՞ թէ փնասւել է:

—Չգիտեմ դեռ, ասաց նա խեղտած ձայնով—գուցէ աչքերս լաւ չեն տեսնում... քաւառացել եմ...

Առաջ գնացինք: Մօտենում էինք: Քայլելը աւելի դժւարանում էր. վերեւից գրեթէ ցեխի հեղեղ էր, որ իջնում էր ցած, խառն՝ ծիլերով, ցողուններով...

Ծերունին հետևում էր. շունչը կտրւել էր: Քիչ էլ քայլեցինք: Ե՛լ կանաչ չէր երևում. էլ ոչինչ. ցեխի հեղեղ և ջուր էր որ տեսնում էինք, աւերիչ, ասպատակիչ հեղեղ...

Մի քանի քայլ անելուց յետոյ կանգ սռաւ ծերունին և բահը ուսից ցած թողեց:

Իր արտի կողքին էր: Թշւառ արտ...

Վերեւից, փոսերի մէջ գոյացած ջրերը պատուել էին իրենց թումբերը, ուժգնութեամբ ցած հոսել և գրեթէ սրբել էին արտը: Տեղ-տեղ, օաղիսների պէս մնացել, իրենց մերկ արմատներն էին ցոյց տալիս՝ ցորենի ծիլի կղզեակներ: Երկար, կանաչ երկար շերտեր միմեանց վրայ, արմատախիլ, ջարդւած, հողեւարք՝ սահել էին ամեն ուղղութեամբ և թաթախւել ցեխով: Ոմանք մինչև վիզը խրւել, ուրիշները հազիւ մէջքն էին երեցնում...

Հողն ամբողջ կանաչել էր նրանց դիակներով...

Եւ անձրեւը տեղում էր, տեղում ու իր մեծ կաթիլներով ճըղփացնում լճացած ջրերը:

Ընկաւ բահը ծերունու ձեռքից. աչքերը մթնեցին, ծնկները կթափեց և նա տեղն ի տեղ, իր ընտանիքին կերակրող ցորենի դիակների կողքին նստեց ու զլուխը ձեռքերի մէջ ծածկեց...

Արշաւանօք հեռացայ: Մխիթարական ոչ մի խօսք ասել չկարողացայ: Աւելորդ էլ էր:

Եւ երբ հեռւից ետ նայեցի, տեսայ թշւառ ծերունուն միշտ նոյն դիրքի մէջ, նստած իր աւրւած արտի կողքին, զլուխը ձեռքերի մէջ և ալեղարդ մազերը տեղացող անձրեւի տակ...

1895 թ.

ՄԱՅԻՍԵԱՆ ԳԻԹԵՐ

(La nuit de Mai)

ԱԼՓՐԷԴ ԴԸ ՄԻԽՍՍԷՅԻ — Թարգմ. Յակ. Տէր-Գէորգեանցի

Մ Ո Ւ Ս Ա

Պոէտ, առ քնարդ և տուր ինձ մի համբոյր.
Տես, վայրի վարդենին ծաղկում է քաղցրաբոյր.
Յանկալի դարունը ծնւում է այս գիշեր
Եւ նորան գրկելու անցնում են քամիներ:
Իսկ ջահել հովուհին վաղ արշալոյսին
Հանգչում է, թոյլ յենւած նախկանաչ թփերին:
Պոէտ, առ քնարդ և տուր ինձ մի համբոյր:

Պ Ո Է Տ

Օ', այն ինչ խաւար և խնչ սևաթոյր
Վարագոյրով է հովիտը պատուել.
Կարծես թէ մի բան, պատած սև քողով,
Հեռու անտառի վերան է իջել,
Որ դուրս ելնելով հասուն մարգերից
Կանաչ խոտերը տըրորեց ոտով,
Մի օտարոտի ցնորք էր այդ — սակաչն
Յանկարծ չքացաւ — աչքից ծածկւելով:

Մ Ո Ւ Ս Ա

Պոէտ, առ քնարդ. լճակի վրայ մեղմիկ
Զեփիւռն է մրմնջում և բուրում է քաղցրիկ.

Իսկ վարդը, կուսական ժախտով բացելիս,
 Արբեցնում է մեղին և նախանձում մեռնելիս:
 Լսիր ինձ, լռութիւն է պատել ամենին,
 Օ՛ պոէտ, երազիր սիրածիդ մասին:
 Այս գիշեր ծաղկոցում, տիլեաների տակ,
 Մայր մոնող արևի դողդոջուն շողքը
 Թողնում է իր վերջին բարեւ անյագ:
 Այս գիշեր ծաղկում է ու փթթում ամեն ինչ,
 Եւ անմահ բնութիւնը մրմունջով, սիրով լի,
 Զարթում է ու բուրում ինչպէս որ մահիճ
 Երկու դեռահաս ամուսինների:

Պ Ո Է Տ

Ինչո՞ւ է սիրտս այսպէս բաբախում.
 Այս լի՛նչ է արդեօք կառարւում իմ մէջ.
 Արդեօք սենեակիս դուռը չեն բաղխում.
 Ինչո՞ւ լայտերս դժգոյն, կիսաշէջ,
 Այսպէս շլացած է փայլատակում:
 Օ՛, բարձեալ Աստուծ, սառսուռ է տիրում.
 Այն ո՞վ է գալիս. ո՞վ կանչեց արդեօք.
 Երակներիս մէջ սառչում է աշիւնն.
 Ես միայնակ եմ. չէ կանչում ոչ ոք.
 Այդ ժամացոյցն է դանդաղ չափ զարկում:
 Օ՛, ողորմելի միայնակութիւն:

Մ Ո Ւ Ս Ա

Պոէտ, առ քնարդ—այս գիշեր Աստուծոյ
 Երակներում հոսում է ջահիլութեան գինին.
 Վրդովւած է սիրտս, ճնշւած հաճոցքից,
 Իսկ հրատապ քամիք շրթունքներս այրեցին:
 Ես չքնաղ եմ, նայիր: Օ՛ ծոյլ երեսայ,
 Առաջին համբոյրս մի՞թէ չես յիշում,
 Երբ գունատ, իմ թևին չփռելիս քեզ տեսայ
 Եւ լացող աչքերով հալւեցիր իմ զրկում:

Եւ յիշում ես սփոփեցի քո դառն վշտեր,
 Մինչ կը մեռնէիր սիրատապ, արշալոյսիդ մօտ.
 Ես մեռնում եմ յուսալով. մխիթարիր այս գիշեր.
 Ա'խ, աղօթիր ինձ համար, որ ապրեմ մինչ առաւօտ:

Պ Ո Է Տ

Այդ քո ձայնն է կանչում թախծալից
 Օ' իմ խեղճ Մուսա, օ ծաղիկ դու իմ.
 Այդ դու ես արդեօք, օ դու իմ անմահ
 Միակ անարատ և հաւատարիմ,
 Որի մէջ դեռ ևս ապրում է իմ սէր:
 Այո՛, այդ դու ես, դու իմ շիկահեր,
 Դու ես, դու իմ քոյր և իմ տիրուհի,
 Որ գիշերային լուսթեան միջին
 Ինձ պաշարում ես քո ոսկէ զղեստով
 Եւ ցրում շողեր իմ մարած սրտին:

Մ Ո Ւ Ս Ս

Պոէտ, մո. քնարդ. այո՛ ես եմ քո անմահն,
 Որ տեսայ այս գիշեր քեզ տխուր և անդէտ,
 Եւ ինչպէս ձագուկների, որ կանչում են ծնողին
 Իջել եմ երկնքից արտասուելու քեզ հետ:
 Ե՛կ ինձ մօտ, բարեկամ. գիտեմ դու տանջւում ես.
 Քանի մի լուռ վշտեր սիրտդ են կրծոտում.
 Իսկ մի բան դառնազին հեծում է քո սրտում—
 Երկրային սէրն է այդ, որ այցելում է քեզ:
 Որպէս սուեր զւարճութեան, կամ երջանիկ տեսլեան պէս
 Ե՛կ երգենք քո մտքերով, քո անցեալ վշտերն
 Եւ կորած հաճոյքների, երգենք Աստուծոյ մօտ.
 Զարթեցնենք անխտիր կեանքիդ էխօների,
 Թռչենք մի համբոյրի մէջ երկիր անծանօթ:
 Երգենք երջանկութիւն, ուրախութիւն երգենք,
 Որպէս մի տեսիլ, որպէս մի կարապետ
 Այցելենք այն տեղերն, որ մոռացւած են անհետ.

Տիեզերքը մերն է, մենք միայնակ ենք, թռչնեք:
Ահա մեր առաջ կապույտ Խտալիան,
Եւ կանաչազարդ պերճ Շոտլանդիան,
Իմ մայր Յունաստանն—մեղրի հաչրենիք,
Մեսսան—ուր սիրում են բնակել աղաւնիք,
Հեկատոմբի քաղաքներ—Արգոս և Պտելէօնն,
Ահա և Թաւամազ զլլտով Պէլիօնն,
Եւ կապույտ Տիտարէս և արծաթէ ծոցն,
Որ ցոյց է տալիս իրա ջրերում
Սպիտակ Կամիրին—սպիտակ Օլօօսոնն,
Եւ որտեղ Կարապն է իր տեսքով զմայլում:
Ասա ինձ սիրելիս,
Ի՞նչ ոսկէ երազներ օրօրում են մեր երգեր.
Կամ հրտեղից են գալիս—
Մեր թափած անվեր յստակ սրցունքներ:
Երբ օրւայ ճաճանչներն աչքերիդ շփեցին,
Ո՞ր մտախոհ սերոբէն, խոնարհած զլսիդ,
Քեզ պատմում էր ցածրաձայն իւր սիրոյ մասին:
Կը երգէնք արդեօք յոյս, ուրախութիւն, վշտեր,
Կամ արիւնաշաղախ, զինւած բանակներ,
Կամ մետաքսէ աստիճաններ—սիրահարների,
Եւ կամ փրփուրներ սէզ նժոյզների:
Կամ կասէնք թէ ի՞նչ ձեռք—երկնային անասուեր
Լապտերով—վառում է թէ ցերեկ, թէ գիշեր
Եւ յաւիտենական սիրոյ սուրբ խղճ,
Կամ ո՞վ է երկարում մեր կեանքի թեւերն:
Կասէնք Տարկինիին—«ժամ է, խաւար է պատել».
Աղամանդ հաւաքելու—կ'իջնէնք ծովերի յստակ
Կամ կարածացնէնք այծեր երկնիների տակ.
Կը բարձրանամք երկինք—դէպի մելանկոլիան,
Կը հետեւնէք որսորդին թեք ժայռերի վրան:
Ահա խեղճ այծեամբ, քարի տակ կանգնած
Նայում է որսորդին, լալիս է, աղաչում.
Նորան տանր սպասում են փոքրիկներ—նոր ծնւած.

Իսկ շուրջը իր կանաչ խաշանճն է սպասում:
 Բայց որսորդը իջնում, կտրտում է թշառին,
 Իսկ բաբախող սիրտը գցում շներին:
 Կը նկարե՞նք մի կոյս կարմրաթշիկ,
 Ժամից յետ դառնալիս—ի՞ր հետ մի մանկլաւիկ.
 Մի ցրած հայեացք ի՞ր մօրը ուղղած,
 Կիսաբաց շրթանց վրայ աղօթքը մոռացած,
 Սրտատրոփ լսում է կամարների տակ,
 Քաջառու ասպետի խթանների ձայն:
 Կամ կ'ասե՞նք Ֆրանսիայի հին հերոսներին
 Պարիսպը ելէք, զինւած, ձեր հերթին.
 Հնչեցէք ձեր անցեալ փառքի պարզ երգերն,
 Որ աւանդել էք տրուբադուրներին:
 Մի մեղմ էլէզիա կը յագցնենք սպիտակ.
 Վատերլօօյի մարդը կը պատմի՞ իւր կեանք.
 Կը պատմի՞ և այն զոհերի մասին
 Որ կոտորել է իր մահից առաջ—
 Մինչև կ'նշէր իւր բլրակն կանաչ—
 Եւ ձեռքեր խաչելն երկաթէ կրճքին:
 Կամ փքուն սատիրայով կը մեխենք սիւնից
 Անյայտ գրողի եօթ անգամ վաճառած անունն,
 Որ քաղցած, սառած,
 Մոռացման մատնւած,
 Գալիս է համարձակ, վստահ և հաճուքով
 Ծաղրի առնելու հանճարի յոյսեր,
 Եւ հաւաքելու դափնիք, որ մրոտել է շնչով:
 Ա՛ռ, ան քնարդ, էլ չեմ կարող ես լռել.
 Գարնան հանդէպ թւերս ինձ քաշում, թռցնում են.
 Ինձ տանում է քամին, ես հեռանում եմ երկրից.
 Գոնէ մի կաթիլ արցունք, Աստուած լսում է ինձ.
 Բայց ժամ է արդէն:

Պ Ո Է Տ

Եթէ քեզ պէտք է, իմ սիրելի քոյր,

Քան կաթիլ արցունք, և քան մի՛ համբույր,
Ապա, իմ քաղցրիկ, իբրև բարեկամ,
Առանց նեղութեան ես այն քեզ կը տամ:
Եւ եթէ շուտով դու երկինք ես գնում,
Մեր սէրը թող քեզ լինի յիշատակ.
Բայց ես չեմ երգում ո՛չ յոյս, ո՛չ խնդում,
Ո՛չ ուրախութիւն, ո՛չ նոյն իսկ տանջանք.
Լեզուս պահում է լռութիւն խորին
Եւ ականջ է գնում սրտի ասածին:

Մ Ո Ւ Ս Ա

Կարծում ես որ ես քամի՞ եմ աշնան,
Արցունքով եմ սնւում մինչև գերեզման,
Որ վիշտը ինձ համար ջրի կաթիլ է միայն—
Օ՛ պոէտ, մի՛ համբույր. ինքս տալիս եմ քեզ այն:
Խոտը—որ ուզում էի կորցել աչտեղից
Անգործութիւնդ է այդ, վիշտդ—առ Աստուծ.
Այն հոգսերը, որ կրել են ծաղիկ հասակից,
Տխուր սէրոբէների սրտիդ հասցրած:
Այն սուրբ վէրքերը—թող որ մեծանան.
Ոչինչ մեզ այնպէս մեծ չէ դարձնում,
Ինչպէս որ վիշտը—խոր և անսահման...
Բայց մի կարծիր, Օ պոէտ, որ դորա համար
Պէտք է լուռ նստես, լքւած աշխարհից:
Հիասթափման երգերն են ամենից գեղեցիկ.
Անմահ երգեր են դրանք—հիւսած հեծեծանքներից:
Երբ երկար ուղիից յոդնած Պէլիկանն
Իր բունն է դառնում միգապատ իրիկան.
Ջագերն անօթի, ափի մօտ խաղալիս,
Տեսնում են նորան ջրերի վրայ ճախրելիս,
Եւ յուսալով ձեռք ձգել առատ բաժիններ.
Թա՛կոտում են հօր շուրջը, ուրախ կանչում ու ճշում,
Եւ զգւելի խղիպի վրայ կտուցները շարժում.
Իսկ նա յամրաքայլ հասնելով լճին,

Թւերը տարածած իւր ձագերի վրան —
 Տխուր որսորդը դիտում է երկնին —
 Իսկ վէրքից հոսում է առւակներ արեան:
 Ծովերի անդունդն նա չափեց իզուր.
 Ովկեանը դատարկ էր. նա թռաւ ծովափից
 Եւ իւր սիրտը բերեց որպէս կերակուր,
 Իւր փորոտիքը տալիս է իւր ձագերին:
 Քարի վրայ փռւած, տխրադէմ ու լուռ
 Իր վսեմ սիրոյ մէջ իւր վիշտն է զգում,
 Արձակում է հաւաչներ իր մահաւան խնճոյքին
 Արբեցած սիրուց, ցարշելուց, հաճոյքից
 Թաւալւում է արիւնոտ, տաճանւում, թուլանում,
 Երբեմն էլ այս վեհ զոհման ժամանակ —
 Յոգնած — կրելուց այս անվերջ տանջանք —
 Երկիւղ կրելով — մեռնել իւր զաւակներից,
 Վեր թռչում, թւերը բանում է քամուն,
 Կուրծքը դէմ արած, վայրենի ճիւղ
 Զարագոյժ ողջոյն տալիս է մթնում:
 Եւ ծովի թռչունք ճախրում են շտապով.
 Եւ ծովափի մօտ ճամբորդն ուշացած
 Մահաւան թռիչքը զգալով, աղօթում է առ Աստուծ:

Պոէտ, այսպէս են անում բոլոր մեծ պոէտներ.
 Նոքա թողնում են զւարճանալ, զբօսնել,
 Կարճատե կեանք ունեցողներին:
 Բայց մարդիկ իրանց ճոխ խնճոյքներով
 Նման են մեծ մասամբ Պէլիկաններին:
 Երբ խօսում են պոէտներ խաբւած յոյսերից
 Վշտից, սիրուց, տանջանքից, մոռացութիւնից,
 Դա մի համերգ չէ, որ սիրտ է սփոփում,
 Ողջ ասածները սրերի է նմանում,
 Որով զճում են օդում հրացայտ մի շրջան —
 Բայց միշտ տեսնւում է այնտեղ կաթիլներ արեան:

Պ Ո Է Տ

Օ', մոռան, անյագ դու լուսապատկեր,
Երկար մի' հարցնիր ինձ դորա մասին.
Աւազի վրայ ոչինչ չը պէտք է գրել,
Երբ որ փչում է հիւսիսի քամին.
Իմ շրթանց վերայ, չիշում եմ, մի ժամ
Ջահիլութիւնն էր խաղում անդադար,
Անհող երգում էր թռչունի նման —
Բայց ես կրել եմ տառապանք երկար,
Եւ այսքան միայն կարող եմ ասել —
Եթէ քնարովս երգէի ես այն
Նա կը փշրէր եղէգնի նման:

Ն Ո Ր Ե Կ

Վ Է Պ

Դ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ

Գ. ԲԱԲԿԵՆՅԻ

(Շարունակութիւն ¹)

Գլուխ Ա.

Վերջին մի քանի օրուայ ընթացքում Սէքսանդրը այնքան էր բարոյապէս տանջւել, որ նահանգապետի պահանջման համաձայն հրաժարական տալով մեծ թեթևութիւն զգաց: Կեանքի մէջ նա առաջին անգամ իմացաւ, թէ ի՞նչ բան է մեծ կորուստ ունենալը. նա թէև ուսանող ժամանակ յաճախ էր տխրում, որ մարդիկ մեծ մասամբ չար են և դէպի իրենց նմաններն անարդար ու անգութ, թէև յաճախ էր պատահել՝ որ լրագրներում կարգալով այն տառապանքների մասին, որ կրում են հայերը մոլոսլմանական ազդութիւններից իրենց բնիկ հայրենիքում, միայնակ սենեակում արիւն արտասուք էր թափել,—բայց ոչ մի անգամ նա իրեն ներկայիս չափ անբախտ չէր զգացել: Այլ է վշտանալ ուրիշի անբախտութեան համար, այլ է իրեն թշուառ զգալ: Առաջին անգամ նա զգաց՝ թէ ի՞նչ բան է անվերադառնալի կորուստը: Նա ուսանող ժամանակ իր

¹) Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11, 12 և 1897 թ. № 1, 2—3:

անյաջողութեանց և վշտերի մէջ միշտ մտաբերում էր, որ իրենից հեռու, հայրենի կտրան տակ, զիւղական խարխուլ եկեղեցում, մի պառաւ աղօթում է նրա համար վշտաբեկ և կարեկից Տիրամօր առաջ և, մտաբերելով այս էակին, նա սփոփում էր իր կակիժը. նա երբ հիւանդանում էր և կեանքից յուսակտուր լինում, մտաբերում էր մօրը, որ չէր թողնի նրան ոչ մի դառն բուսկում և նրա սիրտը լցւում էր ջերմարար յուսով: Բայց նա այժմ այդ բոլորը կորցրեց: Միակ նաւահանդիստը, ուր կարող էր կանգնել նրա փութորկատար մակոցիլը, փլւեց, քանդւեց:

Եւ այդ խեղճ ու հրեշտականման պառաւի մահւան պատճառը, մտածում էր նա, եղել է ինքը, նրա սիրած ու փաշտփայած որդին, որի համար նա զոհել էր իր ամբողջ էութիւնն ու կեանքը—այո՛, նա ինքը՝ Սէքսանդրը, որովհետեւ եթէ նա զիւղում չապրէր, Ալօն չէր յանդգնի Գուլէին փախցնել և այս դէպքն էլ չէր պատահի: Խնչպէս նա, համալսարանական մարդ, չնախագուշակեց այս բանը. ուր էր նրա դատողութիւնը: Բայց նա դատողութիւն ունէր Բոլորովին ոչ. նա տարւած էր անբարոյական սիրով: Այս ինչո՞ւ նա էլ, իւր միւս ընկերների նման, չմնաց քաղաքում, չգնաց ընդհանուրի շաւղով. այն ժամանակ ոչ այս սարսափելի մահը կը լինէր, ոչ էլ այս անբախտ վիպասանական սէրը. նա կը տանէր իր մօտ իր սիրելի մօրը, որը հանգիստ և անդորր կեանք կը վայելէր, և զոնէ իր կեանքի վերջալոյսին բախտաւոր օրեր կ'ունենար: Բայց ինչո՞ւ նա ուրիշների նման չվարւեց: Ուզում էր ծառայել ժողովրդին, է, ծառայեց: Այստեղ նա սկսեց հաշիւ տալ իրեն: Մօտ ինն ամսւայ գործունէութեամբ նա ոչ մի բարի հետեանքի չէր հասել. խաղաղ ու հանգիստ ապրող Խնութը նա թշնամացրել էր զբացիների հետ, իր քարոզներով ու մտքերով յափշտակել էր և զրգռել զիւղացիներին, նրանց ու թուրքերի մէջ կռիւ ստեղծել և Աւանի մահւան պատճառը դառել, վերջապէս, նա սպանել էր իր մօրը և իր եօթանասնամեայ հօրը ծերութեան ժամանակ աննեցուկ թողել, իսկ նրա հիմնած ուսումնարանը... Ո՞վ զիտէ, դեռ գլուխ կը գտնէ թէ ոչ, և եթէ դար էլ՝ չէր լինի մի ալ չարիք ժողովրդի համար:

Այս և սոցա նման մտքերով պաշարւած Սէքսանդրը մտաւ Գէորգի մօտ Ընկերները առաջին բուսկին միայն իրար լուռ նայեցին և

անկարող էին մի բան խօսել: Ալէքսանդրի դէմքին կսկիծն այնքան խոր էր երևում, նա այնքան տխուր էր և կոտորւած, որ Գէորգը տեսնելով նրան համրացաւ և անկարող էր մի խօսք արտասանել:

Մի քանի րոպէ լուռ սպասելուց յետոյ միան, նա փաթաթւեց Ալէքսանդրին—սկսեց համբուրել նրան: Ալէքսանդրը շշմել էր, աչքերը սառել, այտերը չորացել: Նրա դէմքի վրայ ոչ մի կենդանութեան նշան չկար: Գէորգը նրան ձեռքից բռնած ու կիսագրկած, տարաւ և նստացրեց բազկաթոռի վրայ:

—Մի վհատիր, Ալէքսանդր ջան, մի անբախտութիւն է, որ պատահել է. ի՞նչ կարող ես անել:

—Ա՛խ, զո՞նէ մի օր, մի ժամ, մի րոպէ, նա հիւանդ լինէր, ես գրկէի, ներողութիւն խնդրէի նրանից, թող յետոյ մեռնէր: Խեղճ պառաւ, դու ի՞նչ մեղք ունէիր, որ իմ եսական ուսման համար բացակայելով քեզ տանջու՞մ էի: Դու մի օր չունեցար առանց արտասուքի. զո՞նէ իմ գրկում հոգիդ փչէիր...

—Դու, Ալէքսանդր ջան, առայժմ գիւղ մի դնա և ապրի ինձ մօտ:

—Ինձ համար այժմ միևնոյն է, թէ որտեղ կ'ապրեմ. ինձ մի հրամայող է հարկաւոր, թէկու՞ղ այդ դու եղիր. ի՞նչ հրամայես, այն կ'անեմ:

Խնուծի դէպքերից յետոյ նահանգապետը, զրգուած, այլ ևս ոչ մի դատողութիւն չէր ուզում լսել և Նանիէլ բէկն էլ անմիջապէս ստիպւեց հրաժարական տալ:

Խնուծի դէպքը այնպիսի մի հազաւագիւտ դէպք էր, որ նրա մասին դուեց լրագրներում և երկար ժամանակ Քուրքանիսի խօսակցութիւնների առարկան էր դառել: Նոյն իսկ հայերը Ալէքսանդրին էին մեղադրում: Մի «ազգասէր» տաք-արիւն երգւեալ հաւատարմատար առաջարկում էր իր ընկերներին այլ ևս նրա ձեռքը չսղմել, քանի որ հաւատացած էր, թէ բոլոր այս անբախտութիւնները պատահել են Ալէքսանդրի լիրբ ցանկութիւնների շնորհիւ. իսկ մի բժիշկ առաջարկում էր մինչև անգամ ամեն տեղից հալածել այդ մարդուն, եթէ ուղիղ որ, այդ դործերը մի սիրահարածու աչքով մարդուն, եթէ ուղիղ որ, այդ դործերը մի սիրահարածու կան վէպի հետեանք են: Մանաւանդ շատ զրգուում էր մի ինչոր աստիճանաւոր, որ համոզւած էր թէ Եւրոպական ուսումը մեր

որդիներանց լրբացնում է: Ահա ձեր ուսեալը, գոռում էր նա, մասով ցոյց տալով Նորեկի վրայ...

Գլ. Բ.

Տիկին Մաղիկի և Սլօի մահը, Ալէքսանդրի ու Դանիէլ բէկի պաշտօնից զրկելը և, սրանից առաջ, Աւանի ու Խամօ բէկի սպանելը, վերջապէս Գուէչի փախուստը, ուսումնարանի հիմնադրը, Ալէքսանդրի քարոզները և սրանց նման այլ դէպքեր, որոնք մի քանի ամսեայ մէջ իրար հետեցին, մեծ ցնցում առաջացրին Խնութում, որ կէս տարեայ մէջ այնքան չէր ապրել, որքան վերջին մի քանի ամսեայ ընթացքում: Սրանց վրայ աւելացրէք և այն, որ Աւանի գործի քննութիւնը ճշմարտութեան հակառակ ուղղութիւն ստացաւ: Մեղադրուում էին Մէլիք-Սէթն ու տիրացու Վարդանը, որոնք իբր թէ գիշեր ժամանակ Խամօ բէկի ճանապարհը կտրել են, կամենալով նրան կողոպտել, բայց երբ սա հակառակել է՝ սպանել են նրան: Իսկ Աւանին սպանել են Խամօ բէկի ընկերները իրենց կեանքն ու գոյքը պաշտպանելու համար: Քննութիւն կատարողը, պատժի անհրաժեշտութիւնը և խստութիւնը դաւանող մի նորաւարտ և բարի վրացի երիտասարդ, համոզում էր մեղադրեալներին յանձնառու լինել, հաւատացնելով, որ նա խղճում է չարագործներին, լաւ իմանալով, որ նոքա այս բանն արել են երիտասարդ պրիստաւի ազդեցութեան տակ:

Գիւղում բերնէ բերան էր ընկել ու բոլորին էլ զարմացրել այն քաջ պատասխանները, որ տւել էր քննիչին Մէլիք-Սէթը, յայտնելով նրան, թէ ինքը բարի ընտանիքից է և այնքան քաջ, որ չի վախենում ոչ մի պատժից, որ նրա համար ամենամեծ պատիժը այն կը լինի, երբ ինքը սուտ ասի: Չնայելով այս բոլոր պատասխաններին, քննիչը երկու մեղադրւողներին էլ բանտարկեց և նրանց խնդիրը, երաշխաւորութիւն տալու մասին, բացասեց:

Այժմ Աւանի վայնաստուծի հետ խառնեց և Վարդանի ու Մէլիքի տան լացն ու կոծը: Վանայք ամեն օր զնում էին եկեղեցի և լաց լինում: Գիւղացիների ափսոսանքին վերջ չկար:—Մեր զիւղի ամենալաւ մարդիկ, ասում էին նոքա, փչացան. այժմ այլևս մենք գլուխ պահել չենք կարող:

Մէլիք Դաւիթն ամբողջ օրը լուռ ու տխուր նստում էր և ծխաքարը ծխում: Գիւղացիների բոլոր հարցերն էլ նա թողնում էր անպատասխան: Վերջին ժամանակները նրա դէմքի վրայ երևում էին մեծ խորշոմներ և ընդհանրապէս ծերացել ու կռացել էր նա. բայց զարմանալին այն էր, որ կարծես վերջերն ամբողջ գիւղն էր ծերացել:

Նատ ծանր տպաւորութիւն էր անում ժողովրդի վրայ մանաւանդ Ուլանէս աղէն, որը շատ էր փոխւել: Այս մարդը, որի հաժար բոլորը կարծում էին, թէ կինը ոչ մի նշանակութիւն չունի, երևաց, որ հազազիւտ սէր է տածելիս եղել զէպի իր կողակիցը: Մաղիկի մահից յետոյ, նա մոռացաւ իր հրացանն ու վառողը, որսն ու գոշտերը: Երբ նրա սիրելի շները մօտենում էին նրան և երեսին նայում, կարծես խնդրում էին որսի գնալ, նա տխուր նայում էր նրանց վրայ և աչքերից արցունք թափելով հեռանում: Նա ամբողջ օր ու գիշեր բակի մէջ լուռ ու մօռնջ թափառում էր մի անկիւնից միւսը, ինքն իրան ինչ որ փնթփնթալով և գլուխը շարժելով: Օրը մի ժամ միայն նա տանից դուրս էր գալիս, այն էլ դնում նստում էր Մաղիկի գերեզմանաքարի մօտ և լաց լինում: Արտաքինով նա լիովին ծերացել էր. երկար ու սպիտակ մօրուքը ընկել էր կուրծքի վրայ և զգզւել: Գլխի մազերը երկարացել էին և հասել մինչև ուսերը: Նրա քայլերի մէջ էլ չէր նկատում վաղեմի ոյժն ու կայտառութիւնը, կուրծքը ներս էր ընկել, իսկ մէջքը դուրս ընկել: Երբ նա անցնում էր գիւղամիջով մինչև անգամ շները նրան չէին մօտենում. ամեն գիւղացի, պատահելիս, խղճալի հայեացք էր ձգում նրա վրայ ու հեռանում: Տանը ոչ ուտելու հաց ու կերակուր, ոչ խմելու և լացւելու ջուր կը պահանջէր՝ մինչև որ Գուլէն կամ Ալօյի ծնողները չտային: Նա յաճախ մոռանում էր տեղաշարժւում պառկելը և քնում էր չոր տախտակների վրայ: Մանաւանդ գժւար էր նրան ճերմակեղէնը փոխելու անիպելը. նա շատ անգամ աղոտոտ շորերով էր ման գալիս:

Ոչ սակաւ փոխւել էին Գուլէն, Զէյնաբն ու Մստօն: Առաջինը նիհարել էր, չորացել ու կմախք դարձել, իսկ երկու ծերերը չէին կարողանում հաշտել իրենց բարերարի կորստի հետ. նրանց տանջում էր մանաւանդ Ուլանէս աղի դրութիւնը: Նոքա վաբում էին

Ուլանէս աղի անտեսութիւնը և նրա եկամուտով իրենք էլ էին ապրում, նրան էլ կերակրում:

Խնութում միայն մի մարդ կար, որ աւելի կատառացել ու ժրացել էր, դա Աւետիսն էր: Բայց նրա ուրախութիւնն էլ կարճատեւ եղաւ, որովհետեւ նոր նշանակած պրիստաւը խնդրեց, որ Խնութի վրայ կառավարչական տանուտէր նշանակեն և Աւետիսին էլ, միւս հայերի նման, ատում էր: Բացի դրանից, երբ նա վերջին օրերը մի անգամ սկսեց գիւղի մէջ հորթ ու բորթ անել՝ մի պատանի պատասխանեց, որ նա այլևս չի կարող գիւղում նախկին գերը կտտարել, որովհետեւ գիւղացիք արդէն խելօքացել են: Եւ ուղիղ որ, կեանքն ու տանջանքը մարդու թէ սպանում են, թէ կենդանացնում: այս տարւայ պատմութիւնը նոյն հետեանքն էր ունեցել Խնութի համար:

Գլ. Գ.

Աւէքսանդրի ուղեղը սառել էր և զատողութիւնը թուլացել: Նա առաւօտը վաղ վեր էր կենում քնից և առանց թէյի տանից դուրս գալիս ու գնում, ուր տանում էին ոտները, կամ նստում էր տանը և ամբողջ օրը սենեակի մի անկիւնից միւսը քայլում, կամ մահճակալի վրայ պառկած մտատանջութեան մէջ ընկնում: Ո՛չ մի շրջակայ երևոյթ նրա աչքով չէր ընկնում—նրան շարունակ տանջում էր այն յուզիչ միտքը, թէ ինքն ուրիշների անբախտութեան պատճառ է դառնու: Նա համոզւած էր, որ ինքը երբեք անբախտ չի լինի, որովհետեւ իրեն վերաբերող ամեն մի կորուստ կարող է անվիշտ կրել: Նա վաղուց այն համոզման էր, թէ մարդու համար նոյն է՝ ինչպէս է ապրում. հարուստ թէ աղքատ, հիւանդ թէ առողջ, փառաւոր թէ անշուք: Նա վշտելի ու տառապանքների մէջ յաճախ գտնում էր բաւականութիւն: Բայց այժմ, նրան դիպել էր մի անսպասելի և անսովոր հարւած: Իրեն թշուառացնել, իր սխալ քայլերի հետեանքը կրել,—ու՛րնչ, մտածում էր նա, բայց անբախտացնել ուրիշին, պատճառ դառնալ ուրիշների վշտի և տառապանքի, սա, արդարեւ, անտանելի ցաւ է և չարագործութիւն: Ինչո՞ւ պէ. ոք է ևս պատճառ լինում ուրիշների թշուառութեան: Այսպէս մտածելիս, նա երեւակայում էր, թէ ձմեռն է. Աւանի երեխաները հաց չունին. մայրը նրանց հաւաքած իր շուրջը:

սառը թոնրաշրթին նստած, լաց է լինում. տիրացու Վարդանի կինն ու երեխաները գիւղում, բոկոսն, տնէտուն շրջելով, հաց են մուրում. Մէլիք Շէգոյի դրամստի նման ընտանիքում այժմ միայն լաց ու կոծ է թագաւորում:

Նա յաճախ աշխատում էր այս ճնշող մութերից ազատել, բայց, հակառակ իր ցանկութեան, ամենայն մի երևոյթ նրա մէջ յղացում էր դրանց նման մութեր: Մի օր, երբ նա անցնում էր հասարակական ճեմելիքով, նկատեց մի մարդու, որ անցնում էր մի վեցամեայ երեխայի թւից բռնած. երեխան ուրախ-ուրախ թռչկոտելով, ստէպ-ստէպ հօրը հարցեր էր սալիս, թէ այս կամ այն ինչ բանն արդեօք կառնի իր համար թէ շուկայում կմշ արդեօք այս ինչ, կամ այն ինչ միրգը: Ո՛րքան երջանկութիւն, մտածեց Ալէքսանդրը և յանկարծ մտաբերեց, որ Աւանի, Վարդանի, Մէլիք Սէթի և շատերի երեխաներին և նոցա ծնողներին ինքը զրկել է այդպիսի երջանկութիւնից: Նա մի րոպէ, երեւակայեց, որ տիրացու Վարդանի երեխան, որբի նման փողոցում կանգնած, նայում է ազահ աչքերով մի գիւղացու, որ միս է գնել և տանում է տուն:

Մի օր, իր պատճառած անբախտութիւնների մասին մտածելով գնալիս, Ալէքսանդրը լսեց, որ մի վաճառական ցոյց տալով իրան, ասաց միւսին. — ահա, այս տղի պատճառով էր, որ Դանիէլ բէկին զրկեցին պաշտօնից: Այս խօսքերը մի նոր վէրք բացարին նրա սրտում: Ուղիղ որ, սկսեց մտածել նա, ես եմ եղել Դանիէլ բէկի անբախտութեան պատճառը, և կարծես նրա գլխին թոխմախով ծանր հարւածեցին: Նրա գլուխը մի սարսափելի ցաւ բռնեց, նա շշմեց և քիչ էր մնացել վայր ընկնի, բայց իրեն պահեց և քայլերն արագացնելով սկսեց շուտ-շուտ գնալ: Նա ուշքի եկաւ միայն այն ժամանակ, երբ նկատեց, որ դէպի իրեն մի ֆուրդունչի արագ քշում է իր ձիաներին: Նա րոպէապէս վճռեց ճանապարհից չչեղւել, որ ձիերը իրան օտի տակ առնեն: Զարմացած կառապանը հաղիւ կարողացաւ կանգնեցնել ձիերը, ու գոռաց. «է՛յ, տիրացու, մահդ աչքդ ես առի՞լ, ճանապարհից դժուրս ել: Ալէքսանդրը ճանապարհից դուրս եկաւ և շշմած շարունակեց գնալ: Սաստիկ զլխացաւը նորից սկսեց և չթողեց նրան, մինչև այն ժամանակ, երբ իրան տեսաւ վայր ընկած մահճակալի վրայ:

Զմեռն իր սառ թեւերն արդէն փռել էր Թուրքանխիսի և նրա շրջակայքի վրայ և սպիտակ սաւանով ծածկել գետինը: Գէորգը մինչև ժամի երկուսը լինում էր դպրոցում, իսկ յետոյ տանը նստած պարապում էր: Նա արդէն այն եզրակացութեան էր, թէ Ներսիսեան դպրոցից ստացածով կարգին մանկավարժ չի կարելի դառնալ. որպէս և ստանալ հասարակական դորձողին կարևոր դիրք: Նա իր հինգ տարեայ ծառայութեան միջոցում անտեսել էր մի փոքրիկ գումար և արդէն վճռել էր գնալ արտասահման ուսումը շարունակելու: Դրա համար նա եռանդով պարապում էր գերմաներէնով և նորից անցնում միջնակարգ դպրոցների դասընթացը, որ արտասահմանում միւսների նման այլ ևս այսպիսի առարկաների վրայ ժամանակ չկորցնի: Նա դեռ ուսումնարանում շատ սիրում էր Ալէքսանդրին. վերջին անբախտութիւններն աւելի սաստկացրել էին այդ սէրը և Գէորգը մեծ ուշադրութեամբ խնամում էր իր ընկերոջ: Բայց խեղճը ոչ մի կերպով չէր կարողանում օգնել թշուառ երիտասարդին: Նա փորձեց Ալէքսանդրին հետաքրքրել գիտութիւնով, դէպի որը առաջ շատ սէր ունէր, բայց Ալէքսանդրը բոլորովին չլսեց նրա ասածները և շարած աչքերը գետնին էր հռել. իսկ մի անգամ երբ Գէորգը ակնարկեց մեր լրագիրների բանակոււի վրայ, նա երեսը նրանից դարձրեց ու հեռացաւ: Գէորգն արդէն յոյսը կտրել էր իր ընկերից և մտածում էր բիշկներին զիմեւ, բայց չէր յանդգնում, և բաւականանում էր միայն նրանով, որ աշխատում էր լաւ կերակրել նրան և լաւ քնացնել:

Մի օր, երբ օդի մէջ տաքութիւն էր տիրում, Ալէքսանդրը դուրս եկաւ տանից և երկար թափառում էր քաղաքի հին ամրոցում. նա սաստիկ յոգնեց և քաղց զգաց ու ճաշի ժամանակ վերադարձաւ: Գէորգը, տեսնելով նրա ակորժակը, շատ ուրախացաւ, լաւ կերակրեց նրան և խմեցրեց Վախեթու գինի: Ալէքսանդրը ուրախ տրամադրութեան մէջ ընկաւ, իսկ ապա՝ քնեց հանգիստ և կազդուրիչ քնով: Միւս օրը նա բաւականին զւարթ էր, սկսեց խօսել, մի անգամ էլ ծիծաղեց: Առաւօտեան տանից դուրս եկաւ: Զմեռային սառնորակ օդը զարկեց նրա երեսին թէ չէ, նա մի անհուն բաւականութիւն զգաց, կեռացած մէջքն ուղղեց և սկսեց

առաջ գնալ. նա ուշադրութիւն էր դարձնում անցորդների վրայ: Որքան ուրախացաւ, երբ յան'լարծ լսեց մի օրիորդական բարակ ձայն.

— Բարով Ալէքսանդր, ինչու չէք երևում:

Դա օրիորդ Մարիամն էր, որին մօտեցաւ Ալէքսանդրը և փոխադարձաբար բարեկեց: Ալէքսանդրը, Մարիամի ձեռքը շփելիս, մի անուշիկ ջերմ զգաց: Նա Մարիամի փափլիկ թաթը երկար ժամանակ բռնել էր իր ձեռքում և օրիորդն էլ ցանկութիւն չէր յայտնում ձեռքը հեռացնել վաղուց չտեսած բարեկամի ձեռքից: Ալէքսանդրը զգում էր, թէ ինչպէս հաճելի ջերմութիւնը, կենդանաբար հեղուկի նման, օրիորդի ձեռքից տարածւում է իր ամբողջ մարմնի մէջ:

— Է՛, Ալէքսանդր, ինչո՞ւ իսկի չէք գալիս մեր տուն. շատ տխուր էք երևում ու նիհարած:

Ալէքսանդրը մի լաւ նայեց օրիորդին, որի ցորնեզոյն աչտերը կարմրել էին ձմեռւոյ ցրտից և աչքերը պէժին էին տալիս զոյգ փոքրիկ աստղների նման. օրիորդը նրան չքնաղ երեաց: Եւ նա, փոխանակ ուղղակի պատասխանելու օրիորդի հարցին, բացականչեց. «Ո՛րքան հրաշալի էք, օրիորդ Մարիամն:

— Յո՛, անուշխօսութիւններ էլ էք սկսել. ես երբէք չէի սպասում:

— Ոչ, օրիորդ, ասածս անկեղծ սրտով արտայայտած ճշմարտութիւն է:

— Դէ, դէ, փիլիսոփայութիւններ մի արէք, համեցէք մեզ մօտ և հայրիկիս հետ միասին դարդ կ'անէք. քանի որ երկուսիդ անբախտութիւնն էլ մի է, ցտեսութիւն:

Վնրջին խօսքերը լսելիս, կարծես սառը ջուր ածեցին երիտասարդի գլխին, նա տեղնուտեղը սառեց ու չորացած մնաց: Նա այլևս չնկատեց Մարիամին, գլխի սաստիկ ցաւից շշմեց և շարունակեց իր ճանապարհը: Նա նկատեց, որ ժողովուրդը խմբւած մի կողմի վրայ է գնում, ինքն էլ ուղղեց իր քայլերը դէպի այն կողմը, մինչև որ քաղաքից դուրս եկաւ: Ճանապարհը տանում էր դէպի մօտակայ մի հռչակաւոր վանք և Թուրքանխի ժողովուրդը թէ առանձին կառքերով և թէ հանրակառքերով գնում էր այդ

վանքը: Նոր եկած ձիւնը, որ մի թզաչափ ծածկել էր գետինը, արեւից սկսել էր հալւել, և անց ու դարձ անողների կոխոտելուց ճանապարհը դառել էր ցելս, ճնճեղ: Ալէքսանդրը չէր նկատում այդ տիղմը. ոտերը ջրի մէջ թրջած ու ցելոտած, գլուխը քաշ, շարունակում էր իր ճանքան: Նա չէր կարողանում ազատուել իրեն տանջող պատկերից. նա երեւակայում էր, որ Ղանիէլ բէկը շուկայ է ուղարկում ծառային, իսկ նրան պարտքով ոչ ոք ոչ հաց է տալիս, ոչ միս. նրա ծառան վերադառնում է տուն և թթու դէմք ցոյց տալիս. որ Ղանիէլ բէկն ու իր կինը գիշերներն անքուն են անցկացնում, մտածելով Մարիամին մարդու տալու և մանր երեխաների կրթութեան մասին: Յանկարծ նա մտաբերեց և իր հօրը, որ նրա առաջ ներկայացաւ խեղճ, անբաղդ ու ընկճած. նա իսկոյն զգաց մի անհուն գորով դէպի իր հայրը և կամեցաւ ճանապարհից յետ դառնալ, գնալ Խնութ և գրկել, համբուրել իր հօրը, բայց այդ ժամանակ հանրակառքով անցնող մի խումբ զւարճացողներ կանգնեցին և խնդրեցին նրան, որ իրենց հետ նստի: Զւարճացող խումբը կարծում էր, որ նա մի զիժ վարժապետ կը լինի և վերցրեց վրան ծիծաղելու համար, բայց երբ մի րոպէ դիտեցին Ալէքսանդրին, այլևս ոչոք չյանդգնեց նրա հետ հանաք անել, այլ շարժանքով տեղ հասցրին: Հռչակաւոր վանքում այսօր մեծ հանդէս կար: Ազգասէր, մեծ հոգևորականը կորզել էր ազքատ հայ ժողովրդից հարիւր հազար և իրեն անմահացնելու համար, մի ինչ որ շէնք էր կառուցել, որի վրայ ծախսել էր մի երկու տասնեակ հազար: Այսօր այդ շէնքի օժման օրն էր և բազմաթիւ ամբոխը եկել էր մասամբ ժամանակ անցկացնելու, շատերը վանքի սեղանատան պնակները լիզելու, իսկ շատերն էլ ճառեր ասելու Ներսէս մեծի յետնորդի մասին, որ իրենք էլ կարողանան օգտուել, կրակի մօտ ձեռք տաքացնել և ազգասիրաբար փայլել լրագիրների էջերում:

Մեծահուշակ վանքի լայն բակը լցւել էր խաչտաբղէտ բազմութիւնով: Ալէքսանդրը հազիւ էր նկատում այն մեծ մեծ ու տխուր շինութիւնները, որ կառուցել էր զարերի ընթացքում աղքատ ու տանջւած հայ ժողովուրդը, ապարդիւն արիւնքրտինք թափելով: Նա այն ժամանակ միայն ուշքի եկաւ, երբ տեսաւ, որ ամբոխը գնում է դէպի սեղանատուն: Սեղանատանը տեղի ունեցած

զովասանական ճառերն ու բեմբասացութիւնը գրաւեցին նրա ուշադրութիւնը: Մի եպիսկոպոս, երկար ու ձիգ քարոզաձև խօսքերով բացատրում էր թէ քրիստոնէութիւնը փրկեց հայերին, թէ եկեղեցին է մեր միակ փրկիչը, որ պէտք է շարունակէ այսպիսի փառաւոր շինութիւններով մեր գոյութիւնը պահպանել ազգերի մէջ և աշխարհայեցողութեան սրբազանի ճառը երկար էր և մենաձայն, այնպէս որ, մեր հերոսը չկարողացաւ մինչև վերջը լսել և սկսեց նայել իր դիմացի վարդապետին, որ ագահաբար ու աչքերը ծոռթելով, կլանում էր համեղ կերակուրները: Նա զարմանքով սկսեց նայել այդ շատակերութեան վրայ մինչև որ զգուցէ Յետոյ նա աչքը դարձրեց շրջակայ հոգևորականների վրայ, որոնց զիրուկ մարմինները նրան շատ անոտանելի երևացին, նա սկսեց իրեն վատ զգալ և մտածում էր դուրս գալ, երբ երգեցիկ խումբը սկսեց երգել մեր ազգային բանաստեղծներից մէկի զովասանական երգը, շինարար հոգևորականին ձօնած: Նա նայեց սև շոր հագած երգողներին, որոնք կարծես ուզում էին իրենց թրթռող սրտերը սպանել սև շորերի տակ և նրան արտաքինով կարգի ենթարկել:

Անբաւական ու յոգնած տեսածից, Ալէքսանդրը, անուշադիր թողնելով որ իր վարմունքը հակառակ է ամեն տեսակ քաղաքավարութեան, ճաշից վեր կացաւ և դուրս գնաց: Նրա վրայ ուշադրութիւն դարձնող չեղաւ. ճառերն ու կեցցէները շարունակեցին, մինչև որ հարբած ու գոհացած ամբոխը ստամոքսի ծանրութիւնից զգաց հանդստի կարօտ և սեղանի ծոյլ օրհնանքից յետոյ դուրս եկաւ զւարճատեղից:

ԳԼ. Դ.

Աւղուց Քշառոց գաւառակում ինչիւր էր զարթել Խնուկ-ցիներին և Կորաւանցիներին հաշտեցնելու: Թէպէտ սրա մասին խօսում էին թէ հայերը և թէ թուրքերը, որոնց մէջ մի քանիսը մինչև անգամ անկեղծօրէն խղճում էին անմեղ բանտարկեալներին, բայց չկար մի մարդ, որը իր վրայ վերցնէր այդ գործի ձեռներէ-ցութիւնը: Հաշտութեան անհրաժեշտութիւնը զգացւում էր մանաւանդ վերջին ժամանակները, երբ բանտարկեալների պաշտպան երգչեալ հաւատարմատարը բացարձակ յայտնել էր, որ հազիւ թէ

յաջողութիւն ունենայ, եթէ վկաները չփոխեն իրենց ցուցմունքները:

Եթէ բանտարկեալները թուրքեր կամ քրդեր լինէին, իսկոյն կը զոնւէին առաջիններից խաներ ու բէգեր, իսկ երկրորդներից՝ ցեղապետներ, որոնք կը միջամտէին, կը խնդրէին և հաշտութիւն կը կայանար. բայց հայերի միջ աջդպիսի դեր իրենց վրայ վերցնողներ չկան, որովհետեւ հայ ուսեալ և ազնւական դասակարգերը աւելի հեռու են ժողովրդից և նրա հետ կապած են միայն ազգային ընդհանուր և ոչ աջնքան մօտ շահերով:

Այնպէս որ, հայերի կողմից Ֆաթի խան ուշադիրներ լինելով մարդ գնացող, միջամտող չկար. իսկ Մէլիք-Շէքօն անկարող էր այդ անելու չափ ստորանալ և ընկճել թշնամու առաջ: Աւելի լաւ է նրա բոլոր որդիները կոտորէին, քան պապենական թշնամու դուռը գնար փրկութիւն աղերսելու: Այսպէս անցնում էին օրերը, մինչև դատաստանական նիստի օրը մօտեցաւ և Փիր-Մուրադ Սուլթանը վկաններին իր մօտ հրաւիրեց ու հրամայեց, որ դատարանումն էլ քննիչին տւած ցուցմունքը հաստատեն: Եւ եթէ ինքը՝ Սուլթանը, ուրիշների մօտ լաւամարդ լինելու համար, քաղաքում կ'առաջարկի նրանց ցուցմունքները փոխել, թող առերես համաձայնեն, բայց դատաւորների առաջ հին ասածները հաստատեն, իսկ յետոյ թշնամիներին հաւատացնեն, որ վախից աջդպէս վարեցին: Իսկ եթէ բան է, շատ ստիպողներ ունեցան, թող վկաները պահանջեն երկու բանտարկեալներից հազար ռուբլի:

Բանտարկեալների պաշտպանը Թուրքանիսի յայտնի պաշտօնատարի որդին էր. նրա հայրը իր պաշտօնավարութեան ժամանակ շատ սիրում ու հաւանում էր շողքորթող թուրքերին, որոնց և շատ էր օգնում: Նոցա թուումն էր և Փիր-Մուրադ Սուլթանը, որ իր մեծ կալւածները գանձարանից նրա օգնութեամբ էր տարել ու այսօր նրա որդու առաջ միշտ ներկայանում էր որպէս նւիրւած և շնորհապարտ բարերարւած: Պաշտպանը երկուսի պաշտպանութեան համար պէտք է առնէր հազար ռուբլի, որից երեք հարիւրը արդէն ստացել էր, իսկ եթէ հարիւրը պէտք է ստանար գործի յաջող ելքից յետոյ: Այս պատճառով նա հրաւիրեց իր մօտ Փիր-Մուրադ Սուլթանին և խնդրեց, որ նա ազդի վկանների վրայ: Երկար ու

բարակ կեղծաւորութիւնից յետոյ, որին ներկայ էր և Մէլիք-Շէքօն, Սուլթանը վկաներին հրաւիրեց փաստաբանի մօտ: Նրանք խոստացան ճշմարիտն ասել այն ժամանակ, երբ մեղադրեալները աւանդ կը դնեն մէկի մօտ հազար ռուբլի: Մէլիքը պատասխանեց, որ անկարող է տալ, խնդրեց մի քանի րոպէ մտածելու համար ու դուրս եկաւ պաշտպանի սենեակից: Բազմաթիւ Խնութցիներ և Կորավանցիներ ժողովեւէլ էին պաշտպանի լայն բազը և սպասում էին հաշտութեան: Երկու կողմից էլ իրար համոզում էին, խնդրում և սպառնալիք կարդում: Երբ Մէլիքը դուրս եկաւ, նրան հետեւեց և Սուլթանը:

— Մէլիք, դու հաւատացիր, երդում եմ Հաղթաթ Սբասով, որ ես ուզում եմ քեզ օգնել բոլոր սրտով:

— Ես այն ժամանակ կը հաւատամ, Սուլթան, երբ դու գործով ցոյց կը տաս:

— Ես ինչպէս ցոյց տամ, որ ինձ չեն լսում և փող են պահանջում:

— Այ՛ Սուլթան, եղբայր, դու էլ գիտես, ես էլ և բոլոր աշխարհն էլ գիտի, որ մենք իրար հետ հակառակ ենք. բայց մեր հակառակութիւնը դեռ արեան թշնամութեան չի հասել: Ես ոչ թէ միայն իմ այս որդու համար, այլ մեր բոլոր սերունդների համար, այց, այս ամբողջ ժողովրդի առաջ, քեզանից խնդրում եմ այս գործից ձեռք վերցուր:

— Ձեռք կարող, Մէլիք ջան, քեզ օգնել, որովհետեւ անկարող եմ, չեն ուզում, չէ: Ես ինքս բոլոր սրտով ցանկանում եմ, վկաներին համոզում եմ, բայց անկարող եմ, ինձ չեն լսում:

— Սուլթան, եղբայր, ինչ ես անշահ կեղծաւորութիւն անում: մի՞թէ սրանք քո խօսքից կարող են դուրս գալ: Մի՞թէ ես չգիտեմ, որ սոքա քո սարուկներն են և բաւական է քո մի խօսքը, որ սոքա ճշմարիտը ասեն և իմ անմեղ որդին ազատուի:

— Ասում եմ՝ ինձ չեն լսում:

— Սուլթան, դու ինքդ որդու տէր ես, շատ էլ ինձ յաղթել ու վզիս հեծել ես, իմ աւագ որդուն մի սպանի, խղճա:

— Ոչ, անկարող եմ:

Այս խօսքերը Մէլիքին կրակ տւին: Նա իր կորացած մէջքն ուղղեց և սպառնաց.

—Գնա Սուլթան, մի ճկուտի չափ էլ քեզանից չիմ խնդրի, ինչ ձեռքիցդ դալիս է՝ արան: Թող այսօրւանից Մէլիք-Շէքօյի և Ղափ-լան-Սուլթանի թոռների մէջ արեան թշնամութիւն ընկնի: Աստուած մեզ չամաչեցնի: Այս խօսքերը արտասանելով, Մէլիքը հպարտ քայլերով մտաւ պաշտպանի մօտ, որին յայտնեց, թէ հաշտութիւն կայանալ չի կարող, թէկուզ երկսին էլ տաժանակիր աշխատութեան դատապարտեն:

Առաւօտեան ժամի տասնեմէկը հաղիւ կը լինէր, բայց ժողովորդն արդէն խմբուել էր նահանգական դատարանի առաջ: Ձմեռւայ ամենացուրտ օրերից մէկն էր: Թուրքանիսի փողոցներն ու շինութիւնները ծածկուել էին հաստ ձիւնով, որը երկար շարունակեող պարզկանների շնորհիւ սառել էր և կպել քարացած գետնին: Ծառերը ծածկուել էին սպիտակ սաւանով: Օդը սարսափելի ցուրտ էր և մարդկանց երեսը կրակում: Կապարագոյն երկինքը ծածկւած էր մառախուղով և ոչ մի աստղ երկնքի մեռելային անհունութեան մէջ կեանքի նշոյլ չէր ցոյց տալիս: Մարդիկ լցուել էին իրենց տները և դուրս գալիս փաթաթուում էին վերարկւի մէջ, քթերն ու բերանները ծածկում և, գիշերւայ գողի պէս, արագ-արագ անցնում փողոցներով: Շները փախել էին բակերից ու մի-մի որջ գտել ծածկուել: Մէլիք-Շէքօն էր, որ մի խումբ խնութիւնների հետ կանգնել էր դատարանի առաջ և կարծես ցուրտ չէր զգում: Նրա ձեռքում չէին ոչ ծխաքարչը, ոչ էլ անբաժան ընկեր տէրողորմեան: Նրա գտակը իջել էր խոժուած աչքերի վրայ: Գլխակոր, ձեռքերը խաչմերուկ, նա վիթխարու նման կանգնած էր ամբոխի մէջ և սարւած էր իր մտքերով: Ներսը քննութիւն էր. ներկայ էին նահանգապետը, Կոնստանդին Պետրովիչը, Սդէյաչիդա Կուզմինիշնան, որ նստել էր նահանգապետի մօտ և Փիր-Մուրադ Սուլթանը՝ բազմութիւն Կորավանցիներով: Իսկ ինքը՝ Մէլիքը ներս չէր կարող մտնել, որովհետեւ դժար էր ներկայ լինել աւագ որդու մահւան դատաւճռին: Ինչ դրութեան մէջ էր ընկել Մէլիք-Շէքօյի շառուիղը: Ո՞վ էր հարցնում նրան. դու ո՞վ ես, ո՞ւմ որդին ես և ի՞նչպիսի մարդ: Թէ նա, թէ մի թուրք Ալի, կամ քուրդ Բոչօ: Իսկի հարց-

նող կամր նրան, որ ուղիղը պատմի, իսկի կարծող կամր, որ նա ուղիղը կ'ասի, վերջապէս, իսկի մի պաշտօնեայ կամր, որ նրան ճանաչէր: Ի՞նչ էր նա, ի՞նչ... մի շնչին արարած, բոլոր մարդկանցից ամենաշնչինը, որովհետեւ միւսները կարող էին գոնէ խաբել, կեղծաւորել, ստորաքարշութիւն անել և գրանով էլի մի բան էին. իսկ նա ի՞նչ էր, մի անբախտ, անոյժ, անապաւէն մարդ: Ումը զիմէր նա իր անմեղ որդու փրկութեան համար, ուր գնար և ի՞նչ ասէր, ով նրան սենեակ կը թողնէր, ով կը հաւատար: Կը հաւատային արդեօք, եթէ ոչ նրան, գոնէ նրա ազգականին կամ դրացուն, վերջապէս բաղնութեան ձայնին. ոչ, սրանց մինչև անգամ չեն էլ հարցնի: Նա իր ժողովրդով մի կոյր հաւ էր, որին կարող էր ամեն մէկը կոցահարել, մի նապաստակ, որը բնի մէջ թագ կացած զոյգում է հեռում երեցող ուրուրից: Նապաստակն անգամ բուն ունի, ուր կարող է թագնւել, իսկ նա ի՞նչ ունի: Նապաստակին տեղ կը տան անշունչ մացառներն ու հողակոյտերը, իսկ նրան ապաստանի մէջ կը գզգզեն շնչաւոր պարսիկը, թաթարն ու քուրդը, որոնք տիրել են նրա բնակավայրը և նրա բունը աւերել: Բայց հարցն այն չէ, որ նա կորցնում էր մի որդուն. ոչ, այլ ի՞նչ կը լինէր նրա և իր ընտանիքի ապագան. նրա որդիներն ու թոռները պէտք է դառնան հասարակ բանւորներ ու չարչիներ և զիշեր ցերեկ մտածեն միայն իրենց օրւայ հացի մասին: Այս և սոցա նման մոքեր էին գալիս Մէլիքի գլուխը և նա, բալի մէջ տեղում ցից ու անշարժ կանգնած, սուղել էր նրանց մէջ: Այս մոքերը իրար հետ դաշնակցում էին, հակառակում, իրարից փախչում ու իրար հետ կապւում, մինչև որ վերջը նա մի եզրակացութեան եկաւ, թէ այսպէս է աշխարհքիս բերմունքը և ինքր թոյլ է ու ընդդիմադրելու անկարող: Բայց յանկարծ նա ուշքի եկաւ. մի ուժեղ ձեռք բռնեց նրա թևը և արթնացրեց ապշութիւնից: Նա յետ նայեց և տեսաւ Բաղդասարին:

— Հայրիկ ջան, ի՞նչ ես դարդ անում, կանչեց տաքացած երիտասարդը:

Մէլիքը լուռ նրա երեսը նայեց իր սառած աչքերով, յետոյ գլուխը բարձրացրեց, գտակը դէպի գագաթը տարաւ ու սկսեց շփել ճակատը, որը տաք էր ու քրտնած: Նա նայեց իր շուրջը:

մեծաւ, որ իր շուրջը կանգնած են իր եօթ որդիները: Նրա սիրտը արդէն սառել էր և որդիների խմբին նայելը ոչ մի բերկրանք չպատճառեց, ինչպէս առաջ. կարծես նրանք իր որդիները չլինէին, այլ օտար մարդիկ: Նա զգաց խորին յոգնածութիւն, ուղեղի թմրութիւն և հազիւ կարողացաւ իրեն պահել, որ վայր չընկնի:

Շրջապատող ամբոխը նայում էր նրա վիթխարի հասակին, ողբերգական կացութեանը և ճերմակած մօրուքին, որ ցրտից կուչ էր եկել ու կսել նրա ծնոտին: Յանկարծ ամբոխը շարժեց, զղրդաց. ներսից դուրս եկաւ մարդկանց մի մեծ հոսանք, որի միջից տեղ տեղ բարձր ու կամաց լսում էին «կատուժնի» «կատուժնի». ամենի դէմքի վրայ երևում էր խոր թախիծ, ափսոսանք, այնպէս որ, կարծես բոլորն էլ ուզում էին լաց լինել: «կատուժնի» շշուշներին յանկարծ հետևեց աղմուկ, որ սկսեց մեծանալ ու սաստկանալ: Մէլիքը նկատեց, որ իր որդիները, զրգուած, փայտերն ու դաշոյնները քաշած, յարձակեցին Փաթիխան ուշադիների վրայ, որոնք իրենց կողմից արեցին նոյնը:

Երկու կողմին օգնութեան եկան Խնութցիներն ու Կորաւանցիները: Արդէն սկսել էին իրար զարկել, երբ զինւորները մէջ մտան և սևիններով բաժանեցին կռուողներին: Մէլիքը նայեց այս բոլորին, զլուխը շարժեց, կարծես ուզում էր ասել՝ ի՞նչու է, և անխօս դուրս եկաւ արդարադատութեան բակից:

Մէլիք Սէթին ու տիրացու Վարդանին դատաւարտեցին տան և երկու տարւայ տաժանակիր աշխատանքի:

Գլ. Ե.

Խղճալի է պետական փոքր պաշտօնեայի վիճակը: Երկար տարիներ հպատակւելը, փակ օգի մէջ մի օրինակ արտագրութիւնը, ամենաչնչին շռայլութիւն անգամ թոյլ չաւոյր ամսաթոշակը նրան ծնշում են, կուրծքը նեղացնում և ուղեղը սեղմում: Նա կորցնում է բոլոր ընդունակութիւնները և յարմարում է իր պաշտօնը միայն վարելուն, որից եթէ զրկւի՝ պէտք է սովամահ լինի:

Քանի անգամ Դանիէլ բէկն ասում էր Մարգարիտին.

—Ափսոս, այ ինիկ, որ ես արհեստաւոր կամ վաճառական չդարձայ. աւելի ազատ մարդ կը լինէի, մի տեղ արհեստս չբանէր,

մի ուրիշ տեղ կը գնայի, մի առևտուրս անշահ լինէր, միւսը կըսէին. ես իմուզլուսու կը լինէի և գործիս տէրը: Բայց այժմ ինչ կը լինի իմ դրութիւնը, երբ ինձ զրկեն պաշտօնից:

Եւ այդ օրն էլ եկաւ: Խեղճ Դանիէլ բէկը սպանեաժ էր: Նա ոչ մի եկամուտ չունենալով, պէտք է կերակրէր ու հագցնէր մի ընտանիք բաղկացած ութ-իննը հոգուց:

Խնութի վերջին դէպքերը, որոնց հետ կապ ունէր և նրա անունը, վարչական շրջաններում աջնքան խաչտառակ գոյն էին ստացել, որ նա նորից պաշտօն ստանալու յոյս ունենալ անկարող էր, հետևապէս ընտանիքը պիտի սովամահ լինէր: Յաճախ նա մտածում և պատճառներ էր որոնում, թէ ինչու համար նրան պատժեցին և փորձում էր մեղադրել իրեն. բայց անկարող էր, որովհետև իր արածների մէջ փաստեր էր տեսնում, որոնց համար պէտք է նրան շնորհակալութիւն յայտնէին և ոչ թէ պարտաւէին: Մարդիկ առհասարակ, և հայերը մանաւանդ, ընդունակ են ամեն տեսակ նեղութեան հետ հաշտւելու. Դանիէլ բէկն էլ կամաց կամաց սկըսում էր հաշտւել իր դրութեան հետ և առայժմ պարտքով էր ապրում և յոյս ունէր թէ շուտով մի աշխատանք կը գտնի: Բայց աշխատանք չկար ու չկար:

Մի օր, երբ Դանիէլ բէկն ու տիկին Մարգարիտը տխուր նըստած մտածում էին թէ որտեղից կարող են մի եկամուտ ունենալ, օրիորդ Մարիամը ներս մտաւ գուլպայի մեքենայով, որ երկու մշակ հազիւ ներս բերին:

— Մայրիկ, հիմա էլ մի վախենաք. ես գնել եմ պայմանով, որ ամսական միայն տաս ուսուրի տամ, մինչև գինը լրանայ. արդէն յանձնարարութիւններ էլ ունեմ:

Օրիորդի մեքենան դառաւ Դանիէլ բէկի ընտանիքը փրկողը. ամեն ամիս 30—40 ու. փող էր մնում և զրանով նրանք Թուրքանիսում ապրելու միջոց ունէին: Բացի դորանից, նա դառաւ և Մարիամի համար վշտակից ընկեր: Մեքենայի մօտ նստած աշխատելիս, նա անձնատուր էր լինում իր խորին տխրութեան, որը տիրել էր նրան այն ժամանակից, երբ նկատեց, թէ ինքը սիրահարւած է, բայց անբախտ սիրով: Այն օրւանից թէ զիշերը՝ երազում, թէ ցերեկը՝ արթուն ժամանակ նրա առաջ կանգնած էր

Ալէքսանդրի ուրաւականը: Պատահում էր, որ օրիորդը ամբողջ ժամերով, հակառակ իր որոշածին, տարւում էր անկապ մտքերով, որոնք վերաբերում էին միայն Ալէքսանդրին, որի հետ կամ խօսում էր, կամ վիճում, հարկաւ երկու կողմի ասելիքն էլ ինքը մոռածելով, կամ թեանցուկ ման էր գալիս, կամ փարած նրա կուրծքին համբուրում էր, կամ նրա գլուխը դրած իր ծնկան վրայ, նրա շէկ մազերի հետ էր խաղում: Երեւակայութեամբ նա իրական Ալէքսանդրին համարեա բոլորովին փոխել էր:

Այն օրւանից, երբ Ալէքսանդրը նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց, առաջին անգամ օր. Մարիամը տեսաւ, որ ինքը անկարող է ազդել, որ իր խելքն ու դատողութիւնները անկարող են հրապուրել: Նա առաջին անգամն էր, որ կեանքի մէջ հասաւ այն տեղը, երբ մարդ իրեն ասում է. այլես դու անկարող ես ցանկալի երջանկութեանը հասնել, փնաս բարով արա իրականութեան մէջ կարելի բախտին, և ապրիր հիւանդ անուրջներով, երբ մարդ ասում է իրան. խոնարհիր, որովհետեւ թոյլ ես:

Այն օրից դէսը, օրիորդն աւելի, ինչպէս ասում են, «իջել էր»: Նրա քայլերը դանդաղացել էին, դէմքի և ճակատի վրայ խորշոմներ էին առաջ եկել, աչքերը սառել, և ինքն էլ, ընդհանրապէս, աւելի լրջացել էր ու տխրադուռնել:

Նա շատ անգամ վճռում էր, որ Ալէքսանդրին մոռանայ, չսիրի, նրա մասին չմտածի. բայց անկարող էր լինում, որովհետեւ շրջակայն ոչ մի առարկայ, ոչ մի մարդու գործ նրան բաւականութեւն չէր տալիս, ոչ մէկին նա չէր հաւանում, բացի իր երեւակայած Ալէքսանդրից, որը քանի հեռու էր իրականից, այնքան աւելի հրապուրիչ էր դառնում: Երբ Ալէքսանդրին դուրս հանեցին, չնայելով նրա ընտանիքի մեծ անբախտութեանը, օրիորդը կարծես ուրախացաւ, որովհետեւ նրա մէջ ծագեց այն յոյսը, թէ այժմ Ալէքսանդրի հետ յաճախ կը տեսնուի, կը խօսի: Բայց օրերն անցնում էին և՛ Ալէքսանդրը Ղանիէլ Բէգինց տուն չէր գալիս: Օրիորդը նրստած գուլպայի մեքենայի մօտ, խորասուզւում էր իր ցաւերի մէջ, ու բամբակեայ սպիտակ թելը թրջում էր արտասուքով:

Արդէն քաղաքում ոչ ուրախալի լուրեր էին պտտում Ալէքսանդրի մասին: Մի իրաւաբան ասել էր՝ թէպէտ նա համալսարա-

նում եղել է, բայց գրքերը ոչ թէ աչքերի առաջ, այլ դագաթի վրայ դրած է կարդացել, մի ուրիշը չաչանել էր՝ թէ նա լիովին զուրկ է ընտանեկան կրթութիւնից և լաւ կ'անի, որ ճգնաւոր դառնայ. մի երրորդը՝ թէ նա ջղաճին հիւանդ է, չորրորդը՝ թէ խելացնոր է և այլն: Մէկը պատմում էր՝ թէ ինչպէս տեսել է, որ նա փողոցում, մաքուր տեղը թողած, ցեխերի միջով է գնացել, միւսը՝ թէ երբ նրան, որպէս ծանօթի բարեւել է, նա հարցրել է «Ձեր հրամանքը ի՞նչ էք պահանջում ինձանից», երրորդը՝ թէ ինքը ականատես է եղել, որ թուրքերը նրան շուկայում «հուշտ, հուշտ» են արել և այլն և այլն:

Ձնայելով որ այս լուրերը Ալէքսանդրին օրիորդի առաջ շատ կատակերգական և խղճալի էին նկարագրում, բայց նա կարծես աւելի և աւելի էր սիրահարում մեր թշուառ դաղափարականին: Նա երեւակայում էր նրան հիւանդ, աղքատ ու անտէր և իրեն էլ. այս ճգնաժամում նրա մօտ նստած, նրան դրկած ու խնամելիս: Նա հաւատում էր անկեղծ սիրոյն և համոզւած էր, որ անկեղծ սէրը երբէք չի սառչի, թէկուզ նրա առարկան ամենախեղճ դուրս-թեան մէջ լինի: Երբ վերջին անգամ նրան օրիորդը պատահեց փողոցում և նկատեց նրա վերին աստիճանի ջղաճին դուրսիւնն ու տարօրինակ ցտեսութիւնը, երեսն արագ շուռ տալով հազիւ կարողացաւ ծածկել իր արտասուքը, լաց լինելով կամաց-կամաց տուն եկաւ և տանը երկար ու բարակ մտածելուց յետոյ վճռեց, բոլորից էլ իր վիշտը ծածկել: Բայց վրայ հասնող հանգամանքները փոխեցին նրա վճիռը և օրիորդը ստիպւած պէտք է աւելի ներգործական դեր կատարէր:

Մէլիք Սէթի և տիրացու Վարդանի վճռի կայանալու օրից, Ալէքսանդրը աւելի ջղաճին էր դարձել և իրեն կորցրել: Գիշերները քնել չէր կարողանում, իսկ ցերեկները միշտ անհանգիստ էր: Նրան տանջողը, չարչարողը այն միտքն էր, թէ նա ուրիշների անբախտութեան պատճառ է դառել, մի բան՝ որ իրեն ներել չէր կարողանում:

— Ամեն էակ իր կեանքն ունի, նրա մէջ գտնում է իր բախտը:

յաճախ ինքն իրեն դատում էր նա. մարդը միայն իրեն կարող է զրկել բախտից, իսկ երբ նա այդ թոյլ է տալիս ուրիշների վերաբերմամբ, ուրիշներին է զրկում բախտից, ուրեմն և կեանքից, հետևապես, նա երկու չարագործութիւն է անում՝ էակի և ամբողջ բնութեան դէմ:

Յաճախ էլ արդարացում էր որոնում:

—Միթէ, հարցնում էր նա, մարդ չի կարող մեծամասնութեան բախտի համար կռուելիս և պատճառ լինել մի քանիսի անբախտութեան:

Բայց իսկոյն և եթ իրեն բացասական պատասխան էր տալիս.

—Ո՛չ, որովհետեւ թէ քո արածով մեծամասնութիւնը կը բախտաւորւի, դեռ դա հարց է, բայց թէ մէկը անբախտանում է ներկայումս, դա փաստ է իսկ հաստատը զոհել կարծեցեալին, դա արդէն մի մեծ սխալ է: Բացի դրանից, դատում էր նա, չէ՞ որ ամեն մի արարած իրաւունք ունի ապրելու, ինչո՞ւ պէտք է նրա անհատական շահերը զոհել մեծամասնութեանը:

Յաճախ նրա դատողութիւնների կանոնաւոր ընթացքը խանգարւում էր տեսակ-տեսակ պատկերներով, որոնք անկանոն փոխարինում էին իրար նրա մտածողութեան մէջ և յափշտակում նրան, թէպէտ այս պատկերները ընդհանրապէս կապ էին ունենում նրան զբաղեցնող գլխաւոր մտքի հետ, այն է, որ նա ուրիշին անբախտացրել է: Նա, սենեակում նստած, սկսում էր երեւակայել, թէ ի՞նչ են խօսում տիրացու Վարդանն ու Մէլիք Սէթը բանտում. դրսում մի լաւ օր տեսնելիս, իսկոյն սկսում էր երեւակայել, որ նոքա մտածում են, թէ զրկւել են կեանքի ամենաթանկագին բանից՝ զեղեցիկ բնութիւնից, որով ամեն մի ազատ ոք անվարձ օգտւում է: Նա մտածում էր, որ գողերը տիրացու Վարդանի տունը կողոպտում են, որ Աւանի կի՛նը աղքատութիւնից սկսում է ծախել իրեն, որ Մէլիք Շէգօն ինքնասպանութիւն է գործել և այլն, և այլն. այսպիսի պատկերների մասին նա ոչ միայն մտածում էր, այլ և զիշերները երազում տեսնում:

Նա ոչ մի գործով չէր զբաղւում. կամ սենեակում միայնակ անցուդարձ էր անում, կամ դուրս գալիս փողոցները շրջում: Վերջին ժամանակները ուր որ գնար, վերջը կը վերադառնար դէպի

քաղաքացիին բանորդ, որի զուների առաջ ժամերով կը թափառէր։ Շատ անգամ, ձմեռուայ ցրտին մի բարակ վերարկով ու առանց կրկնակօշիկների երկար շրջելով բանտի առաջ, կը նստէր այնտեղ սառը քարերի վերայ և ժամերով նստած կը մնար։ Բանտապետը և յաճախողները տեսնում էին այս և զարմանում։ Վերջ ի վերջոյ նոքա վճռեցին, որ այս երիտասարդը գժւել է։ Այս լուրը կայծակի արագութեամբ տարածեց քաղաքի մէջ ու հասաւ մինչև անգամ օրիորդ Մարիամի ականջը։ Վերջին օրերը գուլպայի մեքենան աւելի ու աւելի արագ էր շարժւում և նրա մօտ նստած օր. Մարիամի երգը բոլորովին չէր կտրւում։ Նա օրը յաճախ մի քանի անգամ կրկնում էր նոյն երգը. շատ ժամանակ էլ երեւակայում թէ ինքը մտել է Ալէքսանդրի սենեակը, նրան քնած է տեսնում ու սկսում է նրա զլխավերևը կանգնած երգել։ Բայց երգն ու մարմնական աշխատանքը չէին կարողանում նրան մոտատանջութիւնից ազատել։

Նրա մէջ առաջ էր եկել մի նոր ցանկութիւն, այն է՝ Ալէքսանդրի հետ տեսնել, նրա հետ, մի բոլի էլ է, խօսել։ Նա քանի անգամ դուրս էր եկել տանից ու անցել փողոցով—Գէորգի տան մօտից—որ իր սիրոյ առարկային պատահի, բայց միշտ անյաջող հետևանքի էր հասել։ Մի օր էլ, երբ նա անցաւ վերոյիշեալ տեղով, նա իրեն զսպել չկարողացաւ. շուրջը նայեց, տեսաւ, որ ոչ ոք չկայ, մօտեցաւ լուսամտովն ու տեսաւ, որ Ալէքսանդրը նստած է սենեակում։ Նրա սիրտը սկսեց արագ-արագ բաբախել. նա քիչ մնաց իրեն կորցնէր և, անկարող լինելով այլ ևս համբերել, ուղիղ մտաւ նրա մօտ։ Զարմացած Ալէքսանդրը տեղից վերկացաւ, բարեւեց օրիորդին, որը կ'ասէս համբացել էր և չէր կարողանում մի խօսք էլ է արտասանել։ Նրկուն էլ երկար ժամանակ զլխիկոր կանգնած գետնին էին նայում, անկարող լինելով իրար հետ խօսելու, երբ ներս մտնող Գէորգը ընդհատեց տիրող լռութիւնը, և հրաւիրեց օրիորդին նստելու։ Նրիտասարդների խօսակցութեան առարկան դառաւ հայ լրագրութեան մի ինչ որ աղտոտ ու տգէտ բանակռիւր։

Գլ. 2.

Զմեռն արդէն անցել էր և գարունը սկսւել, բայց Ալէքսանդրի դրութեան մէջ փոփոխութիւն չէր նկատուում։ Նրան շուտ-

շուտ աչցելող օր. Մարիամը ամեն անգամ աւելի ու աւելի էր վշտանում, յուսակառուր լինում իր խեղճ բարեկամի վերաբերմամբ, որին Գէորգն արդէն վաղուց խնամում էր, որպէս հոգեկան հիւանդի։ Վերջ ի վերջոյ երկու նոր ծանօթները վճռեցին իրենց բարեկամի համար բժշկի դիմել։ Երկուսսարդ բժիշկը, որ վերջին ժամանակաց աստուծոսիրած ջղաջին հիւանդութիւնները նշմարում էր ամեն մի քայլափոխում, լսելով նրանց ասածները, անկեղծօրէն յայտնեց, որ Ալէքսանդրը հոգեկան հիւանդ է, բայց խորհուրդ տուեց, որ նրան հիւանդանոց չտանեն, այլ թողնեն բնութեան ազդեցութեանը և, ինչքան կարելի է, նրան զբաղեցնեն, որ տանջող դադափարներից ազատուի։ Այս պատճառով օրիորդը սխեց աւելի ու աւելի յաճախել Գէորգեանց տուն, մինչև մի օր Լուսկի Գէօն գիւղից եկաւ և յայտնեց թէ Ովանէս Աղէն վտանգաւոր դրութեան մէջ է և Ալէքսանդրին տեսնել է ուղում։ Թէպէտ այս լուրը, որ Ալէքսանդրի վշտերի վրայ մէկն էլ էր աւելացնում, շատ անախորժ թւաց Գէորգին ու Մարիամին, բայց ինչ անէին, հաւանայնեցին, որ նա գիւղ գնաց։

Գարնանամուտի ջերմաշունչ օրերից մէկն էր։ Գարնանային սև ամպերը պատել էին երկինքը և օդի մէջ մացրել այն բարերար նոսր ու խաղաղ ջերմը, որ թափանցում է մարդու սառած ոսկրների մէջ, կենդանիների հանում է ծակերից և տաւար ու ոչխարին կեանք տալիս։ Զմեռանից կուտակած ձները սկսել էին հալւել և նոցա տակից ջրերը, փոքրիկ առակներ կասլած, հոսում էին գետնավերևով ու միախառնելով մեծանում։ Սեւացած գետինը սկսում էր բրինձ-բրինձ լինել և արձակել թանձր գոլորշի, որը հանդարտ ու մեղմիկ, ծխի պէս, բարձրանում էր վեր։ Կիսածիւնաթափ լեռները ախոր հալում էին շրջակայքին, իսկ նրանց լանջերի վրայ մնացած ձիւնը սև հողի վրայ աւելի աչքի էր ընկնում իր ձերմակ ու մաքուր փայլով։ Խաղաղ ու հանդարտ օդը ստէպ-ստէպ տարուբերում էր գարնան քամուց, որը հարաւից իր հետ բերում էր ջերմ, կեանք, աշխոյժ ու շարժում։ Ալէքսանդրը, որ Լուսկի Գէօն հետ գնում էր հօրը տեսութեան, դանդաղ քշում էր իր ձիուն խնութ տանող ճանապարհով։ Նրա ձին հազիւ էր ձեղքում ճանապարհի ցեխը, որ մեծ-մեծ կոտորներով կպչում էր

նրա ոտքերին ու պոկ չէր գալիս: Խեղճ կենդանին, յոգնած ճանապարհի զժամարութիւնից, աչքերը գետնից չէր բարձրացնում և ոտը զնելու աւելի յարմար տեղ էր փնտռում, մինչ ղեռ տէրը անզգաց նստած էր նրա վրայ, թողնել էր սանձը և ընկել մի ինչ որ անզգացութեան մէջ: Յանկարծ նա լսեց մի ղեղձանիկի ձայն, որը ճ/թճ/թալով բարձրացաւ ու կորաւ օդի անհունութեան մէջ: Այս ձայնը շատ ակնորժելի թւաց և նա զգաց, որ լսողութիւնը աշխատանք է պահանջում: Կարիք զգաց իր ականջները շփելու: Սկսեց շփել: Բացց տաքացած մարմինն աւելի ու աւելի շփում էր պահանջում, իսկ լսողութիւնը ցոյց էր տալիս կարօտ՝ մի ձայն լսելու: —Գէւօ ջան, մի երգ չես կարող երգել, դարձաւ Ալէքսանդրը իր ուղեկցին:

Գէւօն, որ երկար ժամանակ սպասում էր և պարոնից մի խօսք էլ է չէր լսում, ուրախացաւ. ու շտապեց իր համաձայնութիւնը յայտնել:

—Ինչու չէ: Ի՞նչ երգ ես ցանկանում. կուզեմ աղջիկ պարոնի երգերից երգեմ, ժպտալով հարդրեց ծերունին, որ կամենում էր այդպիսի երգերով ուրախացնել ջահիլ ուղեկցին:

—Ինձ համար միևնոյն է:

—Լաւ, արտասանեց ծերունին ու սկսեց կեղծ աշխոյժով.

Սամաւարը տարան օդէն.

Նոր եմ դալիս եարիս մօտէն.

Չկշտացայ համ ու հոտէն:

Տնդլ-մնդլ չայ կը բերի.

Աւաթներով թաւաթներով,

Խունջիկ մունջիկ փունջ կը բերի:

—Գէւօ ջան, ես այդպիսի երգեր չեմ սիրում. չեմ կարող ինձ համար մի տխուր, շատ տխուր երգ երգել:

—Է՛, ի՞նչու, աղա ջան. դարդ մի արա. աշխարհում քանի կարող ես քեզ ուրախ, զւարթ պահի. ուրախութիւնն ուրախութիւն կը բերի, ցաւը՝ ցաւ:

—Ձէ, Գէւօ, իմ սիրտն այս բոպէիս մի շատ տխուր ու խեղացի երգ է ուզում:

—Ուրեմն աշղի խանդ ասեմ:

—Լաւ:

—Ուրեմն մի հին ֆէշիշ օղլի ասեմ:

—Կամքը քոնն է:

Գէվօն սկսեց հին ֆէշիշ օղլու եղանակով.

Մի զիպիր, Ֆալաք, մի զիպիր

Իմ կոտրած սրտիս.

Սիրտս վիրաւորւած բոցի է փարել:

Մի ժամանակ վարդ էի խաս պարտէզներում

Հիմա կոտրած սիրտս վարդաց փշի է փարել:

Էռլթիւնս բարակեց, մի մազից կախեց,

Դիպաւ Ֆալաքի սրին կոտր կտրաւեց,

Թշնամու ոտի տակ կոխ ու կիկոտեց,

Միթէ օրէնքն ու կանոնը զօրի են փարել:

Շիքաստա ֆէշիշ օղլին եմ, ինչ սեւաբախտ եմ,

Սրտիս միջում ծալծալ վերքով լցւած եմ,

Վշտերիս ատեն սիրածիս զանգատած եմ,

Մինչ սիրած կանչելս, լեզուս ցաւի է փարել:

—Ինչ հրաշալի երգ է, քեռի Գէւօ, խնդրեմ մի անդամ էլ այդ երգն ասես:

Մերունին կրկնեց նոյնը: Ալէքսանդրը թէպէտ պատրաստ էր նորից կրկնել տալու, բայց քաշեց ծերունուց:

—Միթէ ֆէշիշ օղլին անբախտ մարդ էր:

—Աղա ջան, աշխարհի բանը այնպէս է, որ լաւ մարդիկ միշտ անբախտ են լինում: Մի երգ ողորմած հոգին սկսում է այսպէս.

Դարձեալ եկաւ զարուն, սարեր բացւեցան,

Հոսում է գորշ, պղտոր հեղեղն ինձ համար.

Ուրիշների համար արեւ է ծագում, լուսինը շրջում—

Փչում է բուք, բորանը, քամին ինձ համար:

—Կեցցես ֆէշիշ օղլի: Գէւօ քեռի, ինչո՞ւ էր անբախտ. կարելի է կոյր էր, կամ կինը նրան դաւանանել էր, այդ^{տեղ} պատճառով:

—Ո՛չ, որդի ֆէշիշ. օղլին, մեռնեմ նրան, Գրիգոր Լուսա-
ւորչի, Գրիգոր Նարեկացու հաւասար մարդ է: Այդպիսի սրբերի
համար ինչ նշանակուիթիւն ունի կինը կամ աչքի կուրութիւնը.

նորա միշտ մտածում են հոգու և Աստուծոյ մասին: Նրանք անբախտ են լինում, երբ իրենց ազգն է անբախտ, և ուրիշներից ցան իրենց վրայ են առնում:

Ալէքսանդրը հազիւ հասաւ հօր լեզւին: Ծերունին փարեց որդու պարանոցովը և թուլացած վայր ընկաւ: Վերջին անգամ նա արտասանեց Վասիլիյ Օսիպովիչ Բեհբուլթով, խաչակնքեց որդուն և «Ժա» վանկը բերնին հոգին փչեց:

Ովանէս աղի յուզարկաւորութիւնը շատ հանդիսաւոր էր: Ամբողջ գիւղը՝ հարուստ ու աղքատ, ծեր ու երիտասարդ գնում էին անշուք դադաղի ետեւից: Վերջին ժամանակները գիւղացիք սկսել էին շատ սիրել ծերունի զինուորականին: Բոլորն էլ ընդունում էին, որ նա գիւղում մի մեծ ամբուլթիւն էր թուրքերի և քիւրդերի դէմ, որոնք նրա քաջութիւնից քաշւում էին: Վերջերումս երեւաց, որ Ովանէս աղէն շատ աշակերտներ էլ է ունեցել, որ գիւղի պատանիները մեծ մասով նրանից են օրինակ վերցրած եղել հրացանաձգութեան մէջ: Նրա ասածներն ու որսի ժամանակ արածները բերնէ-բերան էին անցնում և համակրական բացականչութիւններ առաջ բերում: Գիւղի բոլոր ծերերն էլ ընդունում էին, որ նա մի բարի օրինակ էր շէնի մէջ և որ նրանից հրացանաձգութիւն սովորած տղերանցով Խնութը կարող է սլարծենալ ու գլուխ պահել Թշառոցի նման մի առանտարան գաւառակում: Ալէքսանդրը լուռ ու տխուր, կռները խաչած, գնում էր դադաղի կողքից: Նրան տոչորում էր նոր ցաւը, անմոռանալի կորուստը և սրտաբեկ էր անում սիրած հօր վշտալի վաղճանը: Խեղճ ծերունի, մտածում էր նա, ես եղաց քո կորուստի պատճառը: Պատերազմները, գնդակներն ու ռումբերը, մահն ու արիւնը քեզ չընկճեցին, բայց մեռար սիրածդ որդու յիմարութեան և անխղճութեան պատճառով, որը թշառացրեց ծերութեանդ վերջին օրերը: Բայց, երբ շինականները թաղումից յետոյ դիմեցին Ալէքսանդրին մխիթարելու և շրջապատեցին, նրան յանկարծ թւաց, որ ամենքի աչքերն էլ կարծես ասում լինէին, դու ես այս մահւան պատճառը, դու սպանեցիր քո բարի հրեշտակ մօրը, գիւղի յոյս Աւանին, քաջասիրտ Մէլիք Սէթին,

անկաշառ տիրացու Վարդանին: Դու մեր գիւղը անբախտացրիր, վայր գցեցիր և լացի ու կոծի տուն շինեցիր: Այս մտածմունքից, նրա արիւնը խփեց գլուխը, այլևս չկարողացաւ նայել մարդկանց երեսին, իր ձեռքն աղատեց նրանց ձեռքերից, արագ դուրս եկաւ ամբոխի միջից ու աւանց այս ու այն կողմը նայելու գնաց դէպի տուն: Գերեզմանատնից հեռացաւ ու գիւղ մտաւ թէ չէ, կարծես չորս կողմից սկսեցին ձայնել. դու ես մեզ անբախտացնողը, ուր է Աւանը, ուր է Վարդանը: Յանկարծ նա իր աչքի առաջ տեսաւ Մէլիք Շէգօյի ուրւակները, որ փայտը քաշած կամենում էր նրան խփել ու պահանջում էր իր աւագ որդուն: Ալէքսանդրի սիրտն սկսեց այնքան արագ բաբախել, որ զգում էր, թէ քիչ է մնում պատառի. նա սկսեց ինքն իրեն մրթմրթալ. լես մեղաւոր եմ, ես մեղաւոր եմ, մինչև որ հասաւ իրենց տուն: Այն բակում ոչ ոք չկար նա սկսեց արագ անց ու դարձ անել նրա երկայնութեամբ: Նա կարիք զգաց իր մեղքերը խոստովանելու և ներողութիւն խնդրելու: Մի քանի րոպէում այս կարիքը նրա մէջ այնքան բուռն կերպարանք ստացաւ, որ կարիք զգաց բարձրաձայն բոլոր գիւղի, բոլոր մարդկութեան առաջ խոստովանելու իր մեղքերը: Նա ձեռքերը տարաւ իր երկար փափուկ մազերը, որոնք թափւել էին թւերի վրայ ու սկսեց ուժեղ նրանց դուրս տալ, պոկոտել և «վայ, վայ» գոռալ:

— Ես եմ մեղաւորը, եկէք ինձ սպանէք, գոչում էր նա և բռունցքներով իր գլխին ու ճակատին խփում: Մեղաց ձեր առաջ, ես ձեր խաղաղ կեանքը վրդովեցի, ձեզ մահ բերի, ձեր անբախտութեան պատճառը դառաւ: Արտասանելով այս խօսքերը նա վազ էր տալիս մեզ ծանօթ թթեմու տակ և իր գլխին ու երեսին զարկում:

Գարնան կարմիր արևը հեզ ու հանդարտ բարձրացել էր կապուտակ երկնակամարի վրայ և իր լոյսի ճաճանչների մէջ առել հեզ երկրագունդը: Օդը մաքուր էր ու յստակ և իր թափանցիկ սլարզութեամբ հեռու էր քշում ամեն մի ձայն: Առւալները, որոնց կողերը պատել էր գարնանային մոզ կանաչը, զլգլալով հոսում էին գետնի վրայ: Ծառերը նոր էին կոկոն տւել ու հազիւ սարու բերւում էին գարնան հովից: Նոցա վրայ ոստոստալով երգում էին փոքրիկ սարեակները: Արագիլը բարձր կանգնած հանդարտ ու հանդիսա կրկնում էր իր կըտկոտցը, մի խօսքով աշխարհը ընթանում էր ինչպէս միշտ, և խաղաղ ու հանդարտ աչքերով նայում մեր վշտաբեկ բարեկամի սրտեղութեանն ու աղաղակներին:

(Վերջը չափորդ համարում):

* *
* *

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Քանի ժամանակ քեզ չէի տեսել.
Հոգիս յոգնել էր կեանքի խաղերից.
Տեսայ քեզ. բայց մենք որքան ենք փոխւել,—
Հ'տք չէ մնացել անցեալ օրերից:

Այն հայեացքները, այն չար երգերը,
Այն լուռ, թունաւոր, հպարտ սրտերը,
Կեանքը մեզանից վաղուց իրա հետ
Քշել-տարել է հեռու և անհետ...

Հիմա զարուհը իր թարմ բոցերով
Քեզ հետ տանջում է իմ մատաղ հոգին.
Ա՛խ, ինչո՞ւ մենք էլ չենք ապրում, անդին,
Գարնան սրտերով, զարնան երգերով:

ԷԻՈՒԻՏԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Մշտնջենական շարժում, մշտնջենական, անվերջ կերպարանափոխութիւն... Մի վայրկեան դադար—երբէք: Ոչինչ չկայ կայուն, տեղական, ստեղծուած է քայքայելու համար, քայքայուած է նորից շինելու համար: Ինչ որ այսօր է, երէկ գոյութիւն չունէր. ինչ որ երէկ էր, այսօր այլ ևս չկայ: Անցեալն անցած է անդառնալի կերպով. ամեն իսկ նոր է, բայց և ամեն բան հին է...

Մետաֆիզիկական աշխարհայեցութիւնը ¹⁾ անկարող էր քննարկել այդ պարզ ճշմարտութիւնը: Ինչպէս կարող է մի բան հին լինել և միաժամանակ նոր: Ի՞նչպէս կարող են զրականը և բացասականը, դրութիւնը և հակադրութիւնը (թէզ, անտիթէզ) այդպէս հաշտել, միանալ: Ի մեծ զարմանք մետաֆիզիկաների՝ այդ միացումը տեղի ունի. «այո»-ն և «ոչ»-ը հաշտուած են:

Դա է այսպէս կոչւած «հակադրութիւնների նոյնութիւնը» փիլիսոփայութեան մէջ (Identité des contraires): Դիալեքտիկան, որ ուսումնասիրում է իրերը և երևոյթները տիեզերական յինամիզմի (շարժողութեան) մէջ, ցոյց տւեց Հնդկի հանճարեղ լեզուով, որ անշարժութիւնը բնական թէ հասարակական երևոյթների մէջ ցնորք է, որ այդ երևոյթները գտնուած են յաւիտենական հոսանքի և պատճառական կապակցութեան մէջ, ուր պատճառը և հետևանքը

¹⁾ Մետաֆիզիկա կոչուած է ուսումը գերբնականի մասին, այսինքն մի գիտութիւն, որը փորձերի վրայ հիմնուած գիտութեան (ֆիզիկայի) չետնը ծածկւած վերջնական պատճառները ճանաչել է ձգտում:

յաջորդաբար փոխարինում են իրար: Ռիալեքտիկան ցոյց տւեց այդ մեծ իդէալիստ փիլիսոփայի օրով, որ ամեն մի առարկայ կամ երեւոյթ, բնական, թէ հասարակական կեանքից, ամփոփում է իր մէջ իր բացասականը, որ նա ժամանակի մի որոշ մոմէնտում «այն է», և «այն չէ»:

Այդ հասկացողութիւնը բղխում է հէնց տիեզերական էությունից ինքին էութիւնից, որի համաձայն, ամեն մի առարկայ նոյն իսկ մի վայրկեան ժամանակամիջոցում ենթակայ է փոփոխութիւնների—լինի այդ առարկան մի ժայռ, մի ծառ, մի կենդանի, թէ մի հասարակական կազմակերպութիւն:

Այդ վերը յիշած հասկացողութիւնից բղխում է մի ուրիշ, նշանաւոր եզրակացութիւն, այն՝ որ Հեգելի ամեն բան կործանող դիալեքտիկայի ուժով ամեն մի քաղաքական կամ հասարակական կազմակերպութիւն (թէզ) պատմական որոշ մոմէնտում կրում է արդէն իր բացասականը, ամփոփում է իր մէջ ապագայ կազմալուծման սաղմերը (անտիթէզ). ասել է՝ այդ կազմակերպութիւնը արդէն մահւան է դատապարտւած և նրա դիակից պիտի մարմնանայ մի ուրիշ առողջ ու կենսունակ կազմակերպութիւն (սինթէզ), որ ժամանակի պահանջներին աւելի համապատասխան է:

Այս դրութիւնն է, որ անհրաժեշտաբար բղխում է Հեգելի դիալեքտիկայից. սակայն հանճարեղ փիլիսոփան քաջութիւն չունեցաւ հետևողական ու արմատական լինել և մինչև վերջը տանել իր գեղեցիկ արամաբանութիւնը: Նա ընկճեց իր ժամանակում տիրող նեղ, աւանդական հասկացողութիւնների ճնշման տակ և արդարացրեց բռնաւորի կամքը, սրբագործեց ժամանակակից վայրենի, ժողովրդասպան ուժիմը Պրուսիայում... Alles Wirkliches ist vernünftig. (Ամեն բան, ինչ որ գոյութիւն ունի, խելացի է):

Թողնենք Հեգելին, նրա մասին չէ, որ պիտի խօսենք: Էւուլյացիայի, հախախտարհային դինամիզմի (շարժողութեան) գաղափարը ունեցել է իր դարաւոր աստիճանական զարգացումը: Մեր նպատակն է մի ընդհանուր ակնարկ ձգել այդ զարգացման պատմութեան վրայ մինչև 19-դ դարու կէսը, երբ էւոլյուցիայի պատմութիւնը պսակեց Ռարւինի աշխարհահռչակ աշխատութիւնով, երբ, ինչպէս

ասում են, լուծւեց բոլոր հարցերի հարցը: Ապա մենք հանդամանօրէն զօնելով Պարւինիզմի շրջանը, կ'անցնենք անասնական թաղաւորութիւնից մարդկային աշխարհը, կը հետեւենք մարդկային հասարակութեան աստիճանական զարգացմանը իր գլխաւոր արտայայտութիւններէ մէջ:

*
* *

Ժամանակն անցաւ, երբ մարդիկ սնում էին զերբնական ստեղծագործութեան առասպելներով, երբ աշխարհիս բոլոր արարածները՝ բուսական, անասնական, մարդկային թաղաւորութիւնները համարւում էին մի-մի ինքնուրոյն, անկախ ստեղծագործութիւններ, որոնք երևան են եկել Ամենակարողի հօր կոչով:

Ժամանակն անցաւ, երբ տգէտ ու գիտուն հաւասարապէս հաւատում ու քարոզում էին հրաշքի զաղափարը:

Այո՛, նոյն իսկ բնագէտ-հետազոտողը, բնական երևոյթների ծակատաղրական օրէնքների դիմաց, խօսում էր «զերբնական յայտնութեան» մասին (révélation) — և հեռու չէ այն ժամանակը. վաղուց չէ, որ իշխէին բեմից Կիււիէ, Լիբիզ, Ագասիզ և այլն գիտնական հանձարները, որոնք թէև անհուն ծառայութիւն են մատուցել բնական զիտութիւններին, բայց և բերել են իրենց հետ ստեղծագործութեան որոշ գողմաններ, որոնց համար կատաղի ու մալեռանդ կռիւ են մղել, հակառակ նոր թէօրիւնների:

Լիբիզ՝ Գերմանիայի ամենամեծ քիմիկոսը քառասնական թուականներին, հաստատում էր, որ նախախնամութիւնը մեծ դեր է խաղում բնութեան երևոյթների մէջ, որ մարդկային ցեղի զարգացումը ոչ թէ էւոլիւցիայի օրէնքն է, այլ «քմահաճութեան» կամ «ողորմածութեան» արդիւնք: Նոյն քիմիկոս Լիբիզը պնդում էր, որ զիտութեան մէջ առանց «Ստուածային յայտնութեան» եօլա գնալ չենք կարող, որ սոսկ գիտական հետազօտութեամբ երբեք ճշմարտութեան չենք հասնի և անհրաժեշտ է անպայման զերբնական լուսաւորութիւն: Եւ այլն, և այլն:

Եւ Լիբիզի ժամանակակից համբաւաւոր ֆիզիոլոգ Մոլլըշոտ իրաւամբ կշտամբում է նրան. «էլ ինչի՞ են պէտք բնագիտական հետազօտութիւնները, — հարցնում է նա, — եթէ միայն նախախնա-

մութիւնը պիտի լուսաւորէ մեր միտքը և միայն այդ ճանապարհով մենք կարող ենք ձեռք բերել ճշմարտութիւնը. էլ ի՞նչ իրաւունք ունիք դուք, — զայրացած բացականչում է հռչակաւոր մատերիալիստը — ի՞նչ իրաւունք ունիք դուք ճառել «բնական օրէնքի» մասին, երբ միաժամանակ ընդունում ու հաւատում էք գերբնականին՝ Դա անմտութիւն է!... ¹⁾։

Բնագէտների աշխարհայեցողութեան մէջ տիրում էր դուալիզմը (dualisme) ²⁾ գերբնական հաւատալիքների հետ։ Նիւթը տարբեր էր, նրան ստեղծագործող ոչ ժը՝ տարբեր. առաջինը երկրիս մակերևոյթին, երկրորդը աներևոյթ ուրականի նման սաւառնում էր երկնային բարձունքների վրայ։

Ինչպէս տեսնում ենք, գիտութեան անունով նւիրագործւած գերբնական ստեղծագործութիւնը ոչնչով չի տարբերւում այն ստեղծագործութիւններից, որ ուսուցանում են մարդկութեան բազմատեսակ եկեղեցական կրօնները, նրանցից երեք գլխաւորները, որոնց հիմնադիրներն են Արևելքի ամենանշանաւոր մարգարէները՝ Մովսէս, Քրիստոս, և Մահմէդ։ Դրանց վարդապետութիւնների մէջ ևս մենք տեսնում ենք նոյն փիլիսոփայական դուալիզմը, ոյժի և նիւթի տարբեր, առանձնական հասկացողութիւնը։

Դեռ ևս կրօնական զարգացման ամենաստոր աստիճանի վրայ, այսպէս կոչւած անիմիզմի (animisme) շրջանում նախամարդը ամենուրեք հակւած է որոնելու բնական երևոյթների պատճառը մարդանման (antropomorph) ասուածների մէջ։

Լսւում է որոտի ձայնը, երևում է կայծակը — նա անպայման վերագրում է այդ անհատական, իր պատկերը կրող ասուածներին։

Մարդը զանազանում է բարի ու չար ասուածներ, թշնամի ու բարեկամ, ստեղծող ու կործանիչ, հրեշտակներ ու դևեր։ Այստեղ արդէն դուալիզմի տեղ իշխում է փիլիսոփայական պլուրալիզմը (Pluralisme)։

Կրօնական էւոլիւցիան առաջ է գնում, ասուածները թւով քչանում են, պլուրալիզմը (բազմականութիւն, բազմասուածու-

¹⁾ Jac. Moleschott, „Kreislauf des Lebens“.

²⁾ Դուալիզմ = երկուութիւն։

[Թիւնը) մնում է: Բարի ու աշխարհաշէն Յզիրիսի, Արամազդի, Վիշնուի դիմաց կանգնում են խաւարի ու չարութեան աստուածները՝ Տիֆոն (Նզիպտ.), Ահրիման, Սիւա—և ասպա մի անվերջանալի շարք սրբոց և առաքելոց, բարի ու չար կիսաստուածների, զրանց տղաների ու աղջիկների,—բոլորը համախմբւելով զլիսաւոր աստուածների շուրջը ընդհանուր համաձայնութեամբ կառավարում են տիեզերքը:

Այս բոլոր պլուրալիստական թէ դուալիստական սխտեմների մէջ մի հիմնական միտք է քայլում—մարդացման, անթրոպոմորֆիզմի (anthropomorphisme) միտքը: Աստուած մարդու կերպարանք է առնում, մարդը աստուծոյ և իբրև աստուծանման էակ կամ ուղղակի Աստծուց ծագած՝ մարդը մի բացառիկ դիրք է բռնում երկրի երեսին ու այդպիսով նրա և մնացած աշխարհի մէջ տեղը բացում է մի անանցանելի վիճ:

Փամանակի ընթացքում կազմւում է համոզմունք, որ մարդը տիեզերքի կենտրոնն է, ստեղծագործութեան վերջին ու բարձրագոյն խօսքը, և որ բովանդակ բնութիւնը սոսկ մարդու բարեկեցութեան համար է ստեղծւած:

Դա է այսպէս անւանւած «մարդակենտրոնութեան» (anthropozentrische) գաղափարը: Միջին դարերում դրա վրայ աւելանում է երկրակենտրոնութեան (geozentrische) գաղափարը, որի համեմատ երկիրը՝ իբրև մարդու բնակատեղին՝ կազմում է տիեզերական շէնքի ամուր միջնակէտը, որի շուրջը պտտում են արեգակը, լուսինը և աստղերը:

Ինչպէս Կոպերնիկը 1543 թ. ոչնչացրեց Սուրբ գրքի վրայ հիմնւած այդ առասպելը, նոյնպէս և Դարւինը 1859 թւականին մահացու հարւած տւեց մարդակենտրոնութեան դոգմային ¹⁾:

*
* *

Դուալիզմի և Պլուրալիզմի հետ կապւած է և թելեոլոգիական հասկացողութիւնը (Teléologie), որ նոյնպէս մեծ տեղ էր բռնում երբեմն բնագէտների աշխարհայեցողութեան մէջ: Թելեոլոգիան

¹⁾ Ernst Häckel. Der Monismus als Band zwischen Religion und Wissenschaft.

նպատակի կամ աւելի ճիշտ ասել՝ նպատակաշարմարութեան թերիւն է: Այդ թէորիայի համաձայն, Ասուած բնութիւնը ստեղծելու ժամանակ ունեցել է որոշ նախագիծ և ամեն բան ստեղծւել է որոշ կոչման ու նպատակի համար:

Այդ սկզբունքը զարձեալ ճակատագրական կերպով ուղեկցում է մեզ դէպի մի անհատական էակ, որ ճարտարապետական հանձարով զօծել է ընդմիշտ բնութեան ընթացքը...

Բերենք այժմ մի օրինակ, ուր շատ թէ քիչ գիտական ձևով բացատրւում է գերբնական արարչագործութեան պատմութիւնը և ապա վերջ տանք այդ խնդրին: Դա—ստեղծագործութիւնն է ըստ Ասուածաշնչի:

Թերևս զարմանալի թւայ, որ նոյն իսկ Շէդական յայտնի բնագէտ Հիմնէյ, որ նորագոյն բնագիտութեան հիմնադիր է համարւում, կողմնակից է ճիշտ Մովսիսական ստեղծագործութեան: Որտեղից—որտեղ: Մովսէս ապրում էր մօտաւորապէս 1470 թւականին Քրիստոսից առաջ, Լիննէյ ծնւեց 1707 թ. Քրիստոսից յետոյ: Բայց որքան նմանութիւն հայեացքների մէջ:

Շէդ-բնագէտը ասպարէզ եկաւ իբրեւ տեսակների անշարժութեան ներկայացուցիչ: Բոլոր կենդանական և բուսական տեսակները անկախ են իրարից—յայտարարեց նա, իսկ իւրաքանչիւր մի տեսակի բոլոր անհատները ծնունդ են առնում միևնոյն տոհմածառից (Stammbaum): Լիննէյին հարց են տալիս, թէ զորտեղից առաջացան արդեօք այդ նախնական ինքնուրոյն, տարբեր տոհմածառերը: Վերանք ստեղծւել են իբրեւ այդպիսիք—պատասխանում է Լիննէյ: Արարիչը ի սկզբանէ անտի ստեղծել է բոյսերի և կենդանիների առանձին-առանձին տեսակներ—ամեն մի տեսակից կամ մի անհատ, կամ մի զոյգ՝ արու և էգ: (Նոյն բանը ասում է Մովսէսը):

Լիննէյը ընդունում է նոյնպէս Մովսիսական առասպելը ջրհեղեղի մասին, ընդունում է, որ այդ «համատարած աղէտի» ժամանակ խեղդւում, ոչնչանում են բոլոր եղած մարմինները, բացի այն կենդանիներից (եօթը ջուխտ հալալ ու հառամ թռչուններ և ուրիշ կենդանիներ), որոնք Նոյեան տապանի մէջ վեր են բարձրանում և ջրհեղեղից յետոյ հաստատւում են Արարատի գագաթին:

Հայոց Արարատը գտնւելով տաք կլիմայում—ասում է Լիննէյ—

և լինելով 16,000 ոտնաչափ բարձր, ցուրտ կլիմային սովոր կենդանիները բնակութիւն են հաստատում լեռան լանջերին, իսկ ցրտին չդիմացողները (ենթադրւում է, որ տապանի կենդանիները տարբեր աշխարհագրական սահմաններից են եղել) լեռան ստորոտներում: Այստեղից և սկսում են նրանք տարածւել դէպի հիւսիս և հարաւ, ամբողջ երկրագնդի վրայ...

*
* *

Հրաշքի առասպելական թագաւորութիւնը յաւիտենական չէր: Գերբնական արարչագործութեան զոգմանները գիտութեան մէջ կամաց-կամաց կորցրին իրենց կենսունակութիւնը: Օր աւուր զուելով նախկին մոլորութիւններից և հարստանալով նորանոր գիտերով՝ առաջ եկաւ նորագոյն գիտութիւնը և իր բոլոր անցեալը ենթարկեց անողոք քննադատութեան:

Նա մի անգամ ընդ միշտ դուրս մղեց իր աշխարհից հրաշքի, «գերբնականի» գաղափարը, մահացու հարւած տւեց կրօնական բազմատեսակ հրահանգներին, դուալիստական, պլուրալիստական սիստեմներին, մարդակենտրոնութեան, երկրակենտրոնութեան դաւանանքներին, և ամենից առաջ հաստատեց միականութեան, «մոնիզմի» (monisme) վարդապետութիւնը:

Ի՞նչ է մոնիզմը: Այդ բառը շատ թիւրիմացութիւնների ու մոլորութիւնների տեղիք է տւել,—մոլորութիւններ, որ ընդունել են նոյն իսկ այնպիսի հեղինակաւոր անձնաւորութիւններ, ինչպիսին է Ն. Բեկտով,—ուս զրոյ Միխայիլովսկու տաղանդաւոր օպպոնենտը:

Նա իւր մի գեղեցիկ աշխատութեան մէջ, որի անունն է (եթէ լաւ ենք չիշում) „Къ вопросу о монистическомъ взглядѣ на исторію“—ասում է մօտաւորապէս հետեւեալը.

«Ամեն մի հետեւողական իդէալիստ նոյնքան «մոնիստ» կարող է համարւել, որքան և ամեն մի հետեւողական մատերիալիստը: Մի բան, որ հիմնականապէս սխալ է:

Մոնիստական թէորիան, որի գլխաւոր հիմնադիրներն են բնագիտութեան մէջ երեք գիտական աստղեր՝ Մոլեշոտ, Պոլստ, Բիւխնէր—(թէպէտ այդ թէօրիայի արմատները զեռ հին դարերում

պէտք է որոնել) ուսուցանում է, որ բովանդակ բնութիւնը՝ օրգանական, թէ անօրգանական՝ կաղմում է մի ամբողջութիւն, մի անբաժանելի միութիւն. մեզ շրջապատող բնութեան բոլոր բազմազան երևոյթները ոչ այլ ինչ են, եթէ ոչ բազմազան արդիւնքներ միեւնոյն սկզբնական ոյժի (Urkraft), բազմատեսակ կոմբինացիաներ՝ միեւնոյն սկզբնական նիւթի (Urstoff), որոնք առաջացել են սոսկ Ֆիզիկա-քիմիական պատճառներից: Դուալիզմ (երկուութիւն) չկայ: Ուր կայ նիւթ, այնտեղ կայ ոյժ, այնտեղ կայ շարժում, այնտեղ կայ կեանք: Նիւթ և ոյժ անբաժանելի են, մինը երթադրում է միւսի անհրաժեշտ ներկայութիւնը, կամ, եթէ Գեօթէի լեզուով խօսելու լինինք, Վիւթը երբէք առանց ոյժի, ոյժը երբէք առանց նիւթի չեն կարող գոյութիւն ունենալ ու գործել:

Արտաքսում է գերբնականը, արտաքսում են հրաշքի բոլոր հաւատալիքները: Այլ ևս չկայ այն վիճը, որ բաժանում էր մարդուն իրան շրջապատող բնութիւնից և մարդկային «գերագոյն» էակներին արտօնւած դիրք էր տալիս երկրագնդի վրայ: Զկայ բացարձակ սահմանագիծ (ligne de démarcation) անօրգանական և օրգանական թաղաւորութիւնների՝ քարի ու բոյսի, բոյսի ու անասունի ու ասունի մէջ. այդ փոխանցումների մէջ լիապէս արդարանում է Լիննէյի աքսիոմը՝ *Natura non facit saltus* (բնութիւնը ցատկումներ չի անում):

Մի է ամբողջ բնութիւնը, մի է ամբողջ տիեզերքը, ամեն բան միեւնոյն նիւթի կամ միեւնոյն ոյժի արտայայտութիւնն է: Նիւթը (matérie, Stoff) գտնւում է մշտնջենական էտրիւցիայի մէջ: Վեանք ասած բանը, սոսկ Ֆիզիօլոգիապէս վերցրած, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նիւթի յաւիտենական շրջանառութիւն. իսկ մահը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ շրջանառութեան անմահութիւնը— ասում է անմահ Մոլեշոտ ¹⁾:

*
* *

Ուղիղ մի դար առաջ գտնւեց ճշտագոյն կշռաչափի միութիւնը Լաուազէի, Լապլասի և ալոց ջանքերով:

¹⁾ Moleschott. „Kreislauf des Lebens“.

Այդ օրից քիմիական և ֆիզիկական գիտութիւնները մտան իրանց հսկայական յառաջդիմութեան շրջանը:

Քիմիկոս Լաւուազէն († 1894 թ.) սկսեց իւր փորձերը և նախ հաստատեց այն նշանաւոր ֆակտը, որ ոչինչ չի կորչում աշխարհիս բոսին, այլ միայն կերպարանափոխւում է: Մինչև այդ օր մարդիկ կարծում էին, որ այլևո՞ղ մարմինները պարունակում են իրանց մէջ մի աներևոյթ ոգի, որը անյայտանում է անմիջապէս մարմինը այլևեւուց յետոյ:

Լաւուազէն իր ճիշտ կշռաչափի օգնութեամբ և միմիայն նրա շնորհիւ ակներև ցոյց տւեց, որ ընդհակառակը՝ այլևեւու միջոցին մարմնի մէջ դրսից է ներմուծւում մի ինչ որ ոգի, և այդ ոգին է թթւածինը: Նա ցոյց տւեց, որ այլևո՞ղ մարմինները դեռ ծանրանում են: Այլու՞մ է փայտը—առաջ են դալիս ածխածինը, ջուր ու մոխիր: Հաւաքեցէք այդ բոլոր տարրերը, կշռեցէք—գումարը աւելի ծանր է կշռում, քան փայտի կտորը: Նիւթի կորուստ չկայ, նոյն իսկ նրա ամենափոքր մասնիկի:

Ինչ որ մարդկային մարմինն է արտադրում, բոյսերին է սնունդ դառնում, բոյսերը ոչնչացւում են բուսակեր կենդանիներից, իսկ սրանք կերակուր են լինում վայրենի զազաններին. վերջիններն էլ մահաւան դո՞հ դառնալով՝ նորից կաննք են տարածում բուսական աշխարհում:

Սա է նիւթի յաւիտենական փոխանակութիւնը (Stoffwechsel):

«Ինչպէս առեւտուրը հաղորդակցութեան հոգին է, նոյնպէս և նիւթի մշտնջենական շրջանը հոգին է տիեզերքի»—ասում է Մոլեշոտ (Kreisl. d. Lebens):

*
* *

Ուրեմն, զոյութիւն ունեցող նիւթի քանակութիւնը Constance է, այսինքն՝ յարատև է, մնայուն է, միշտ նոյնը, միշտ և անփոփոխ: Ծրանսիացի Լաւուազէն գտաւ քիմիական գիտութեան այդ հիմնական օրէնքը, իսկ աւելի ուշ, 19-րդ դարի կիսում, երկու նշանաւոր գերմանացիք՝ Ռոբերտ Մայէր և Հելմհոլց հիմնեցին «ոյժի կամ էներգիայի մշտնջենականութեան» (Erhaltung der Kraft) օրէնքը ֆիզիկայի մէջ, որի համեմատ համայն տիեզերքի

էներգիան, ներկայացնում է մի անփոփոխելի մեծութիւն: Եթէ մի որ և է ոյժ կորած է թւում, կամ նոր երևան եկած, — դա միայն ոյժի կերպարանափոխութիւն է, ուրիշ ոչինչ:

Այդ երկու մեծ օրէնքները — ասում է Հեկկէլ — ֆիզիկական և քիմիական երկու հիմնական օրէնքները ոյժի և նիւթի «մնայնութեան» մասին՝ մենք կարող ենք ի մի ձուլել և հասկանալ իբրև մի՝ փիլիսոփայական հասկացողութիւն, մի՝ օրէնք, — Սուբստանցի մնայնութեան (սուբստանց, զոյութիւն), որովհետև մեր մոնիստական բնահայեցողութեան համաձայն՝ ոյժ և նիւթ երկու անբաժանելի յատկանիշներ են միևնոյն Սուբստանցի ¹⁾:

*
* *

Այդպիսով, միմիայն նորագոյն բնագիտութիւնը կարողացաւ ըմբռնել նիւթի «բնական էությունիցի» ճանապարհը: Սակայն նա յաւակնութիւն չունի թափանցելու նիւթի ներքին էութեան մէջ: Խոչ է նիւթը an sich, (ըստ ինքեան), ինչպէս է նա առաջացել, գտէք արմատը, պատճառը պատճառաց. . . այդ տեսակ հարցերը նա թողեց լուծել աստուածաբաններին ու մետաֆիզիկներին:

Մեր գիտելիքները շարաբերական են: Նիւթի, ինչպէս և ամեն մի առարկայի էութիւնը մենք կարող ենք ըմբռնել միայն այն չափով, որ չափով նրանք ներկայանում են մեր զգայարաններին. արտօլիւտ, բացարձակ գիտելիքներ չկան, նրանք հիմնւած են մեր զգացողութիւնների (Sinn) վրայ, որոնք նրանց միակ աղբիւրն են: Հետազօտել մի առարկայ, մի երևոյթ, ասել է գտնել նրա յատկութիւնները: Այդ յատկութիւնները մենք գտնում ենք հիմնւելով այն տպաւորութիւնների վրայ, որ մեր արտաքին զգայարանները ստանում են այդ առարկայից: Մի անգամ որ գիտե՞ք իրի, երևոյթի բոլոր յատկութիւնները այդ ճանապարհով, — ապա ուրիմն գիտենք և նրա ներքին էութիւնը: Այս է ժամանակակից գիտութեան սահմանը. գրանից դէնը արդէն մետաֆիզիկայի աշխարհն է, այնտեղ սկսւում է կոյր հատար: Այդպիսով միանգամ ընդմիշտ որոշեց

¹⁾ Sieu Häckel, „Natürliche Schöpfungsgeschichte“ (Բնական ստեղծագործութեան պատմութիւն):

Ֆիզիկայի և մետաֆիզիկայի սահմանը, «Աւր հաւատը սկիզբ է առնում, այնտեղ վերջանում է գիտութիւնը»:

Երբ մենք մի շարք մարմիններից կամ երեւոյթների յատկանիշներից դուրս ենք բերում «ընդհանուրը» — մենք կազմում ենք օրէնք. բոլոր գիտական օրէնքները այդ ճանապարհով են կազմւում:

Կար ժամանակ, երբ աշխարհիս իմաստունները հաւատում էին, որ օրէնք ասած բանը մի պատգամ է, որ մարդկային բանականութիւնից է բղխում. իսկ բանականութիւնը ինքնուրոյն է, բնածին, անկախ արտաքին աշխարհից, արտաքին զգայարաններից: Այդ աշխարհացեցողութիւնը հիմքից կործանւեց: Այլ ևս հաստատուած է, որ ամեն մի միտք արտաքին տպաւորութիւնների մշակման արդիւնք է, որ կատարւում է ուղեղի մէջ. հաստատուած է, որ միաքը ուղեղային մոլեկուլային (moleculaire) շարժողութեան ծնունդ է:

Ohne Phosphor kein Gedanke — բացականչում է Մոլեշոտ. (առանց Ֆոսֆորի չկայ միտք), — իսկ Ֆոսֆորը ուղեղի բաղադրիչ էլեմենտներից մինն է:

Հարկաւոր է միթէ աւելացնել Մոլեշոտի կարծիքին և մի ուրիշ հեղինակաւոր ձայն:

Ականջ դրէք Կարլ Ֆոխտին, որ նոյնպէս գիտութեան պարծանքներից մինն է:

«Ամեն մի շատ թէ քիչ մտածող, հետեւողական բնախոյզ, իմ կարծիքով, անպայման պիտի գայ այն հասկացողութեան, որ մարդկային բոլոր այն ընդունակութիւնները, որոնց սովորաբար «հոգեկան գործունէութիւն» անունն են տալիս, մեր ուղեղային բաղադրութեան ֆունկցիաներն են, կամ, եթէ քիչ կոպիտ ձևով արտայայտենք՝ միաքը և ուղեղը նոյն փոխադարձ յարաբերութեան մէջ են, ինչպէս լեղին ու լեարդը, մէզն ու երկամունքները»:

Աւրեմն միաքն էլ նոյն անխուսափելի նիւթի շարժողութիւնն է:

*
* *

Նոր չէ սակայն այդ մոնիստական աշխարհացեցողութիւնը: «Արեգակի տակ նոր ոչինչ չկայ» — ասում է Ֆրանսիական առածը:

Հազարէկէսէն աշխարհի փրկութեամբ անցնող մարդիկ, որոնք մասամբ, աղօթ կերպով արտայայտուած չլինին երբ և իցէ. ամեն բան նոր է, բայց և ամեն բան հին է:

Դեռ 500 տարի Քրիստոսից առաջ նոյն մոտիվով միտքն արտայայտել է առաջին անմահ մատերիալիստը՝ Դեմոկրիտոս Իսկ նրանից յետոյ աւելի ևս կատարեալ կերպով — իտալացի Զորդանո Բրունո, որը և դրա համար անասուած հրատարակեց քրիստոնէական ինկւիզիտորներին կողմից և 1600 թւականին Հռոմում հանդիսաւոր կերպով այրեց խարոյկի վրայ...

*
* *

Ուրեմն, ամենուրեք նիւթ և նրա հետ կապուած ոյժ, շարժողութիւն, ամենուրեք նիւթի կերպարանափոխութիւն, հետլիւցիա:

Աշխարհը չի ստեղծուել, այլ աստիճանաբար փոփոխուել, զարգացել է:

Մարդն ևս պատրաստի չի արտադրուել, այլ դարերի ընթացքում նոյն էտոլիւցիայի, նոյն բնական անդիմադրելի և անսասան օրէնքների ուժով է առաջացել:

Բնական էտոլիւցիայի հիմնական սկզբունքն այն է, որ գոյութիւն ունեցող բոլոր մարմինները (organisme) ծնունդ են առել ու զարգացել միմիայն մէկ կամ մի քանի սկզբնական, հասարակ էակներից, և այն՝ ոչ թէ գերբնական ստեղծագործութեամբ, այլ առաջացել են անօրգանական նիւթից ինքնաբերաբար (génération spontanée): Վերջինս Հէկկելի կարծիքն է, որ, հարկաւ, վիճելի է:

Կեանքի ծագման մասին կան զանազան ենթադրութիւններ, դրանցից գլխաւորները երկու են:

Առաջինը ընդունում է, Անդրերկրային ծագում (origine extraterrestre), որի համեմատ սկզբնական նիւթը արդէն գոյութիւն է ունեցել տիեզերքի ուրիշ կէտերում (գիցուք երկնային մոլորակների վրայ) և օդերևոյթների (Meteor) միջոցով անց է կացել երկրագունդ:

Երկրորդ ենթադրութիւնը ընդունում է ինքնաբերական (spontané) ծագում. նրա գլխաւոր պաշտպաններն են գերմանացի Հեկկել¹⁾ և անգլիացի Հէքսլի²⁾: Սոքա պնդում են, որ անօրգանական նիւթը որոշ պայմաններում կարող է ինքնաբերաբար կազմակերպւել և ծնունդ տալ պրոտոպլազմին (protoplasme), որը ամեն կեանքի հիմքն է:

Նոյն հայեացքով էին ղեկավարւում հին ժամանակների ալքիմիստները (alchimiste), որոնք ճգնում էին կենդանի էակներ արտադրել:

Իսկ անգլիացի գիտնական Բաստիա վաղուց չէ, որ հրատարակել էր, թէ իրան յաջողել է միկրոբներ ստեղծել ինչ որ օրգանական հեղուկների մէջ:

Սակայն 19-դ դարու մէջ ինքնաբեր ծագման կողմնակիցների բոլոր ջանքերը փշրւեցին հռչակաւոր Պաստերի աշխատութիւններով, որը եղաւ միկրոբիոլոգիայի հիմնադիրը:

Ապացուցւեց, որ կենդանական օրգանիզմի բոլոր ներքին պարզիւնները առաջ են դալիս դրսից ներմուծած միկրոսկոպական ձւիկներից կամ սաղմերից,—ճիշտ այնպէս, ինչպէս որդերը այն ժամանակ են միայն զարգանում փշացած մսի վրայ, երբ ճանձները դալիս, դնում են այնտեղ իրանց ձւանները: Ապացուցւեց հետեւաբար, որ ամեն մի կենդանի արարած անպայման ծնունդ է առնում սաղմից և որ նիւթը երբէք ինքնաբերաբար չի կազմակերպւում:

Այդպիսով առաջին պրոտոպլազմի ծագման հարցը մնաց անլուծելի:

*
* *

Մինչդեռ գերբնական արարչագործութեան պատմութիւնները երևան են եկել անչիչատուսի ժամանակներում, հազարաւոր տարիներ առաջ, երբ մարդ կոչւած էակը դեռ նոր էր զուրս պրծել իւր

¹⁾ Պրոֆեսոր Լինալի համալսարանի, դարւինիզմի ամենահեղինակաւոր ու եռանդուն պրոպագանդիստը Գերմանիայում:

²⁾ Ssu Em. Jung. „Le peuplement de la terre“.

կապկային վիճակից,—դրա հակառակ՝ բնական էւռլիւցիայի թէօրիաները համեմատաբար աւելի ջահել են տարիքով:

Բնական ստեղծագործութեան գաղափարը կարող էր ծագել միմիայն այնպիսի մի հողի վրայ, ուր շատ թոյլ էր ընդհանրապէս կրօնի հեղինակութիւնը: Այդպիսի մի հող՝ ներկայացնում էր միայն հին Յունաստանը:

Թէօկրատիան (Théocratie), որ ծլել ու ծաղկել էր Արևելքի անշարժ ստրկահոգի ազգերի մէջ՝ բացակայում էր այստեղ:

Անհատի իրաւունքները չէին բռնաբարւում, միտքը չէր կաշկանդուում կրօնական սպանիչ շղթաների ստի:

Արձակ համարձակ կարող էր անհատը զբաղւել իր հետազօտութիւններով՝ փիլիսոփայական, բնագիտական, պատմական, հասարակական. կարող էր քննադատել առանց պատժելու, առանց խանդարելու: Ազատ էր Յունաստանը—բայց թող սխալ չհասկացւի մեր միտքը—ազատ էր նա միայն կրօնական կապանքներից:

Եղել են այն, այսօր էլ ևս եղել են բռնութեան, անհամբերողութեան սոսկալի տիպեր, եղել է, որ առաջին մեծ փիլիսոփայ Սորիքատեսը անարդարութեամբ ու աշառութեամբ մահւան է դատապարտել իր քարոզների համար, սակայն այդ դէպքում կրօնականը չէր մեղաւորը, այլ պատճառը քաղաքական անհամբերողութիւնն էր (intolérance):

Ծայրայեղ արսուլիւտիզմի աշխարհ էր Արևելքը—այդ բառը հասկանալով կրօնական ու քաղաքական տեսակէտից: Դրան հակառակ՝ ծայրայեղ ինդիվիդուալիզմի աշխարհ էր Յունաստանը. Հէգելի թեզը և անտիթեզն են այդ երկու աշխարհները:

Այնտեղ կրօնը և միահեծան բռնապետութիւնը ամեն բան էին. անհատը—ոչինչ: Այստեղ կրօնական ու քաղաքական հեղինակութիւնները գրեթէ ոչինչ. անհատը—ամեն բան:

*
* *

Յունաստանում ծնունդ տուաւ մատերիալիզմը, Յունաստանում ևս առաջին անգամ ձևակերպւեց բնական ստեղծագործութեան միտքը,—իրաւ է, սխալ կերպով, բայց խնդիրը այդ սխալի մէջը չէ: Արիստոտելն էր այդ առաջին ձևակերպողը: Նա ցոյց տւեց

քնական ճանապարհը, որով ծագել են առաջին ստոր մարմինները, որոշ կերպով արտայայտեց, որ թէ բոյսերը և թէ կենդանիները նիւթից են առաջացել, շնորհիւ այդ նիւթին յատուկ շարժողութեան: Ուրեմն կենդանիները և բոյսերը Արիստոտելի համար նոյն ծագումն ունէին. այդտեղ արդէն փայլում է էւոլիւցիայի միտքը, այդտեղ է վիթխարի փիլիսոփայի գլխաւոր բնագիտական ծառայութիւնը:

Բայց Արիստոտելը ուզեց լուծել և մի ուրիշ հարց՝ ինչպէս է արդեօք նիւթը մարմիններ արտադրում: Եւ այդտեղ նա ընկաւ նոյն մոլորութեան մէջ, որի ներկայացուցիչներն էին Բաստիան, ալշիմիստները և այլն:

Երբ չոր մարմինը թացանում է, կամ երբ թաց մարմինը չորանում է—ասում էր Արիստոտել—երկու զէպքերումն էլ մարմինը ընդունակ է կենդանի հակներ առաջացնել: Այդպէս օրինակ՝ ցեցերը ծնւում են բրդից կամ թաց փայտից, լուերը փթած աղբից՝ և այլն ¹⁾:

Էւոլիւցիական թէօրիայի հիմնական միտքը՝ որ բոլոր կենդանիների ու բոյսերի տեսակները մէկ կամ մի քանի սկզբնական մարմիններից են առաջացել՝ այդ միտքը Արիստոտելը գեռ չէր կարող արտայայտել շատ պարզ պատճառով. պէտք էր նախ ճանաչել այդ բազմաթիւ տեսակները (species), և որ գլխաւորն է՝ պէտք էր նոյնպէս գտնել մեռածները՝ հողային շերտերում մնացածները (հանածոյ), և ապա համեմատել, քննել բոլորը փոխադարձ կապակցութեան մէջ.— մի բան, որ գլուխ եկաւ միայն մեր դարու սկզբներում:

(Շարունակելի)

¹⁾ Shu Em. Jung, Le peuplement de la terre.

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՕՐԺԵՇԿՑ, ԷՂԻՂԱ.—Կախարդը. Թարգ. ռուս. Յովհ. Մեղնիկեան.
Ս. Պետերբուրգ . 1896 թ. 84 էջ, գինը 15 կ.

«Աչսօր իսկ մեր ժողովուրդի երեակալութեան մէջ զատարկ տեղ չկալ, բոլորը լցած է ոգիներով, աջնպէս որ ոտք դնելու տեղ չունի» ասում է պ. Աղալեան: Այս նկատողութիւնը ճիշտ է ոչ միայն մեր ժողովրդի համար, այլ և ամեն մի ժողովրդի՝ որ մերի օրումն է, նրա նման ազէտ է և նախապաշարած: Ամեն անգամ երբ մտքներովս անցնում է «ժողովուրդ» խօսքը, անմիջապէս նա իր փտեկից քաշ է տալիս և «խաւար» խօսքը. դժւար է մեզ համար նրան ուրիշ կերպ երեակալելը: Ժողովուրդը առհասարակ և տգէտը՝ մասնաւորապէս ապրում է դարերի ընթացքում մշակած տրադիցիաներով և սովորութիւններով, դարերի ընթացքում իւրացրած ձեռով է հասկանում իր չարն ու բարին, իրան և իր շրջապատը: Նրա հեղինակութիւնը, նրա նմանելու օրինակը իր նախահայրերն են. նրանց կեանքը՝ ժողովրդի երեակալած ամենալաւ կեանքը. ժողովուրդը միշտ ապրում է անցեալով և ափսոսում է ան-

ցեալը:—«Եթէ մեր տատերն ու պապերը հաւատացել են կախարդներին, նկատում է լրջութեամբ գիւղացի Պետրոսն իր օրդուն «Կախարդ»-ում, մենք նոյնպէս պէտք է հաւատանք երեւի ճիշտ է որ հաւատացել են»։ Կլասիք խօսքեր! Այս խօսքերը, սակաւն, միայն տգէտ ժողովրդի բերանում չեն... Երեակալեցէք ալժմ, որ աչսպիսի շրջանում ապրում է մէկը, որ աչսպէս չէ դատում, փոքր ինչ բարձր է համագիւղացիների բարոյական ու մտալին մակերևութից, մի քիչ ուրիշ կերպ է ապրում և ուրիշ բնաւորութիւն ունի. ինչ է մտածում գիւղացին աչսպիսի մէկի մասին: Նրա համար ալը մարդը մի անսովոր, օտար, խորթ արարած է, քանի որ իրանց նման չէ. տգէտ են ու չեն հասկանում թէ ինչո՞ւ չէ իրանց նման. նախապաշարած են, ուստի ալը բոլորը վերագրում են զանազան զօրութիւնների, աչն էլ՝ չար զօրութիւնների: Աչսպիսի մարդը սովորական մարդկանցից չէ, ալ «կախարդ» է, «հոգին սատանին ծախած»

է և ալլն, Ա. Լևիտովի Виселен գրաւածում հերոսներին մէկի՝ Իւանի հօրը կանչում են «կախարդ», իսկ իրան՝ Իւանին «փոխատուր» (որպէս թէ ծնւելիս երեսպալին չարքերը տարել են և նրա տեղը սատանայ գրել) որովհետեւ երկուսն էլ գիւղում աչքի էին ընկնում իրանց խելքով: Յայտնի է, որ Քրիստոսի կատարելութիւնը ըմբռնելու անընդունակ փորձեցիներն ու խուժանը նրա մէջ «ղե» էին տեսնում... Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել: Այդպէս է դատում խաւար ժողովուրդը իր կեանքում երեցած լուսաւոր երևութի մասին, նա ուրիշ կերպ դատել անկարող է աչն պաշտմաններում, որոնց մէջ գտնւում է:

Օրժեշկօր պատմածքի նիւթը հէնց վերը բերած երկու հակադիր տարրերի ընդհարումն է. աչդտեղ մեր առաջն է մի գիւղի պատկեր, որի բնակիչները տգէտ են և նախապաշարած և որոնց հետ ապրում է ամեն բանով գիւղացիներից բաւականաչափ բարձր մի ջահէլ կին՝ Պետրուսեան: Ամենից առաջ նա աչքի է ընկել իր նշանածին եօթ տարի հաւատարմութեամբ սպասելով, երբ վերջինս զինւոր էր ընկած. խելօք կին է և նման չէ գիւղացի կանանցից ոչ մէկին. շատ լաւ բանւոր է դաշտում և տնտես՝ տանը. մաքուր է պահում տունն ու երեսաններին և չափազանց սիրում ամուսնուն: Նրա ծագումն անպատ է. դեռ երեսպալ նրան տատը բերում է Ս. գիւղը, ուր իր աշխատանքով պահում է թէ իրան և թէ թոռան, սովորեցնում է նրան կարգալ-գրել, ճանաչել զանազան խո-

տեր ու նոցա զօրութիւնը և նրանցով բժշկել հիւանդներին, որով ինքն էր մի ժամանակ պարապում: Նրա ձեռքի տակ մնած՝ Պետրուսեան չի հաւատում կախարդներին, փալ բացանելուն և սրանց նման ուրիշ բաների. նա ազատ է շատ ու շատ նախապաշարունակներից, որոնց մէջ խրաւ են իր համագիւղացիները: Բախտն աչնպէս է բանում, որ Պետրուսեակի ամուսինը՝ Կովալ՝չուկը աշխատասէր, տոկուն, չխմող և իր երեսաններին ու կնոջը սիրող մի տղա է դուրս գալիս: Այսպիսի զոգը ուր ասես՝ կարող է երջանիկ լինել. երկուսն էլ լաւ ու սիրով աշխատում են և մաքուր ու կուշտ ապրում: Գիւղացիների խելքը չի կտրում՝ թէ ինչպէս բան է, որ Կովալ՝չուկը դարբին տեղովն իր կնոջ հետ համ լաւ ապրում է, համ էլ փողից-բանից մի քիչ ունի իր համար, իսկ իրանք «էլ էն ջուրն են, էլ էն ջաղացը»: Այս բոլորը զարմացնում է գիւղացիներին և մտքերը դէպի որոշ կողմ տրամադրում:

Տարին չորալին է, խոտը չի դուրս եկել, կովերը կաթից կտրել են. գիւղացիք մտածում են, որ անպատճառ մէկն իրանց կովերին կախարդել է. մէկ երկուսն ուզում են հասկացնել որ տարին է վատ, կախարդելը ինչ անի, բայց նրանց չեն լսում. չէ որ պապերը հաւատացել են. երևի ճիշտ է որ հաւատացել են: Ո՞վ է, ո՞վ չէ. որոշում են իմանալ: Դրա համար պիտի չորեքճամբին կրակ անեն գիշերով: Առաջին անցնող կինն է կախարդը: Այդպէս էլ անում են. կրակը վառած սպասում

են: Հանդարտ երեկո է. հեռւից լըս-
ւում է երգի ձայն և մօտենում է
Պետրուսեան: Նա գնում էր տուն:
Խօսում է, հանաքներ անում, ծի-
ծաղում ու թողնում գնում տուն,
ասելով, որ սպասեն իրանց կախար-
դին և ծիծաղելով, որ իրան կախար-
դի տեղ են դնում: Բայց գիւղացի-
ները գտել են կախարդին! Մի քա-
նի ղէպքեր էլ աւելի են հաստատում
ալդ կարծիքը. թնչն է Պետրուսեան
և իր ամուսնու հարստութեան պատ-
ճառը, թնչն է նրանց լաւ ապրելու
պատճառը, ինչ խօսք, որ Պետրու-
սեան կախարդ լինելը: Գիւղացի-
ներն սկսում են խուսափել դարբնի
Վնոջից, ամեն տեսակ բամբասանք-
ներ են դուրս սողում այս ու աչն
խրճից և լցնում փողոցը: Շփոթու-
թեան մէջ է նոյն իսկ Կովալ'չուկը,
խառնաշփոթութիւնը փողոցից դար-
բնի խաղաղ խրճիթն է մտնում և
խանգարում ընտանիքի երջանկու-
թիւնը: Կարողում նալում էք ձեր ա-
ռաջ բացւած տեսարանին և ան-
շարժ կանգնում. թնչ կարելի է անել,
ալդ հոսանքի առաջ իսկոյն ղէմ
դնել չի կարելի. նա պիտի առաջ
հոսի և ծածկի նրան ուժածակելու է...
Նախապաշարմունքը միայն մարդու
գլխում նստելով չի բաւականանում.
Նա ձգտում է դուրս գալ և
ազդել ղէպքերի վրայ: Գիւղացիներն
ալդպիսի գրգռւած դրութեան մէջ
գաւառական քաղաքն են գնում:
Գործով աչտեղ է գնում նաև Պետ-
րուսեան, Գիւղացիներից չորսը հար-
բած-տրաքւած ձիւն ձմեռը դառնում
են Ս. գիւղը. աչքները շաղւած՝ ոչինչ
չեն տեսնում և պտղտ են գալիս

միևնոյն բլուրի շուրջը. ճանապարհ
են փնտռում, կորել է: Ելի անիծւած
կախարդն է նրանց չփոթեցնողը!
Որտեղից որտեղ Պետրուսեան հէնց
ալդ ժամանակ տուն է դառնում:
Կատաղած գիւղացիները փախերով
զինւած գաղանների նման լարձակ-
ւում են խեղճի վրայ և անշնչա-
ցում. պատժեցին կախարդին! Ալդ
գործողութիւնը նրանց մի քիչ ուշքի
է բերում. գտնում են ճանապարհը և
տուն գալիս:

Ուժեղ տպաւորութիւն է անում
պատկերը: Օրժեշկո՛ն տաղանդաւոր
զրող է. աչս փոքրիկ պատկերն էլ
նրան պատիւ կարող է բերել: Գոյ-
ները ստաւր են, ևրեղութեան պատ-
ճառները բազմակողմանի և խմբած.
բացատրութեան կարօտ ոչ մի կէտ
չկայ: Ոճրագործութեան պատճառ-
ներն աչքներիդ առաջն է. աչն բո-
լոր տարրերը և նպաստող հանգա-
մանքները, որոնց պտուղն է սար-
սափելը ոճիւրը, ցոյց են տրւած: Չորս
գիւղացիներին, որպէս ոճրագործնե-
րի, դատապարտում են տաժանակիր
աշխատանքի: Կարողում էք և ախա-
մալ հարցնում. ինչո՞ւ, թնչ մեղաւոր
են: Միթէ կարելի է պատժել երե-
խային, որ պատուել է ձեռքն ընկած
թղթադրամը. միթէ նա հասկանում
է ալդ թղթի արժէքը: Նրբ մէկն ու-
ղում է ինձ վնասել, և ես վնասում
եմ նրան—ասում են՝ մեղաւոր չես:
Բայց չէ որ կախարդը ոչ միայն մե-
ղադրւած չորս գիւղացիներին էր
վնասել, ալ և ամբողջ գիւղին՝ կրտ-
րելով կովերի կաթը. նա տպագա-
լում էլ կարող էր ուրիշ վնասներ
ուալ, ուրեմն և գիւղացիները հան-

գիտտ չէին լինելու! Ի՞նչ անէին որ չսպանէին. նրանք մտածում են իրանց մասին, երեխաների մասին, տան մասին, գուցէ ե՛ր, ամբողջ գիւղի մասին... Նրանք մեղաւոր չեն: Որ և է լանցանքի կամ պատասխանատուութեան մասին միայն աչն ժամանակ կարող է խօսք լինել, երբ գործի, վարմունքի, արարմունքի մէջ լանցաւոր գիտակցութիւն կա: Քարը վաչր ընկաւ և ջարդեց անցորդին, չորս գիւղացի սպանեցին Պետրոսեանին. սրանք միևնույն կոտորակալի՝ կարգի երեւութեան են. ալտեղ ոչ քարը ոչ էլ գիւղացիները մեղաւոր չեն: Մեղսաւորը պիտի մօտեցնենք ոչ թէ զոհին ու զոհողին, այլ զիրանց պաշտանաւորող հանգամանքներին: Քարը վաչր ընկաւ բնական օրէնքով, մարդն անցաւ և ջարդեց. ոչ ոք մեղաւոր չէ. կարելի է ցաւել, ափսոսալ, ինչ ուղում էք անել, բայց դատապարտելու ոչ ոք չկալ ալտեղ. ի՞նչ կարող էք անել բնական օրէնքին, որ մարդկանցից չի կախած: Երկրորդ դէպքում էլ գիւղացին չէ մեղաւորը: Այս գործում ուրեմն դատապարտութեան արժանի ոչինչ չկալ. ո՛ւր միայն պիտի ժպիթքի ուրեմն աչն կատաղութիւնը, որ դիզում է մեր ցաւախոց սրտերում. ո՞վ և ի՞նչն է մեղաւորը: Այս ախպիսի հեշտ հանելուկ է, որ չարժէ լուծել...

Ափսոս որ գրքովը դժւար կարող է մատչելի լինել ժողովուրդին ոչ թէ նիւթի, այլ թարգմանութեան կողմից: Վալով թարգմանութեան պէտք է ասել, որ աչնքան էլ չաջող չէ. լաւ հալերէն չէ լեզուն: Երկու տեղ թարգմանիչն ուղղակի չի կարողա-

ցել հալերէն արտաւայտել հեղինակի միտքը. մի դէպքում չի հասկացել երևի, միւս դէպքում բառ չէ ունեցել: «Ա. Գիւղը բաղկանում էր... քառասուն բողբոջ» (էջ 5). բազմաթիւ հաւանօրէն ուսուրէն ճօճք խօսքի տեղ. բազմաթիւ բազմաթիւ կարելի է գործ ածել. պիտի լինէր՝ «տուն»: «Պետրոսը... հանելով գրպանից կաշեքարն ու սպունգը, սկսեց կրակ վառել» (էջ 10). կաշեքարի հետ գործ են ածում դաւ, արէթ, բազմաթիւ առաջին անգամ ենք լսում, «Ալիմէնտը ծիանը ուղղեց դէպի ձախ» (էջ 80). ձիանը չգիտակի է մի գաւառաբառաբառում. «ձի» խօսքի սեռականը «ձիու» է: «Նա... մինչև անգամ չի էլ նկատեց, ինչպէս բակի դուռը բացւեց...» (էջ 59) պիտի լինէր՝ «չնկատեց էլ»: Մեր լեզուն կարող է պարծենալ իր ձալանման խօսքերով. չի կարելի ասել «ձանձների վզվզոցը» այլ՝ «բզզոցը»: Մեզ պատահեց աչպիսի նախադասութիւն. «...թէպէտ ես չեմ հաւատում այդ կախարհութիւններին, բայց՝ տատիկը կատարելիս՝ շատ եմ տեսել: Աչժամ ես էլ կարող եմ անել...» (էջ 36) կամ թէ. «...փախտերը բարդի են, այն տեսակի ծառից, որի վրայ կախեց մեր Տէր Յիսուսին մատնող Յուդան» (էջ 11): Գրքովը տառաւորաւորութեամբ է տպած. մի տառաւորաւոր փշագնում է մինչև անգամ նախադասութեան միտքը. «...սպասում էր միայն, որ մեծանաս, կազմաւորուեց տեղը կայ, և ապա ամուսնանալ...»: անշուշտ ընդգծած խօսքի տեղ պիտի լինի՝ «գալ»: Տպագրութիւնը մաքուր է և գինն ամառ:

Ն. Աղբալիանց:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Յիշեալ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը կազացաւ մարտի 22-ին, քաղաքային խորհրդարանի դահլիճում, երեկոյեան, և տեղեկ մօտ ժամ 8-ից մինչև կէսգիշերից անց: Այս տարւալ ընդհանուր ժողովը անցեալ տարւանից աւելի բազմամարդ էր. անցեալ տարի ժողովականների թիւը հասաւ 69 ի, ալս տարի մինչև 120-ի: Պատճառը հետեւեալն էր. ընկերութեան վարչութիւնը և խմբագրական մասնաժողովը, որոնք իրենց կազմով ամենասերտ կապեր ունին Մշակ լրագրի հետ, իրենց վտանգւած էին զգում ալն բանով, որ ընկերութեան մի խումբ կարեւոր անդամներ իրենց համերաշխութիւնը կտրել էին նույա հետ: Այդ պատճառով ընկերութեան վարչութիւնը չատուկ պատրաստութիւններ էր տեսել մտածելով միմիալն ընտրութիւններին չաղթութիւն տանելու համար: Շնորհիւ ալդ բանի, ընդհանուր ժողովի դահլիճը լեցւեց մեծագոյն մասամբ ալնպիսի անհատներով, որոնք իրենց հասկացողութիւնով ու զարգացումով լուրջ վիճաբանութիւնների հետեւելու դրականապէս անընդունակ են և որոնք ժողովներում պէտքական են միմիալն ընտրողական արկղներին մօտենալով՝ տրւած հրահանգի համեմատ սե-սպիտակ գնդակներ գցելու և կամ, բաց քէարկութիւններին, նստել-վերկենալու՝ իրենց առաջնորդների տւած նշանի համաձայն: Ժողովը սկսեց ընդհանուր ժողովի նախագահի ընտրութիւնով. հին վարչութեան կուսակիցները առաջարկեցին պ. Սամսոն Յարութիւնեանցին. ընդդիմադրականները՝ պ. Աւետիք Արասխանեանցին. զաղտնի քէարկութիւնը ցոյց տւեց որ, ժողովը բացելիս, առաջինները ունէին 64 ձայն, ընդդիմադրականները 24 ձայն: Թէ ժողովի վերջում որքան էին վերջիններա՝ ալդ անկարելի և դաւ իմանալ, որովհետև ոմանք զոցանից չմասնակցեցին վարչութեան և խմբագրական մասնաժողովի անդամների ընտրութիւններին, և երկրորդ՝ որովհետև քէարկողները միմիալն մեծամասնութեան առաջարկածներն էին: Ընդդիմադրականները, սկզբում 24, ժողովի ընթացքում պէտք է աճած լինէին մինչև 40 հոգի, որպէս ալդ ցոյց տւին բաց քէարկութիւններից մի քանիսը. իսկ վարչութեան մեծամասնութիւնը՝ 80—90 հոգի: Ընդդիմադրականները բոլորն էլ, առանց որ և է կողմնակի խառնուրդի, կուսել են չառաջդիմու-

Թեան դրօշակի տակ ալս վերջին տարիների բոլոր կուսակցական պաշարներում ընդդէմ չետադիմականներէ:

Ժողովի գլխաւոր պարապմունքները եղան՝ 1896 թւականի տեղեկագրի քննութիւնը, հերթով դուրս գնացող պաշտօնատար անձերի ընտրութիւնը և իբրեւ չափաբարձ օրակարգից դուրս խնդիր՝ վարչութեան և պ. Շիրաւնդադէի մէջ եղած մի վէճի մասին բացատրութիւնները:

Տարիներ առաջ, երբ հարկաւոր էր Հրատարակչական ընկերութիւնը ազատել նորան մահացնող ձեռքերից, Մուրճ՝ը թէ չորդորել է և թէ ջերմ էջեր է նւիրել ողջունելով չառաջդիմական կուսակցութեան մուտքը ալս ընկերութեան մէջ և շնորհատրել ալս չաջողութիւնը, որ ունեցաւ նա ընկերութեան ղեկը իւր ձեռքը զցելով: Սկզբի շարժումը սկսւեց Մուրճ-ը հիմնած տարին, 1889 թւականին: Մեծ թւով (ալս տարի ներկայ եղած մօտ 80 հոգին) անդամ զրելով՝ չառաջդիմականները տէր եղան ալս տարալ ընտրութիւններին, և ստացւեց ալս արդիւնքը, որ 1889-ին վարչութեան և խմբագրական մասնաժողովի անդամներ եղան՝ մեծ մասամբ հները, որոնք ալս տարի վերընտրելի չէին և մասամբ նորերը, իրանց հակառակ ուղղութիւններով: Ալս պարագաներում մի քանի նորերը ոչինչ չլարողացան առաջացնել, և ընկերութեան ալս տարալ գործունէութիւնը գրեթէ դերօ եղաւ (մի հատ տասը կուպէկանոց թարգմանական զրքով):

Յաջորդ 1890 թւականին եռանդը պակասել էր. ընդհանուր ժողովում ներկայ էին միալն 40 հոգի: Ալս տարալ ընտրութիւնները սակալն շատ անգոլն եղան, և բացի դորանից, մանաւանդ վարչութիւնը և նորա ղեկը մնաց հինը—գրեթէ անփոփոխ. խմբագրականը մասամբ փոփոխւեց, բալց ընդհանուր դրօշմը հինն էր: Ալս տարի հրատարակւեցին միալն 2 դիրք (1 ու. 90 կուպ. արժողութեամբ):

Վերակենդանութիւնը եղաւ 1891 թւականին, երբ, օղնութեամբ բաղմաթիւ նոր անդամների, ընկերութեան ղեկը վերջնականապէս խւեց հներից և անցաւ նորերի ձեռքը: Ալս ալն է, ինչ շարունակուում է մինչև ալսօր, և եթէ վարչական ու խմբագրական մասնաժողովի մէջ եղել են փոփոխութիւններ, ալս եղել է միալն մասնաւոր կերպով, և մի անձ փոխարինել է միւսին—միննոլն կուսակցութիւնից:

1891-ի ընտրութիւնների առիթով, որ չափազանց աղմկալի եղան և չալնի եղան խոշոր խնդրկենաներով (որոնց մասին տես Մուրճ 1891 թ. № 5), նոլն ալս էջերում մենք զրում էինք:

Ալս համուլած եմ, որ մեր հատարակական դրութեան մասին արտի խորքից ցաւող և ընդունակ մարդկանց ձեռքում հոլն իսկ

մի հրատարակչական ընկերութիւն, որը մինչև այժմ հասարակութեանը աւելի չափնի է իւր ընդհանուր ժողովների աղմուկների չնորհիւ, իւր ցալման ոչնչութիւնից կարելի է բարձրացնել մինչև հասարակական կարևոր հաստատութեան աստիճանը: Օրինակ հէնց թարգմանութիւնների նկատմամբ՝ նա կարող է Յարգմանչափան զործը կազմակերպել: մեր ինքնուրոյն գրողների համար, որոնց վիճակի թշուառութիւնը յայտնի է, նա կարող է դառնալ մխրճարութեան և խրախուսի աղբիւր: Համաձայնեցնել այդ կարիքները հասարակական ընթերցանութեան արդի պահունջների հետ—ահա մի խնդիր, որի բաւարար լուծումը պատիւ կը բերէ ընկերութեան զեկավարներին...

...Կը սպասենք ուրեմն մի-երկու տարի և միայն աչն ժամանակ նորից կը վերադառնանք՝ աչ խնդիրը քննելու համար, թէ նորընտիր խմբագրական մասնաժողովը, որին և պատկանում է ընկերութեան իսկական նպատակների իրագործումը, որքան ընդունակ գտնեց մի որոշ ծրարով գործելու ե: ընկերութեան պատի աստիճանը բարձրացնելու հասարակութեան աչքում:

Այդ տողերը ուղղւած էին ամբողջ լատալդիական բանակին և դեռ ամենից առաջ մեր աչն ժամանակաչ բարեկամներին, քանի որ թէ վարչութեան նախագահը և թէ խմբագրական մասնաժողովի անդամը, որը նորա նախագահը եղաւ, մեր աչխատակիցներին էին:

Մեր խոստումները կատարում ենք. ճիշդ է, «մի-երկու տարի» չէ որ սպասել ենք, աչ... ամբողջ վեց տարի: Սե պէտք է ասենք, որ աչ վեց տարաչ գործունէութիւնը բնաւ չի համապատասխանել մեր սպասած արդիւնքին: Անցեալի հետ համեմատութիւնը անտեղի է, չառ հասկանալի պատճառներով. պէտք է վերցնել վեց տարիների գործունէութեան արդիւնքը և տեսնել որքան նա պատկառելի է, որչափով նա նշանաւոր գործունէութիւն կարող է համարւել:

Սակաչն ինչպէս չափել մի հրատարակչական ընկերութեան գործունէութիւն. պարզ է որ աչտեղ մեծ բան չունի ասելու ընկերութեան անդամների թիւը, գրքերի տպագրութիւնն է զլխաւորը, քանի որ նորա համար է որ ընկերութիւնը գոլութիւն ունի: Բաչց որովհետեւ ամեն մի շնչին բրոշիւր գիրք է կոչում, ուստի գրքերի թիւ հետ պիտի իմանալ թէ որքան արժէքի գրքեր է կարողացել տպագրել ընկերութիւնը ամեն տարի, 1891 թւականից: Տեղեկաղրի տպագրւած ցուցակը տալիս է մեզ աչդ նիւթերը.

1891 թ.	տպւեցին	16	գիրք, որոնց արժողութիւնն էր	4 ռ.	82	կոպ.
1892	»	18	»	»	8	» 25
1893	»	12	»	»	5	» 70
1894	»	12	»	»	5	» 35

1895	»	18	»	»	»	10	»	58	»
1896	»	14	»	»	»	4	»	74	»

Մի ամբողջ ընկերութիւն, վարչական և խմբագրական մարմիններով, մի քանի հարիւր անդամներով, արտադրել է վերջին տարին 4 ու 74 կ. գրքեր, աշխնքն գեռ աւելի էլ պակաս, քան անդամին իրաւունք է տըրւում գրքեր վերցնել. անդամը իրաւունք ունի 5 ուրբալ գրքեր վերցնել և նա տարաւ ընթացքում հրատարակած գրքերի մէջ ոչ միայն ընտրութիւն չունի անելու, ալ և բոլոր հրատարակած գրքերը միասին առած չեն կազմում նոյն իսկ անդամավճարի (6 ու.) գինը: Չէ որ անդամը մի տեսակ բաժանորդ է, մի գնող, որը գրքերի գինը վճարում է գեռ գրքերը չհրատարակած: Եւ բաւական չէ որ միայն 6 ուրբալ գրքեր հրատարակւած լինեն, ալ պէտք է գրքերը աչնքան բազմատեսակ և աչն քանակութեամբ լինեն, որ ալ և ալ կարգի ընթերցողներ կարողանան իրենց չարմար գրքեր վերցնել. մինչդեռ ալժամ բոլոր հին անդամները ստիպւած են միևնույն գրքերը վերցնել:

Իբրև մի ընկերութեան գործունէութիւն—արդիւնքը շատ չնչին է: Չնչին լինելը աւելի ևս շօշափելի կը լինի, եթէ մտաբերենք, որ նոյն իսկ ութսունական թ. ազաններին ընկերութիւնը կարողանում էր հրատարակել գրքեր ներկալիս կէսի չափ. օրինակ, 1880-ին հրատարակւած են 1 ու 65 կոպէկի, 1885-ին՝ մօտ 4 ուրբալ (ճիշդը 3 ու 95 կ.), Եւ եթէ 1884-ին ոչինչ չէ հրատարակւած, իսկ 1889-ին նոյնպէս գրեթէ ոչինչ,—դորա փոխարէն ընկերութիւնը պահած էր 3.000 ուրբալի գրամով, որը մնաց նոր վարչութեան կարգադրութեան տակ, որ և արտապատեց 1891 թ. 1892 թ. ազանի համեմատապէս աւելի առատ հրատարակութիւններով:

Եւ սակաւն ամենքին հասկանալի է, երբ ընկերութիւնը կատարելապէս մեռած է հռչակում, երբ խօսքը գալիս է ընկերութեան գործունէութեան ութսունական թ. ազաններին: Քանի-քանի անգամ ալ մենք ինքներս ենք վկայել, և նոյնը ասում ենք աչօր էլ:

Արդ, երբ 2—4 ուրբալ գրքեր հրատարակելը մեզ աչնքան չնչին է թւում, որ ալդ գործը պատրաստ ենք մեռելութիւն, չգոյութիւն հռչակելու, ապա պարծենալու մեծ բան չկալ, երբ նոյն ընկերութիւնը աչօր արեւկան սովորաբար 4-ից մինչև 5—6 ուրբալ գիրք է հրատարակում:

Քանակի կողմից ալ ճշանակում է, որ ընկերութիւնը, որը վարչութեան ձեռքում, չի արդարացիւ աչն չուերը, որ կապւած էին ընկերութեանը վերակենդանութիւն տալու շարժումների հետ: Եթէ հաշի առնելու չլինենք 1892 թ. ազանը, որին օգնել է հին վարչութիւնից ստացած 3000 ուրբալի կանխիկ գրամը, ընկերութիւնը իւր սովորական միջոցներով հրատարակել է տարեկան $4\frac{1}{2}$ — $5\frac{1}{2}$ ուրբալ գրքեր, միակ բացառութեամբ 1895 թ. ազանի, երբ հրատարակել է 10 ու 58 կոպէկի:

Այս վեց տարիներում ընկերութիւնը, ինքնուրոյն գրական գրածքների նկատմամբ ցոյց է տուել իրեն կատարելապէս անընդունակ որ եւ է դործ առաջացնելու թող մեր ընթերցողները դատեն. ահա ինքնուրոյն բեղլետրիստական գրածները, որ հրատարակել է ընկերութիւնը ամբողջ վեց տարում:

1) Խարաղի տղայ 1893 թ. (Ս. Քամալեանի). 2) Խուռ-խոր նոյն 1893 թ. (Յ. Ղազարեանի). 3) Հագարից մէկը 1893 թ. (Ն. Մամիկոնեանի). 4) Ընկերասէր վահանը 1896 թ. (տիկ. Ս. Յակոբջանեանի). Եւ այսքանը—ամբողջ վեց տարիներում. այստեղ քանակը իսո ծիծաղելի է, բայց մանաւանդ որակը... դա մի կատարելա մասխարութիւն է հազ գրականութեան վրայ:

Այս երեւոյթը պատահական չէ. դա ունի իւր խորը պատճառները. նա կապ ունի ալն ոգու հետ, որ Մուրճում անաւանած էր 80-ական թւականների ուղղութիւն մամուլի և գրականութեան մէջ, որը կամենում է հակառակել ամեն գրական շարժման. այդ ոգին հաստատ արմատներ է գցել կուսակցութեան ալն մասի մէջ, որի ներկայացուցիչն է այսօր Մշակ լրագիրը: Մուրճի ալս տարւալ համարներում այդ իրողութիւնը բաւականաչափ լուսաբանւած է, այստեղ նորից այդ խնդրին վերադառնալու կարիք չկալ. ընթերցողները գորա լրացումը կը գտնեն մի ալլ լօղածում, նւիրած Մշակի խմբագրական աշխատակից պ. Լէօին, ամսագրի նոյն ալս համարում: Այդ նոյն ոգին տիրապետող է դառել նաև Հրատարակչական ընկերութեան մէջ, ուր առաջնորդող դերը ալս վերջին տարիներս պատկանել է պ. Վ. Լուսկիսիչին, խմբագրական մասնաժողովում: Այդ պարոնը, որը, կրկնում ենք, զեկավարող դեր է կատարել ալս վերջին չորս տարիներում, չրջապատւած Մշակի աշխատակիցներով, մարտի 22-ի ընդհանուր ժողովում, Մուրճի խմբագրի կշտամբանքներին ինքնուրոյն հեղինակութիւնների առիթով, պատասխանեց ամենակատեգորիկ կերպով. «Յոյց աւէք մի գրւածք հազ գրականութեան մէջ, վերջին տարիներից, որը գերազանցէր մեր մերժած ձեռագիրներից» թէ որքան խորը արհամարհանք էր լալտնում դորանով 90-ական թւականների հալոց գրական շարժման, ալդ կարելի էր եղրակացնել նրանից, որ ընկերութեանը ներկայացրած ինքնուրոյն հեղինակութիւններից դեռ լաւագոյնները նոքա են եղել, որ մենք վերը վիչեցինք, և որ հետևապէս 1896 թ.-ին ընկերութեան հրատարակած միակ ինքնուրոյն գրւածքը—«Ընկերասէր վահանը»—պ. Լուսկիսիչի հասկացողութեամբ, մեր անցեալ տարւալ գրականութեան լաւագոյն գրւածքն է!...

Ինչ սկանդալ մի հալոց հրատարակչական ընկերութեան մէջ!...

Եւ Լուսկիսիչ, չրջապատւած Մշակի խմբագիրներով և հետևողներով մատասակեց ծալահարութիւններ. և ալդ բոլորը սլաքներ էին, որոնց ուղղութիւնը պէտք է որոնել Մշակի մէջ, ալն լօղածներում, որոնք որ և է

վերաբերումն ք ունին հաչ հեղինակներին առհասարակ և մասնաւորապէս Մուրճին:

Բայց որպէս զի ժողովի մեծամասնութեան մի ալգպիսի դաւանանքը անպատ չկորչի, ժողովը ընդդիմադրական անդամներից մէկը պահանջ արաւ, որ Լուսկուիչի չաւտարարութիւնը մտնի արձանագրութեան մէջ:

Այսպէս է գործել Հրատ. ընկերութիւնը ինչ որ վերաբերում է ինք. նուրոյն հեղինակութիւններին: Այսինքն՝ նա, ալգ հալիական գրական ընկերութիւնը, աշխատել է, որքան միայն կարողացել է, ծաղրել հալիական նոր դեղարեւոտական հեղինակութիւնները, փոխանակ ծառայելու հալիական նոր գրական շարժման:

Այսպէս չէ վերաբերել նա դէպի անցեալի հեղինակութիւնները. բայց աչտեղ ընկերութիւնը ղեկավարել է գլխաւորապէս շահադիտական միտումներով. նա արտատպել է աչնպիսի գրաւծներ, որոնց վաճառումից նա ակնյաւտնի կերպով գրամական շահ էր սպասում. նա արտատպել է Պարոն. եանի «Մեծապատիւ մուրացկանները» (2 անգամ), «Ալգպիւն ջոջեր»-ը (2 անգամ), «Հոս-հոսի ձեւատետրը»։ նա արտատպել է (նոյն իսկ առանց գիտութեան հեղինակի) Խրիմեան Հալրիկի՝ Դրախտի ընտանիքը, (2 անգամ), Սիրաք և Սամուէլ (2 անգամ). նա արտատպել է Աղաչեանցի «Ներուքոյր»-ը, Շիրաւնդադէի «Վէպիկներ»-ը: Ալգ արտատպումների մէջ ընկերութեան ղեկավարների ուղղը չէ որ գործել է, թէն բնաւ չենք կասկածում, որ նոյն իսկ ալգպիսով ընկերութիւնը որ և է ծառայութիւն մատուցել է, բայց մի ծառայութիւն, որը ընկերութեանը պատիւ չէ աւելցնում: Ալո, կան ծառայութիւններ, որոնք օգտակար են, բայց ոչ պատիւ աւելցնող: Ալգ շարքում դրէք նաև Պալաւանեանի «Հալոց պատմութեան» 2-րդ տպագրութիւնը 1895 թ. որի առաջին տպագրութիւնը լոյս տեսաւ 1890-ին, հին վարչութեան օրօք:

Այսպէս է եղել 6-ամեալ գործունէութիւնը հալիական հեղինակութիւնների նկատմամբ: Ուրախութեամբ աւելցնում ենք զորա՝ վրաչ Արշ. Չոպանեանի «Պետրոս Դուրեան»-ը (1894 թւականին). ահա մի գործ, որի նկատմամբ կարելի է ասել թէ նոր կազմը ինքնուրոյն խելք է բանեցրել: Միակ դէպք—ամբողջ 6 տարում!

Թող ընթերցողը չկարծէ թէ ես դիտմամբ ստուերներ եմ որոնում. ընկերութիւնը աչս վեց տարիներում աչնուամենայնիւ մի քանի ծառայութիւններ մատուցել է. ամենաչն սիրով չիշատակում եմ նորա գործունէութեան գրական արդիւնքներն եւս: Արտատպել է Գարոգաշեանի Քենական Հալոց պատմութեան առաջին հատորը և առաջին անգամ տպել 3 միւս հատորները: Հրատարակել են Յսվհաննէս խան Մասէհեանի թարգմանութեամբ Շեքսպիրի Համլէտ, Ինչպէս կ'ուղէք, Ռոմէօ և Ջուլիէտ.

բալց մենք հաստատ գիտենք, որ ընկերութեան ղեկավարները միայն դանդաղեցնում են այդ թարգմանութիւնները հրատարակելու գործը: Հրատարակել են մի շարք ընդհանուր գրքեր՝ Քիմիա, Պատեօր, Հանրամատչելի բնախօսութիւն, Դարւինիզմ, Զրուցներ հողի մասին, Հանրամատչելի աստղագիտութիւն, Նախագիտելիք բուսաբանութեան, Դպրոցական առողջապահութիւն, Զրուցներ բնութեան մեծ և անոգ երևոյթների մասին, Անբերութ հողագործ ըստ Դարւինի, — ուրեմն 10 գիրք և գրքով 6 տարում բնագիտական բովանդակութեամբ: Ինչքան էլ լինի — բալց էլի դրական արդիւնք է: Հրատարակել են էթնոգրաֆիական նիւթեր՝ Սասմալ ծռեր, Զաւախքի բուրմունք, Հնութիւնք Ալնալ: Հրատարակել են մի շարք մանր և միջակ մեծութեամբ ալ և ալ ընթերցանելի վիպական գրքեր, թէև մեծ մասամբ անկարևոր հեղինակութիւններ և առանց որոշ սխառէմի: Նոր սկսել է պատկերազարդ մանկական գրքերի հրատարակութիւնը, որ պէտք է շատ վաղուց սկսած լինէր: առաջիկայ հրատարակել են 3 տետր, բաւականին անճոռնի թարգմանութեամբ:

Ինչպէս որ ընկերութեան ղեկավարներն են շարժել այս վեց տարիներում, մի վեց տարի էլ որ անցկենալ — մեծ բան չի լինիլ չինւած: Որովհետեւ բնաւ չպէտք է կարծել թէ իբր ընկերութեան նոր վարչական և խմբագրական կազմը անցեալից միանգամայն տարբեր ընթացք բռնած լինի: Կա մեծ սխալ կը լինէր: Անցեալ կազմը, որ մենք անկենդան ենք անւանել, հրատարակել է նոյնպէս ինքնուրույն հեղինակութիւններ, ալս զանազանութեամբ, որ նա տւել է հատարակութեան 1) Մանկական երգեր Գամառ-Փաթիլպալի, 2) Գամառ-Փաթիլպալի բանաստեղծութիւնները: 3) Արարատեանի Գիւղական խալիֆալ, 4) Շերենցի Վանալ սազ, 5) Շիրւանդադէի Նամուս վէպը: Թարգմանական ընթերցանութեան գրքերից՝ 1) Բիչեր-Սաօու՝ Թոմաս եղբոր սնակը, 2) Ռոբինզոնի պատմութիւնը, 3) Հաուֆի Ուխտաւորներ: Հալ կլասիկները՝ 1) Խորենացի, 2) Ազաթանգեղոս, 3) Ասողիկ, 4) Ղևնդ — նոր տպագրութիւններով: Գործնական տնտեսական գրքերից՝ 1) Մորեխ և Նրա ջնջելու հնարը, 2) Ուղեցոյց գործնական չերամապահութեան: Առողջապահութիւնից — 1) Նեղ և խոնաւ բնակարանների մասին: Գասազրքերից — 1) Սահակ քահ, Սահակեանցի կազմած 1) Սրբազան պատմութիւն, 2) Գասազիւրք կրօնի: Էթնոգրաֆիական — Աղէքսանդրեանի «Թիֆլիզեցոց մտաւոր կեանքը»: Մանկական գրքեր մի քանի հատ և մի քանի հատ էլ ալ գրքեր և գրքովներ:

Այդպէս է եղել հին վարչութեան գործունէութիւնը, որ տեւց մինչև 1891 թւականի առաջին ամիսները: Այդ է որ իրաւամբ կոչուում էր մի-

ռաժ ընկերութիւն: Նորի, ալսինքն ալս վերջին 6 տարւալ (աւելի ճիշդ $5\frac{2}{3}$ տարի) գործունէութեան հետ էլ ընթերցողներին ծանօթացրինք վերը: Որպէս զի կարելի լինի թէև կոշտ, բայց մօտաւորական, չափսով համեմատել հնի և նորի գործունէութիւնը, կարելի է վերցնել հնի հրատարակած գրքերի (Ձ 1-ից մինչև Ձ 36) ընդհանուր գինը, որ է 21 ռ. 37 կոպէկ, և նոր վարչութեան ժամանակ հրատարակած գրքերի գինը (Ձ 37-ից մինչև Ձ 117), որը մեր հաշուով հաւասար է 33 ռուբլու՝ (չհաշւելով 5 գրքերի կրկնակի արտատպութիւնները): Առաջինը 11 տարում, երկրորդը՝ 6 տարում, որով նորը, համեմատաբար, 3 անգամ աւելի գործունէութիւն է ցուց տուել: Բայց և ոչ աւելի:

Եւ մեծապէս դժգոհ ենք ալս արդիւնքից: Դա չատ անբաւարար գործունէութիւն է: Ալս անբաւարարութիւնը աւելի ևս շօշափելի կը լինի, եթէ ի նկատի առնենք, որ մի ժամանակ մի քանի մասնաւոր անձեր գրքերի հրատարակութիւնով գալիս էին հասարակութեան պահանջը գէթ որոշ չափով լրացնելու. մինչդեռ ալժմ, տեղի տալով Հրատ. ընկերութեան՝ նոքա մի քանի տարիներից ի վեր հեռացել են ալս ասպարէզից կամ դոնէ դադար են տուել: Ասպէս՝ Փիլ. Վարդանեան, Գրիգ. Շահրուղաղեան, Խաչ. Մալումեան և նոյն իսկ Տիգրան Նազարեան, չհաշւելով ուսանողական հրատարակութիւնները:

Ալս բոլոր ֆակտերի զիմաց Հրատ. ընկերութեան ներկալ վարչութեան ինքնագոհութիւնը, որքանով որ նա արտալատում է թէ 1896 թ. Տեղեկագրով և եթէ մանաւանդ Մշակ լրագրով, ոչ միայն ծիծաղելի է, ալ և զայրուիթ պատճառող. հրատարակել ամբողջ մի տարում 14 գրքից բոլորն էլ փոքրիկ էժանագին գրքեր, ընդամենը 4 ռ. 74 կոպէկի, և համարել հաշերի մէջ հաշերէն գրքերի ամենագլխաւոր տարողը—և ալսպիսի մի գրութիւն միսթարակոն հռչակել—ալս նշանակում է կամենալ քաղախել ու փէտանալ 80 ական թւականների ողու մէջ. ալս կը նշանակի արժանի լինել Մշակին, որը ալս քաղախած ողու մոշնակն է դառնել...

Ալս պարագաներում մենք ուրախութիւն ենք զգում, տեսնելով թէ ինչպէս մի խումբ իսկական գրագէտներ միաժամանակ խմբում են իրենց բոլորը լայտնելու մի վարչութեան դէմ, որը միանգամայն բնական կերպով իրեն հակառակութեան մէջ է դրել դէպի գրական շարժման կրողները առհասարակ: Խլրտումի իսկական պատճառը միայն ալս է, որ երևում է. դրա պատճառը ընկերութեան սեփական գործունէութիւնն է և գրակա-նութեան մասին ունեցած ալս հաշւացքը, որ արտալատուել է ալս գործունէութեան մէջ և որի հետ ծանօթացանք վերը: Բայց ալս բոլորը, իբր բնական հետեանք, արտալատուել է վարչութեան լարաբերութիւնների

մէջ դէպի գրադէտները. կարաբերութիւններ, որոնք ցոյց են տալիս անասելի գոհկուծիւն վարչութեան կողմից, որ կարելի է բացատրել, բայց ոչ երբէք ներել և տանելի համարել. իւր սովորական գոչներով նա, աչդ գոհնկութիւնը, զղացել են շատերը. բայց իւր ամենավառ գոչներով նա երևաց Քալանթար-Շիրաւնդադէի գործում, որ նոյն իսկ վարչութեան կողմնակիցների ջանքերով մարտի 22-ի ընդհանուր ժողովի առաջը բերւեց, հակառակ չափաբարձ օրակարգի, հակառակ ուրեմի կանոնադրութեան, հակառակ ընդդիմադրականների ընդդիմութեան:

Աչդ դէպքի բոլոր մանրամասնութիւնները չեն կարող մտնել մեր չօղածի ծրագրի մէջ. դա մի «կլեաուզէի» խնդիր է. բաւական է միմիայն աչքանն իմանալ, որ վարչութեան պատէրով կատարած երկու գրքովներ թարգմանութիւնների համար, ընկերութիւնը պ. Շիրաւնդադէին վճարել է մօտաւորական զին 50 ռուբլի և չետոյ գրեթէ մի տարի անցած, վարչութեան նախագահ պ. Քալանթարը, մասնաւոր խօսակցութեան մէջ պ. Աղաւանդին չափանել է թէ պ. Շիրաւնդադէն պարտ է ընկերութեան. աչն ինչ պ. Շիրաւնդադէն ոչ ոքից և ոչ իսկ ընկերութիւնից լսած չի եղել թէ ինքը պարտական է ընկերութեանը: Եւ երբ պ. Շիրաւնդադէն գրաւոր կերպով դիմում է ընկերութեան վարչութեանը՝ բացատրութիւն ստանալու համար, վարչութիւնը վերադարձնում է թուղթը պ. Շիրաւնդադէին, մակագրութեամբ հաստատելով, որ վերջինս պարտ է մնում ընկերութեան ստացած 50 ռուբլու մի մասը, աչն բանի համար, որ գրքերից մէկը տպագրւած չէ: Պր. Շիրաւնդադէն առաջարկում է վարչութեանը խնդիրը չանձնել քննելու մի միջնորդ դատարանի. վարչութիւնը պատասխանում է լուծեամբ, որպէս զի ամիսներ չետոյ, մարտի 22-ի ընդհանուր ժողովում, ժողովի պարապմունքները վերջանալուց և ժողովի մի մասի ցրելուց յետոյ, խնդիրը հրապարակ հանւի և վարչութիւնը «վստահութեան քէ» ստանալ մի բազմութիւնից, որը եկել էր ոչ թէ խնդիր քննելու, ալ իւրաքանչեւ ամեն բանում պաշտպանելու:

Թողնելով գործի աչն բոլոր մանրամասնութիւնները, որոնք որ և է անձնական բնաւորութիւն են կրում, տեսնենք միայն թէ ինչ է բղիւսմ վարչութեան քաղի-կանոնից:

Վարչութիւնը առաջարկում է ուրիշներին թարգմանել որոշ գրքեր, առանց ճիշդ որոշելու զինը, բայց խոստանալով տալ աչքանից մինչև աչքան տպագրական թերթին:

Գորա հետեանքը աչն է, որ մինչև որ զիրքը չը տպագրւի, թարգմանիչը չի կարող իւր վարձատրութիւնը ստանալ, քանի որ զինը որոշւած է տպագրական թերթով:

Բայց գիրքը կարող է չը տպագրուել 1) եթէ խմբագրական մասնա-
ժողովը փոշմանի իւր արածը գրքի ընտրութիւնը. 2) եթէ գրքի տպագ-
րութիւնը ցնցողական արգելքի հանդիպի. հանգամանքներ, որոնց համար
պատւէր կատարողը զրականապէս ոչ մի պատասխանատուութիւն չի կա-
րող վերցնել իւր վրայ, բայց տեսէք որ վարչութիւնը իւր պատւէրները
կատարողներին է տուած տալիս...

Գիրքը կարող է չը տպագրուել նաև եթէ պատւէր ստացողը բարե-
խղճօրէն կատարած է թարգմանութիւնը, բայց խմբագրական մասնաժո-
ղովի անդամները ալ հասկացողութիւն ունին ոճաբանութեան մասին:
Ուրեմն ալս ղէպքում պատւէր ստացողը պիտի կախում ունենայ խմբա-
գրական մասնաժողովի քմահաճութիւնից եւ, որովհետև չը հաւանել էլ
կալ՝ չհաւանել էր:

Պատւէրով թարգմանած գրքի տպագրութիւնը կարող է վերջապէս
յետաձգել 1 տարով, 2, 3, 4 տարով. ուրեմն, ըստ վարչութեան տրամա-
բանութեան, պատւէր ստացող թարգմանիչը վարձատրութիւն ստանալու
համար պէտք է սպասի 1, 2, 3, 4 տարի կամ աւելի: Իսկ եթէ թարգ-
մանիչը աւելի վաղ ստանալ իւր կատարած պատւէրի մօտաւորական
գինը—այդ կը համարւի շնորհք, քնքշութիւն, (տես Մշակ, № 42), որի
ղէմ ամեն բողոք կը վերջանայ հրապարակական սկանդալով, ինչպէս ալդ
եղաւ Քալանթար-Շիրվանզադէի ղէպքում:

Դա ծաղր է գրական աշխատաւորների վրայ:

Ութսունական թւականների ոգով տոգորւածների ո՛ր արարքից որ
բռնում էք, վերջը զուրս է գալիս ծաղր առողջ դատողութեան վրայ...

Եւ ահա գալիս է նաև ապոթէօզը՝ Աշխատաւորների շատ համեստ և
հալալ վարձը հառամ անելուն հետամուտ եղած վարչութիւնը, անկարող նոյն
իսկ առանց դալմադալի տարեկան 6—700 ռուբլի տալ իւր հրատարակած
գրքերի հեղինակներին և թարգմանիչներին, ծաղրը աւելի լիակատար
դարձնելու համար ծրագրել է հիմնել մրցանակաբաշխումուն՝ Լսել են թէ
լաւ բան է մրցանակներ տալը, բայց երբ, ինչ հանգամանքներում,—այդ
նոցա փոլթը չէ...

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի

ԼԷՕԻ ՊԵՏԱՄԵԼՆԻ ԱՌԻԹՈՎ

I

Անցեալ անգամ ես քաղածներ բերի Լէօի, որ համարուած է Մշակի՝ գլխաւոր գրական աշխատակիցը, տարիներ առաջ գրած նամակներից, ապացուցանելու համար, որ նա ալժմ կեղծութեամբ է վրդովւում «ինչ էինք ժառանգել» խօսածի դէմ, ուր 80-ական թւականների մամուլը շատ աննպաստ գուցներով էր դուրս բերւած: Ես ապացուցի որ Լէօն 1888, 1889, 1890, 1891 թւականների մամուլը, նորա մէջ և չատկապէս Մշակը, անւանում էր տաղտկալի, ծանծրալի, զայրոյթ պատճառող, անտանելի, փտած ուղղութիւն ունեցող և որ ալդ փտած ու անտանելի ուղղութիւնը, նորա կարծիքով, շատ էր պինդ հաստատւած, որ կարելի լինէր նորա դէմ մաքառել: Վէճը զուտ գրական էր, և ամենքը պէտք է խոստովանեն, որ զուտ գրական վէճի սահմանից ես չէի չեղել, օգտւելով իմ հակառակախօսի նամակներից:

Իմ ալդ գրութիւնը անպատասխան չմնաց. Լէօն Մշակի՝ ում պատասխանեց երկու ընդարձակ խօսակցութիւնով. ով չէ կարդացել—թող կարդայ գէթ աչն հետաքրքրութեան համար, թէ ինչ երեսով մարդ կարող է ջնջել աչն, ինչ անքան որոշ խօսքերով գրւած էր տարիներ շարունակ: Որովհետեւ Լէօն չալտնում է (Մշակ № 37) թէ չանձն է առնում իմ ասածները ջրելու ծանծրոյթը: Բայց եթէ նա իմ ասածները ջրել կարողանար՝ նա պէտք է հրաշք գործէր՝ ջրելով իւր սեփական գրածները. որովհետեւ իմ ասածները Լէօի մասին հիմնւում էին նորա, Լէօի, տարիների ընթացքում գրած նամակների վրայ, որոնք անջնջելի են:

Ինչ վերաբերում է աչն քաղածներին, որ ես առաջ բերի նորա նամակներից, նա մի հատ խօսքով է ուզում ջրել, աչն է թէ իբր ալդ նամակները «առնւաղն օրւալ, ըրոպէի տպաւորութիւնն են» կրում:

Արիք ու հակապէք թէ ալդ ինչ «ըրոպէի տպաւորութիւնն» է, երբ ալդ ըրոպէն տնում է 1888-ից մինչև 1891 թւականը!...

Դորան կ'ատեն չիմանալ ինչ պատասխանել: Ինքը իրեն չարգող մի գրող կ'ամաչէր ալդպիսի կեղծ խոստովանութիւնից. բայց Լէօն չի ամաչում երեք տարին մի օր և մի ըրոպէ դարձնելու փորձից:

Չկարողանալով ծանրանալ իւր գրածների վրայ, դորա փոխարէն նա քաղածներ է բերում նրան գրած իմ նամակներից: Պէտք էր կարծել թէ ալդ անում է իմ ասածների մէջ հակասութիւններ գտնելու համար, ապինքն թէ հս 80 ական թւականների մամուլը շատ բարձր համարած լինեմ եւ ալժամ միայն ուրանում լինեմ ալդ մամուլի բարձր արժանաւորութիւնները: Եթէ Լէօն ալդպէս վարւէր—գոնէ կ'ասէի թէ նա մնում է արուցած խնդրի սահմանների մէջ:

Բալց Լէօն, ընդհակառակը, ամեն ջանք է գործ դնում մոռացնել տալու կարեւոր խնդիրը, որը ալժամ նորա կոկորդի վրայ պինդ սեղմած՝ թող չի տալիս շունչ քաշելու: «Օրալ բոպէի տպաւորութեան տակ եմ գրել» ասելով՝ նա իւր նամակներին դէմ չանդիման է կացուցանում Մուրճի խմբագրի նույն ժամանակ գրած նամակները. բալց նամակներ, որոնք բնաւ մեր խնդրին չեն վերաբերում. ահա դժբա.

Մի նամակ 1889-ից, որով Մուրճի խմբագիր-հրատարակիչը չորդորում էր Մուրճի 1890 թւականի բաժանորդութեան համար աշխատել նուշում:

Մի ալ նամակ նոյն 1889-ից, որով նոյնը խնդրում էր Լէօից, որ ալն վէպը, որի մասին Լէօն ինքը յայտնել էր Մուրճի խմբագրին, շտապէ ուղարկելու: (Ալդ երկու նամակների մասին տես Մշակ № 37):

Մի երրորդ նամակ 1891 թ. չունւարից, որով նոյնը չորդորում էր Լէօին՝ աշխատել Մուրճի 1891 թւականի բաժանորդութեան համար: (Տես Մշակ № 47):

Ահա եւ բոլոր նամակները, որ Լէօն առաջ է բերում: Ի՞նչ կապ կալ ալդ նամակների եւ ալն գրական խնդրի մէջ, որ շոշափւած էր իմ անցեալ «Գրական արարեսկ»-ում: Ի՞նչ կապ. ինքներդ տեսէք:

Լէօն ինքը բերանացի չալտնել էր թէ մի վէպ ունի. Մուրճի խմբագիրը նամակով չնտոլ խնդրել էր վէպը ուղարկել. (ալդ 1889-ի վերջերին էր): Ահա ֆակտը. ալժամ տեսէք Լէօի եզրակացութիւնը.

«Ինչպէս էիք ինձպէս մի սկսնակին լանձնում... Մուրճի վիպական քաժինը. ինչպէս չէիք մտածում թէ 1897 թւականին բոլորովին անարժան եւ անպէտք վիպագրող պիտի հրատարակէք ինձ:» (Տես Մշակ № 37, Լէօի յօդւածի վերջին տողերը):

Ահա ձեզ ինչ է նշանակում մեծամտաբար մոլորել՝ ուրիշներին մոլորեցնելու համար. խնդրել մի աշխատակցից որ իւր իսկ խոստացած գրածքը ուղարկի—ալդ արդէն նշանակում է ամսագրի մի բաժինը նրան յանձնել: Որտեղ է լուած ալդպիսի բան:

Ուրեմն իբր թէ տեսէք թէ Մուրճ-ը ինչ ահագին նշանակութիւն է տալիս եղել Լէօին 7 տարի առաջ. ալդպէս է ուզում հաւատացնել Լէօն,

հրատարակելով թէ նրան վստահացած են եղել «Մուրճի» վիպական բաժինը լանձնելու: Ահդժութիւն, և ուրիշ ոչինչ:

Եւ այժմ տեսէք Լէօի ուշացած պարծենկոտութիւնը. նոյն աչն տողերից չետու Լէօն գրում է Մշակում.

«Բայց չնայելով ձեր կրիտիքական դրութեան, ձեր թախանձանքներին, ձեր հեռագրին անգամ, նկատի չառնելով, որ դուք տալիս էիք ինձ վարձատրութիւն, ևս 1890 թւականի ընթացքում ձեզ վիպական գրածք չը տւի, բայց Մշակի մէջ նոյն թւին մի շարք պատկերներ տպագրեցի առանց վարձատրութեան: Սա ինչ գաղտնիք է»:

Միակ գաղտնիքը, կը պատասխանեմ ես, աչն է, որ Լէօն մի խարդախ և խնորհիւ մարդ է եղել կամ աղաչէս է դառել չետու, որով և բացել է մուտքը մի աչնքան աղաւաղ և խարդախ խմբագրութիւն, ինչպիսին է Մշակի ներկալիս խմբագրութիւնը: Այդ մարդը փողտնիքներ է լորինում այժմ, թէ ինչու նա ոչ մի վիպական գրածք չուղարկեց Մուրճին 1890 թւականին: Իբր թէ նա վճուել էր իւր վէպերը ձրի տալ Մշակին՝ քան Մուրճին՝ վարձատրութեամբ: Մինչդեռ այդ նոյն պարոն Լէօն հէնց 1890 թւականին, լունիսի 12-ի նամակով ահա թէ ինչ էր գրում Մուրճի խմբագրին,

«Մինչև այժմ Դուք չը տպելիք իմ քննադատութիւնը... և թէպէտ երկու անգամ գրել եմ որ թէ չէք տպելու, յետ դարձնէք, բայց Դուք ոչինչ չէք պատասխանել...»

Մուրճում տպւող իմ յօդւածների շարունակութիւնը ևս ընդհատեցի աչն պատճառով, որ սաստիկ զբաղւած էի գործերով: Շատ կարճ միջոցում Դուք կը ստանաք ինձանից երկու յօդւած. մէկը շարունակութիւն Մեր կեանքից (յօդւածի), միւսը մի փոքրիկ պատկեր. յոյս ունիմ որ երկուքն էլ յունիսի համարում տեղ կը գտնեն:

Եւ անմիջապէս չետու:

«Օրերումս ես վերջացրի իմ մեծ պատմական վէպի առաջին մասը, որ բաղկացած է 26 քառածալ թերթից: Եթէ ցանկութիւն ունենաք տպագրելու, ես իսկոյն կ'ուղարկեմ Ձեզ. վէպը կ'ուղարկեմ է աշխարհին վէրքեր...»

Համեմատեցէք այդ դոկումէնտը, որի մէջ միաչն ճշմարտութիւն կարող էր լինել, այժմեան տտաքերան Լէօի պարծենկոտ խօսքերի հետ: Այդ նամակը կրկնում եմ, 1890 թւականի լունիս ամսի 12-ից է. իսկ աւսօր, եթէ տալի անցած, երբ Լէօն մեզ հետ կուր է բռնւել, նա ուզում է հաւատացնել

ընթերցողներին, թէ 1889-ի վերջերքից նա վճռել էր Մշակ'ին տալ իւր գրածքները, և ոչ Մուրճ'ին և իբր 1890 թւականի ընթացքում նա Մուրճ'ին վիպական ոչինչ առաջարկած չի եղել, և դեռ հարց է տալիս թէ «սա ինչ գաղտնիք է»!...

Այսպէս են Մշակ'ի խմբագիրները. սուտ, աղաւաղում, պարծենկոտութիւն, ինքնագովութիւն, ամեն ինչ միացած է—ողորմելի գոլութիւններ շարունակելու համար: Լէօն ուզում է նոյն իսկ հաւատացնել, թէ Մուրճ'ում նա, Լէօն, իբր վիպասան, Զոլայի կողքին է եղել գրած. սեւեք նա ինչ է ասում.

«Եւ իրաւ, կարգացէք ձեր Մուրճ'ի 1889 թ. երես 1823. այդտեղ դուք ինձ ղնում էք Զոլայի կողքին. ձեր փառաւոր լողիկայով այսօր դուրս է գալիս որ Զոլան Assomoir և Nana գրելիս մի յուսատու սկսնակ էր...»

Լէօի ցուցմունքով բաց եմ անում Մուրճ 1889 թ. երես 1823 և կարգում Լէօի Մուրճ'ում տպած «կորածներ» վէպիկի մասին գրախօսութիւնը, ուր ասւած է.

Վէպը, իւր բովանդակութիւնով և նկարագրական գոյներով, այսպէս ասած, զոլայական է՝ բռնելով Զոլայի Assomoir և Nana վէպերի մէջ տեղը: Բայց միայն մի յայտնի չափով. իսկ այդ չափը շատ լաւ պահպանւած է:

Նրկուսից մէկը. կամ Լէօն անգրագէտ ոմն է, կամ պարծենալու դիտաւորութեամբ գրածի իմաստը խարդախող: Ասումուք վէպում Զոլան դուրս է բերում բանուորին, որը վերջը իրեն խմողութեան է տալիս. Նանա վէպում նկարագրում է նրբացած պոռնիկ կինը Պարիզում. Լէօի կորածներում նիւթը կաղմում է չքաւորութիւնը և պոռնիկութիւնը Շուշում. «վէպը, այսպէս ասած, զոլայական է» խօսքով ամեն գրագէտ կը հասկանար թէ ինչ է ասում գրախօսը. բայց այսօր Լէօն ուզում է հաւատացնել թէ Մուրճում Լէօն, իբր վիպասան, գրած է Զոլայի կողքին, և եթէ Մուրճը չիմնւելով Լէօի մի քանի սկզբի վէպերի վրայ չալտնում է թէ նա յուսատու սկսնակ էր, ուրեմն և Զոլան մեր աչքում պիտի լինէր միայն մի յուսատու սկսնակ...

Այսքան էլ մեծամտութիւն, այսքան էլ անվաղել պարծենկոտութիւն, հիմնւած մի գրախօսականի իմաստի աղաւաղման վրայ... Դեռ միայն անցեալ տարի, նոյն Մուրճ-ում, Արարատեանի «Նրկութումը» պատմածքը գրախօսելիս մեր աշխատակից Լ. Մ. Նմանութիւն էր գտել Շեքսպիրի Ռոմէօ և Զիւլէտի հետ. իւր թատրոնական ռեցենզիաներում, նոյն պ. Լեոն Մանուէլիանց (Մուրճ 1896 թ. № 3—4 էջ 492) Նրանդ Նրկորդ պիեսը քննադատելիս չիշել էր Շեքսպիրի Մակբեթը. և վաղը պիտի Արարատ-

եանց Մուրճի վրայ հիմնելով հռչակէ իրեն հաւասար Շէքսպիրի (իմա «դրած Շէքսպիրի կողքին»), և մէկն էլ գտնւի՝ Նրւանդ Նրկրորդը եւրոպական լեզուներով թարգմանի աշխարհքին մի գործ նւիրելու համար, որը իբր թէ Մուրճը արժանի է դատել Մակբեթի կողքին դասելու... Ինչ խեղդատակութիւն!

Ահա, ուրեմն, աչն կոմպլեմէնտները, որոնց պատճառով Լէօն առաջ է բերում Մուրճի խմբագրի իրան գրած հին նամակները և քրքրում Մուրճի հատորները:

Պարզ է աչմ ընթերցողների համար, որ Լէօն աչք բանին հասնել է ուղղում կեղծելով և զիտմամբ մոռանալով իւր 1890 թ. Կունիսի 12-ի գրած նամակը, որ պահւած է մեզ մօտ, և կեղծ նշանակութիւն տալով Մուրճի մի գրախօսականի ամեն գրագէտի համար պարզ խօսքերին...

Լէօի որ խօսքից էլ բռնում էք—գտնում էք կեղծութիւն:

Բայց կեղծութեան գլուխ գործողը աչն է, որ նա փորձում է ուրանալ իւր նամակների վերաբերմունքը Գրիգոր Արծրունուն և Մշակին: Իբր թէ ճիշտն է ասւած թէ տաղտկալի, անբովանդակ, զայրոյթ պատճառող, փտած եւ անատենելի ուղղութիւն ունեցող խօսքերը, որ Լէօն գործ էր ածում մեր մամուլի մասին 1888 ին, 1889-ին 1890-ին, 1891-ին, վերաբերւում լինեն Գր. Արծրունուն և Մշակին:

Որտեղ է ասւած? Իմ աչքում աչք վերաբերմունքը տեսանելի է Լէօի գրած նամակների ամեն մի տողում. իսկ որպէս զի ընթերցողներից ամենակուրի աչքում էլ աչք տեսանելի լինի, նորից վերաբարդում եմ աչտեղ 1889 թ. մայիսի 28-ից Լէօի գրած նամակից աչս կտորը.

«Յամենաչն դէպս ես կարծում եմ որ եթէ երկու թերթերն էլ (պատկերազարդ շաբաթաթերթ Արձագանք և պատկերազարդ Տարազ) սկսեն հրատարակել, նրանց (Արձագանքի և Տարազի) բաժանորդները պիտի շատանան ոչ թէ ի հաւիւ Մուրճի, այլ ի հաշիւ մեր օրաթերթերի (Մշակի եւ Նոր-Դարի) որոնք օրէցօր անասելի կերպով տաղտկացուցիչ և տխուր են դառնում իրանց ղատարկութեամբ, անբովանդակութեամբ»:

Փակագծերում գրած խօսքերը մերն են. և իրօք, Լէօի նամակում խօսքը պատկերազարդ Արձագանքի և պատկերազարդ Տարազի մասին է, որոնք պիտի սկսէին հրատարակել. իսկ հալ օրաթերթեր աչք ժամանակ միայն երկուք կաշին—Մշակ և Նոր-Դար. Աչնպէս որ տառացի մտքով էլ որ հասկանանք՝ Մշակը մէջն էր. իսկ ըստ իմաստի՝ Լէօն ոչ թէ Մշակն էլ էր ակնարկում, աչ միայն եւ եթ Մշակը, Գր. Արծրունու Մշակը, որովհետեւ

անմիտ բան կը լինէր մասնաւոր նամակներում զանգատել... Նոր-Ղարից, որը բնաւ չէր կարող մտնել մեր հաշիւներէ մէջ:

Նոյնը ընթերցողը կարող էր նկատել Լէօի նամակներից վերցրած բոլոր աչն քաղաքներում, որ ես առաջ էի բերել անցեալ անգամ: Նոյն ոգին էր նաև աչն չտալած մուկը, երկար չօղւածում, ուր, նոյն իսկ իւր ալփման խոստովանութեամբ, նա խօսում էր «գաղափարական կուսակցութեան անհրաժեշտութեան մասին և դատափետում աչն կուսակցական նեղ, փողոցային ձեւը, որ ամբոխի ստոր զգացմունքներին է գոհացում տալիս»: Նորից կարդացէք անցեալ անգամ մեր առաջ բերած քաղաքները Լէօի նամակներից, և ոչ մի տարակոյս չի մնալ որ կուսակցական նեղ, փողոցային ձեւ և աչն վերաբերում էր, այս, ամբողջ մամուլին, բաց ամենից առաջ Մշակին, աչնպէս՝ ինչպէս նա կերպարանաւորւել էր 80-ական թւականներին և ինչպէս նա շարունակուում էր նաև չետագայում:

Ոչ մի ֆրազներով Լէօն չի կարող պղտորել ընթերցողների միտքը, երբ նոցա աչքի առաջ են աչդպիսի դոկումէնտներ: Այդ խօսքն չի չափողիլ: Բաց խնդիրը դուրս մէջ չէ, աչ նորա մէջն է, որ գտնուում է մի մարդ, որը հաչ հրապարակախօսական-քննադատական ասպարիզում գործել է չանդգնում, ընդունակ լինելով իւր երէկաչ ասածները ու գրածները ափաչկարա ուրանալ: Աչդպէս էր նաև Մալումեանը, որը դատարաններում երկու անգամ ուրացաւ իւր գրածը Սպանդարեանի առիթով, բաց վերջը, երբ աչլես անհնարին եղաւ, ստիպեց խոստովանել, աւելի ճիշդ՝ խոստովանել տին: Աչմ էլ Լէօն է, որը ուրանալ է փորձում աչնքան պարզ գրածը: աչս զանազանութեամբ որ աչն, ինչ Մալումեանի համար դատական պալատն էր, աչդ նոյն դատական պալատի դերը պիտի կատարի հասարակաց կարծիքը Լէօի գլխին... Ջարմանալի երևութ է Մշակի խմբագրութիւնը: ինչ ուրացողներ կան—հաւաքել են մէկ տեղ...

Աչսպէս են պատժում վատերը!

Աչմ ազատ է Լէօն նոյն իսկ Մուրճի հին աչխատակիցներից սրան-նրան «խնամակալութեան» տիտղոսներ բաժանել, և մէկին էլ «հեղինակութիւն» հռչակել աչմ նոյն պարոնի խմբագրած թերթում, որ աչմ էլ Մշակ է կոչւում, որին և աչխատակցում է Լէօն...

Աչս ամեն մերկացումներից չետոչ մենք կը տեսնենք թէ Լէօն ինչպէս պիտի գրիչ շարժէ հրապարակախօսութեան և քննադատութեան ասպարիզներում, իրեն իր իր գէշալի մարդ ձեացնելու համար...

II

Մինչև աչմ իմ խօսքը ընթերցողներիս հետ էր միաչն, Լէօի մասին, բաց Լէօի, որպէս մէկի, որը անարժան կերպով կամենում էր իւր նեղ անկիւնից դուրս գալով՝ հրապարակախօսութեան և լաչն քննադատութեան

ասպարէզում հաստատուել: Մուրճ՝ը ալո, շատ խիստ է եղել և չատ խիստ կը լինի ալն ամենքի նկատմամբ, որոնք, առանց գուցէ ալդ զգալու, ասպարէզ են մտնում միայն որոմներ ցանկելու համար, ստիպած զգալով իրենց խելքից ու հասկացողութիւնից բարձր նիւթերի մասին գրելու: Պէտք է մի քիչ էլ մտածել որոմները մաքրելու պարտաւոր անձերի մասին: Լէօն համեստ չէ, ալ մեծամիտ: Բայց ալդ դեռ ոչինչ, եթէ միայն գոնէ ճշմարտութեան սահմաններում մնար և զիտենար ալն խօսքերի իմաստը, որոնց կոչերի մէջ նա լանդգնում է դնել այս կամ ալն անուն:

Նա պարտաւոր էի զգում Լէօնով զբաղելու, հետևած լինելով նորա վատ չափւած ու վատ ձևած զրութիւններին անցեալ տարւանից դէս, ուր նա ճանաչեցի մի անարժան գրչի լատկութիւններից շատ շատերը: Նա ալն գրչի նկատմամբ որ սիրում է «գաղափարից», «ազնուութիւնից» և ալ ալդպիսի փափուկ բաներից խօսել, ալն գրչի նկատմամբ, որ ուզում է նաև «զալրութ» ու «զգլանք» և ալն էլ «խորին զգլանք» ճանաչել, իմ պարտքն էր մի չափ տալ ընթերցողների ձեռքը, որով լաւ հասկացէր թէ ինչ է նշանակում երբ գաղափարը, ազնուութիւնը Լէօնի միջոցով է քարոզում, ալն էլ ալժմեան Մշակում, և երբ զգլանքը և «խորին զգլանքը» Լէօնի ու հման մարդոց կողմից է չալտնում...

Ալդ պարտականութիւնը դէպի ընթերցողները կատարելու չետու, դէթ որքան ալդ ալժմ էր հարկաւոր, ալժմ, ասում եմ, կը զիմնմ Լէօնին, որպէս վիպասանի, նորան մի երկու բացաղրութիւններ տալու համար:

Դուք, սլ. Լէօ, դէթ որպէս տոսկ ընթերցող, երևի ալս ութ տարիներում շատ անգամ խոստովանած կը լինէք, որ Մուրճ՝ը իւր քննաղատութիւնների մէջ անկողնապահ է և ձգտում է ալդ իդէալական ճշմարտութեան տեւիլի, քան ալդ արեւ է և անում է որ և է թերթ հալերիս մէջ: Նա չեմ ասում թէ Մուրճ՝ը անզգալ է դէպի բարեկամն ու չարեկամը, դէպի գաղափարակիցն ու ոչ գաղափարակիցը: Բայց խորութիւնը երբեք չի արտալալուել կարծիքները կեղծելով: Գուցէ պատահել է որ երբէմն լաւ բաւականաչափ զօրեղ կերպով չենք չեղտել, բայց մենք ասպարէզ չենք եկել ուրիշի մէջ նկատած լաւ լուծումի անցնելու կամ լաւը իբր վատ հռչակելու: Ասացէք խնդրեմ, ով է մեզ համար սարկաւադ ձուղուրեան? և սակալն Մուրճ՝ը առաջինն է եղել որ նորա գիւղական պատկերների առաջին հատորը հրատարակելուն պէս՝ նկատելով նորա մէջ որոշ տեսակի տաղանդ, շտապել է ալդ բանը չալտնելու մի զրախօսակա-նով: Ինչ ծառալութիւններ է մատուցել Մուրճ՝ին Ա. Երիցեան. և սակալն երբ լոյս տեսաւ՝ նորա «Ամենալն հալոց կաթողիկոսութիւն»-ը

Մուրճ-ը շտապեց հասարակութեան ուշադրութիւնը դարձնել ալդ լուրջ աշխատութեան վրայ, ցոյց տալով նորա արժանիքները և ալլն, Բալց ահա դեռ տարիներ առաջ, երբ Մալխասեան մեզ մօտ գրում էր, ճիշդ է՝ ոչ իբր Մուրճի չատուկ աշխատակից, ալ միայն իբր կողմնակի մարդ, Մուրճ-ը խիստ քննադատեց նորա «Մակբեթի» թարգմանութիւնը, որից չետոյ նոյն Մալխասեան Մուրճ'ում ալ ևս չգրեց: Ուրիշ չատ ու չատ օրինակներ կարող ենք բերել: Բալց ումը չէ Կալանի Մուրճ'ի ալդ անկողնապահութիւնը: Մինչև Մուրճ'ը հաջոց մամուլի մէջ բնաւ սովորութիւն չկար խղճի մօտ գնահատել մէկին, որը կողմնակից կամ կուսակից չէ: Շիրաւնդադէն բառիս խիստ մտքով մեզ երբէք աշխատակից չի եղել: Մուրճ'ի հիմնելուց չորս տարի չետոյ նա մի վէպ Կանճեց մեզ, որոշ պալմանով, որ և տպեց: Բալց մինչև ալ վէպի տպելը դուք կը գտնէք Մուրճ'ում նորան, իբր վիպասանի, լիշատակած ըստ արժանույն. և գորանից չետոյ էլ մի քանի տարի շարունակ՝ չնալած մասնաւոր լարաբերութիւններին՝ Մուրճ'ում նորա անունը իբր վիպասանի, երբէք ստորացրած չէ, և երբէք էլ ալլալիսի ձգտում չի եղել, չնալած որ դէպք ենք ունեցել նորա Բի վարմունքից խիստ նեղացած լինելու, որ և արտապալտել ենք նոյն ալս էջերում: Եւ ալլն և ալլն:

Ալլալիսի երևութ դուք չէք գտնիլ 80-ական թւականների մամուլի մէջ, ոչ Մշակ'ում, ոչ Արձագանք'ում, ոչ ալլուր: Մուրճ'ի ազդեցութեան տակ ալս 90-ական թւականներին նոյն թերթերում դուք կը գտնէք մի-մի շեղումներ 80-ական թւականների դեւիզից, Բալց դեռ միայն շեղումներ, ընդհանուր ուղղութիւնը նոցանում դեռ մնացել է նոյնը:

Եւ ինչ ես ասում եմ գրադէտների մասին, դուք ալդ նոյնը իմացէք՝ նաև հասարակական գործիչների մասին: Սակալն հեռուն չգնանք:

Դուք, պ. Լէօ, ակնդատնի կերպով խոյւած էք ինչ էինք ժառանգել չօղածից. դուք ասում էք.

«...Մուրճ'ի ալս տարւայ առաջին համարում դուք բարհաճեցիք ինձ տեղ չտալ վիպագրութեան մէջ: (Մշակ, № 38, 2-րդ երես, 4-րդ սիւնակի ներքևում)»:

Սխալում էք. վիպագրութեան մէջ Մուրճ'ի չօղածում ձեզ տեղ տրւած էր. ալլտեղ ածածի իմաստը սա էր, թէ դուք ձեր առաջին շարք վէպերով յոյսեր էիք տալիս թէ պիտի հաստատուէք հալ վիպագրութեան մէջ: 80-ական թւականներին նոր սկսած վիպասաններից փչւել էին Շիրաւնդադէ, Մուրացան և դուք՝ Լէօ. Բալց ձեր ու Շիրաւնդադէի մէջ մեծ զանադանութիւն էր գրւած. անցեալ տասնամեակում սկսնակ Շիրաւնդադէն դնալով անց և յետագայում ամրացրեց իւր անունը, որով վերջնականապէս հաստատուեց

հալ վիպագրութեան մէջ. նա դառաւ հալ հեղինակ, հայ ռոմանիստ, բառիս աւելի խիստ մտքով խակ դուք, պ. Լէօ, որ անցեալ տասնամեակի թէն ոչ փալուէն բաց և այնպէս չաջող սկսնակներից էիք, չետագալում չարտադրեցիք որ և է մի գործ, որ հալ գրականութեան սեփականութիւն դառնար: Շիրաւնդադէի ամեն մի մեծ թէ փոքր վիպական գրածքը ալս վերջին 7—8 տարիներում նկատուած է եղել ընթերցող հասարակութեան ընդհանրութեան կողմից. օրինակ ձեզ՝ Արսէն Գլմաքսեան, Յաւադարը, Կրակ՝ը, Գալով ձեզ, ձեր սկզբի վէպերը երբէք փալուն չեն եղել, բաց էլի կարգացել են. և դուք հազիւհազ կարողացաք հասնել մինչև ձեր «Կորածները». ալքքանում դուք չալտնի չալով տաղանդ ցուց էիք տալիս: Բաց այնուհետև ահա անցել է եօթ տարի, և դուք թէն գիտեմ որ «բաներ» գրել էք, բաց ոչ ընդհանրութիւնից նկատուած վէպեր: Վիրաւորում եմ ձեզ ալս խօսքերով. դէ թող ասածիս դատաւոր հանդիսանան Մուրճի ընթերցողները, որոնց մէջ է չամենալն դէպս հալ ընթերցողների վերին խաւը. թող նոքա վիպիւն ալդ: Ձեր աւելի նոր վէպերից ալս եօթ տարիների ընթացքում Մուրճում միալն մէկն է գրախօսելի, որի անաջողն լինելն է ցուց տրւած («Ախտահանութիւն»): Անձնական հակակրօթիւն? ուրեմն Մուրճը իւր բնաւորութեան հակառակ է գնացել. դէ թող Մշակը զբաղւած լինի ձեր ալք վէպերով. հա էլ ալք չի արել. ահա ալս տողերը որ գրում եմ, հարցնում եմ Մուրճի ալխատակիցներից սրան-նրան՝ ով ինչ գիտէ ձեր վերջին գրութիւնների մասին,— և պատասխանը սա է թէ գիտեմք որ գրել է, բաց թէ ինչ—մեզ անչալտ է: Նւ իրօք, դուք, պ. Լէօ, ալս 90-ական թւականներին ոչ միալն չէք չառաջդիմել, ալ և չետադիմել էք. ներողութիւն. «չետադիմել» խօսքը լաւ չէ չալտնում իմ իսկական միտքը. դուք դառել էք եթէ չասենք բոլորովին «մութ» բաց գոնէ «անհետաքրքրական» դրող, անհետաքրքրական վիպասան,— ահա թէ ինչ կարող կը լինէի մեծ վստահութեամբ չալտնել: Ձեր գրւածքները բնաւ հետաքրքրութիւն չեն չարժում. մարդու մտքով իսկի չի էլ անցնում հարց տալ, թէ արդեօք Լէօի ալս նոր վէպում հեղինակին ինչ խնդիր է հետաքրքրել, ինչ է նորան չուզել, ինչ է չրդել նորան գրիչ վերցնելու:

Նա ալք բացատրում եմ նրանով, որ դուք մտածող չէք, դուք ինքնուրոյնութիւնից դուրի էք, ճիշդ այնպէս, ինչպէս դուք ալք ցուց էք տալիս հրատարակախօսութեան մէջ, ուր դուք «գուռնա փչելու» արհեստաւոր էք, բաց ոչ պոլլիցիստ: Հրապարակախօսութեան համար դուք ընտրել էք ձեզ համար մի քանի մոտիւններ, որոնց մասին դուք կարծիք ունէք թէ «լաւ չկոլալից» են փոխ առնւած. բաց դուք ալք մոտիւնները ոչ տեղին գործածել և ոչ մշակել գիտէք, ալ դեռ անտեղի «լըլըլոց»ներով

փչացնում էք և աղաւաղում: (Վէպումն էլ այդպէս էք. տես : «Ախտահանութիւն» վէպիկի գրախօսութիւնը, Մուրճ 1893 № 9):

Մի հատ օրինակ. դուք կարդացել էք կամ լսել թէ «չպէտք է եղածից գոհ լինել». և ահա դուք իբր թէ հետևելով այդ դեւիզին՝ ուզում էք սիւացնել ներկայիս գրական շարժումը. չէ որ ախար «չպէտք է եղածից գոհ լինել»! Բայց երբ մարդ նկատում է, որ այդ «դժգոհութիւնը» դուք արդարացնում էք մօտիկ անցիալի յիշողութիւններով, աչն մօտ անցեալի, որի մասին դուք ինքներդ սակաչն վկայում էիք թէ անբովանդակ է, տաղտկալի, անտանելի, զայրոյթ յարուցանող և որ պէտք է ստեղծել գրողների մի նոր սերունդ,—ահա այդ ժամանակ հս ստիպւած եմ ձեզ ոչ թէ մտածող մարդու տեղ ընդունել, այլ մի խրտւիլակի, և որ ձեր կողմից դա «դժգոհութիւն» չէ, այլ «զուռնա փչել», ծակ փիլիսոփայութիւն...

Բայց ներկայումս ձեզնում այդ «զուռնա փչելն» էլ մթնագնում է մի այլ հանգամանքով. ձեր այդ բոլոր կեղծ «դժգոհութիւններից» կարմիր թելով անցնում է Մուրճի դէմ գործելու ցանկութիւնը, աչն Մուրճի, որը վերադարձնելով ձեզ ձեր երկու չօղւածները, պարզ հասկացրել էր, որ Մուրճը ձեզ բնաւ carte — blanche չէ տալիս՝ ամսագրի էջերը հարստահարելու ձեր կամեցածին պէս: Վերադարձնելու երկրորդ դէպքը կրկնելուց չետոյ՝ դուք մտածեցիք թէ Մուրճը ձեր քէֆի համար չէ. և այլեւս ոչինչ չուղարկեցիք Մուրճին, նեղացած լինելով մեզնից, որ մենք ձեզ չարմար ենք դտնում որ «միայն դաւառական կեանքի մասին գրէք» (խմբագրութեանս մէջ պահւած է ձեր նամակը, 1891 թ. իունւարի 26-ից, որը վկայում է ասածներս): Դուք մտածեցիք թէ՛ էլի փառք Մշակին, նա իմ ամեն տողս տպում է ի շինութիւն հայոց ազգի և նորա կուր ընթերցողների...

ԼՈՒՍԻՆԻ:

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

XIII

Ներկայացումներ:—Թատրոնական խումբի ամսական կազմակերպումին Բազում:—
Բեմական գործիչների ընդհանուր ժողովը:

Դերասանների համար հանգստեան շրջան եղաւ մի քանի օր, եթէ չհաշւենք ալն մի քանի ներկայացումները, որոնք երեւոյին դէս ու դէն. ալսպէս՝ Կանձակում տ. Զարէլ և պ. Օհանեան ներկայացրին անմահ Գուց-կովի «Ուրիէլ Ակոստա», Վլադիկաւկազում թատերասերները խաղացին զաղթականների օգտին «Մեղապարտ փարիսեցիներ» պիէսը (հեղ. բժշ. Բուչարեանի), Թիֆլիսում դերասանական խումբը մասնակցութեամբ պ. պ. Աբէլեանի և Տէր-Դաւթեանի ներկայացրեց «Ոճրագործի ընտա-նիքը» և «Խօլէր», որի արդիւնքի կէսը՝ լոգոստ գաղթականներին: Աւելորդ չի լինի փշտակելը թէ դերասանները փոխանակ օգնելու և օգտուելու՝ վնաս կրեցին ալդ ներկայացումից մօտ 40 ռուբլի...: Ալդ ներկայացումից առաջ Թիֆլիսի թատերասերները մասնակցութեամբ տ. Զարէլի և պ. Տէր-Դաւթեանի ներկայացրել էին «Բանդած օջախ», որի արդիւնքի կէսը նույնպէս չատկացրած է գաղթականներին: Ներկայացումը արդիւնաւոր էր՝ Վլադիկաւկազում նույնպէս մի ներկայացում տուց պ. Վրոյրը սիրողների մասնակցութեամբ, խաղացին «Դոն-Կիոտի» և «Օրթոնալու քէվը»:

Բազումները թատրոնական գործում ևս կամենում են Թիֆլիսից առաջ անցնել: Ամենայն եռանդով սկսած է հանգանակել թատրոնական ֆոնդի համար մի գումար, որով առաջիկայ 1897—98 թ. թատերաշրջա-նից սկսած պէտք է պահել հալ դերասանական խումբ: Բաց քանի ժա-մանակը ուշ չէ, լաւ կը լինէր, որ ձեռնարկէին խումբի կազմակերպութեան և նրա համեմատ էլ ռէպերտուարի պատրաստութեան: Շատ հասկանալի է,

որ խումբի ինչ ուժերից կազմած լինելուցն է կախած ուշադրտուարի պատրաստութիւնը—որ, ինչպէս ուրիշ անգամներ, նույնպէս և այժմ կըրկնում ենք—մեծ խնամք է պահանջում և ալժամանից պէտք է նիւթ դառնալ հոգացողութեան, ի սրտէ ցանկանում ենք ալդ համակրելի գործին գլուխ կանգնող տիկիններին և պարոններին կատարեալ չաջողութիւն:

Մոսկւայի «Փոքր թատրոնում» մեծ պասաճ ընթացքում կալացած «բեռնական դործիչների առաջին ընդհանուր համագումարական ժողովը»—ինչպէս գրում են թերթերը—մեծ աջողութիւն ունեցաւ: Ժողովին նախադասում էր Ն. Կ. Բ. Մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ: Ժողովին մասնակցում էին 1000-ից աւելի բեռնական դործիչներ: Ժողովում քննել են ալն բոլոր խնդիրները, որոնք ալս թէ ալն կերպ խոչնդոտ են դառնում թատրոնական դործի զարգացման: Գալ անգամ առիթ կ'ունենանք խօսելու ժողովի հասած եզրակացութիւնների և կալացրած վճիռների առիթով: Ալդ հետաքրքրում է միզ նրա համար, որովհետեւ հալ բեմը ևս ենթարկւած է շատ ղէպքերում միւննոն անլարմարութիւններին՝ ինչպէս ռուսականը, որի բարգաւաճումը անկարելի է, որ բարերար ազդեցութիւն չունենալ և հալ բեմի համար:

Մ Ա Ր Դ Ա Հ Ա Մ Ա Ր

(Գիւղի բաներից)

Յ. Մ ՈՒՐԱԴԵԱՆՅԻ

Այս տարւաջ լուծարին էր. առաջին ընդհանուր մարդահամարի ժամանակը: Նշանակած լինելով հաշւարար մեր բաժնում (Սուխումի չըջանում), ման էի գալիս տնէ տուն՝ հարկաւոր տեղեկութիւնները գրելու համար: Բացի այն հետաքրքրութիւնից, որ ներկայացնում էր այդ գործը տնտեսական—վիճակագրական կողմից, ուրիշ նշանակութիւն էլ ունէր այդ գործը ինձ համար. դրանով ես առիթ էի ունենում աւելի մօտ ծանօթանալու մեր հալ գաղթականների և մասնաւորապէս նորեկ հալ գաղթականների վիճակի ու կացութեան հետ, որոնց հետ արդէն տարիներ է, որ վիճակել է ինձ ապրել:

Ամենից առաջ՝ գրելը բոլորի համար մի հանելուկ էր թւում. ոչ մէկը չէր կարողանում հասկանալ, թէ դա ուրիշ ինչ նշանակութիւն կարող է ունենալ, բացի նրանից, որ դրանով «փաղիշահը» կ'ուզէ խմանալ ամենքի «հալն» ու «խլարան» (ապրուստը), որպէս զի նրա համեմատ «վերկու» (տուրք) դնի: Զարմանալին այս է, որ ամենքն էլ այդ էին կրկնում. ամենքի ասածն էլ այն էր, որ այդ տեղեկութիւնների ժողովելու հետեանքը նոր «վերկու» կը լինի: Օրինակ էին բերում իրանց Անատոլիան, հարեւակաւ ամիսը (Տրապիզոնի վիլայէթ), ուր «վերկու» դնելու և աւելցնելու ժամանակ իբր թէ նոյնպիսի մարդահամար են արել, տուն ու շունչ ցուցակադրել: Մի խօսքով ամենքը ահ ու վախով էին գրում. մի լաւ բանի չեն սպասում. վիճակագրական-տնտեսական նշանակութիւնը ոչ հասկանում են և ոչ հաւատում. դրա նշանակութիւնը միայն «վերկու» համար են հասկանում, Հալքենիքում, Թիւրքիայի ձեռքին, իրանց տեսածը գոնէ այդ է եղել: Այնքան է ազդել թիւրքական հաշակաւոր «վերկուն» որ ամեն տեղ էլ թիւրքահալ գիւղացին նրանից է սարսափում:

Այդ տեսակ հասկանալով, իհարկէ, այն հարցին, թէ ինչն է ապ-

րուստի միջոցը, նրանք մի քիչ քաշելով էին մատնացույց լինում թու-
թունի մշակութեան վրայ: Ոմանք նոյն իսկ ակնարկում էին, որ ադ-
րուստի գլխավոր միջոցը թութունը չգրելի, այլ «լազտը» (սիմինդր): Ու-
րիշները բացատրում էին, թէ ուտելու համար «լազտն» է, իսկ ծախսի,
«խարջի» համար (աղ, տրեխ, նաւթ կտոր...) թութունը: Բայց էլ շատ ան-
գամ «դեսետինը» (կապալավարձը) տալով, աղի ու «չարոխի» փող էլ չէ
մնում: Ոմանք խելօքներից առարկում էին, որ առաջ «լազտը» գրելի—իբ-
րև ապրուստի գլխավոր միջոց, լետուլ երկրորդականը—թութունը: Ճիշտն
այս է, որ չնայելով մեր կուկասեան ափերի և մասնաւորապէս Սուխումի
չրջանի հազ գաղթականների անունն ելած է իբրև մեծ քանակութիւնով
և ընտիր թութուն մշակողներ, բայց նոյնպէս նրանց մէջ կան ալմախի-
ներն էլ, որոնք թութուն չեն անում: Բայց ինչ սիմինդր չցանող ոչ մի հազ
երկրագործ չկալ: Թութուն ցանողները համարեա միայն վերջերս եկած
հազ գաղթականներից են, թուով շատ քիչ, որոնք կամ լարմար տեղ ու
միջոց չեն ունեցել թութուն անելու և կամ հալոնիքում սովոր չեն եղել:

Նրանք էլ ալդպէս չեն մնալ. վաղ թէ ուշ նրանք էլ կը
սկսեն թութուն մշակել. անքան որ աչսօր չունին. միայն սի-
մինդրն է երևում: Իսկապէս դժար էլ է ասել, թէ որն է նրանց համար
գլխավորը՝ թութունը թէ սիմինդրը: Բայց փող է տալիս, միւսը հաց. եր-
կուան էլ հարկավոր են գիւղացուն. էլի առանց թութունի մի կերպ կա-
րող է ապրել հազ երկրագործը, բայց առանց սիմինդրի՝ շատ դժար.
մեր կողմերի պայմանները զոնէ ալդպէս են ասում: Գանք որ՝ դիւղային
որոշելու համար չէ դժարանում, այլ էլի ան «վէրկուի» համար: Նա մտա-
ծում է, որ կիմանան, թէ թութուն շատ ունին, «վէրկուն» կը դնեն: Ու-
րիշներն էլ հանաքով նկատում էին, թէ առաջին բանը թութունն է, շատ
ունին, բայց թող գրելի, որ «խարջ» ու «գիւլնուղ» (օրավարձ) շատ է գնում,
զրանից էլ բան չէ մնում: Կամ թէ մեր տեղը պաղ տեղ է (Մէքէլդա),
թութուն շատ են անում, բայց գին չունի. 4—5 մանէթի կերթալ փութը.
որն էլ թէ «դեսետինի» գինը հազիւ է հանում, ձեռքին բան չի մնում...
Այսպէս՝ պարապմունքով հազ գաղթականները բոլորն էլ երկրագործ գըր-
ւեցան. շատերի ապրուստի գլխավոր միջոցը թութունը գրեց, իսկ մի
փոքր մասի համար էլ միայն սիմինդր. միւս հացաբոլսերից ոչ մէկը չէին
լիշում. միայն սիմինդրն էր չիւլում: Եթէ չեմ սխալում, ամբողջ կովկա-
սեան ափերում սիմինդր ոչ միայն հազ գաղթականների համար, այլ և
բոլոր բնիկների համար ամենաառաջին հացաբոլսն է: Ճիշտ է՝ ցորեն,
գարի, վարսակ, լոբիա էլ անում են, բայց քիչ չափով. աւելի սիմինդր են
անում: Նորեկներից մէկի համար ծիծաղով նկատեցին, թէ «լազտ» էլ չէ,
լոբիա է եղածը. ուրիշ բան չունի. չունենալն էին ուզում ցուց տալ: Սի-
մինդր չունեցողը արդէն ամենատղքատն է համարւում, իսկ մի քառորդ

դեհեատինից պակաս թութուն ունեցողը էլ թութունի անուն չէ տալիս. բանի տեղ չէ դնում աչդքան քիչ թութունը:

Կանանց համար ամենքի համար էլ մէկ գրեց—երկրագործ իրանց մարդկանց մօտ. ինչպէս որ իսկապէս էլ է, Համարեա մէկը չկա, որի կինը դաշտալին աշխատանքում մասն ու բաժին չունենայ: Աչք մարդու հետ նրանք էլ ամեն աշխատանքի խառնուում են, թողած տնտեսութիւնը, տան կառավարելը, երեխաներին նալելը, «լաթ» գործելն ու ամենածը լքենը»:

Նոյնպէս 12 տարեկանից վեր պատանիների համար գրեց հօր հետ աշխատող, թէ 6—7 տարեկան երեխաներն անգամ իրանց բաժին գործ ու պարապմունքն ունին իրանց հօր աշխատանքի մէջ. նրանք էլ մի մի բանի օգուտ տալիս են: Սուտ չէ որ՝ գիւղացին առանց երեխայի կորած է, զրա համար չէ որ աչքքան շատ են ուղղում գիւղում երեխալ ունենալ. չունեցողները միշտ երանի են տալիս և զանազան ուխտեր են անում բերելու համար:

Գիւղացին քչւորը միշտ աղքատ է լինում. մենակ ձեռքը գիւղում շատ դժուար է. որ մէկին հասնի. ցանքին, դաշափն, մալին, տանը, ջրաղացին... Իրիկուն արտից լետ դառնալ՝ կովը եկած չի լինի. չոգնած չոգնած սար ու ձոր չափշփէ, մանդալ՝ դժուար է, մի քիչ առաջ թողնի արտը, գործը սուաջ չի երթալ. եղները «խամ» լինին, «առջևութիւն» (լծի առաջից գնացող՝ եղնավար) համար մարդ կ'ուղէ. դա էլ երեխայի բան է. երեխալ չունեցողը կնոջն է առջևութիւն անել տալիս. որ մէկն ասեմ. մէկի բանածից ոչ օգուտ կը լինի և ոչ «բարաքեաթ». ոչ էլ ամեն բանի կարող է հասնել: Պատանիների համար տարբերութիւն չէ եղած. մանչ ու աղջիկ 12 տարեկանից վեր հաւատարապէս գրեւ են—երկրագործ հօր մօտ: Եւ իսկապէս տարբերութիւն ամենին չկա. մանչ ու աղջիկ՝ երկուսն էլ օգնում են տան բանին. մէկը միւսից պակաս չի մնալ: Ուրիշ բան է, թէ ընդհանրապէս ինչպէս ամեն տեղ պակաս չի մնալ: Ուրիշ բան է, թէ զիւղում, թէ քաղաքում, ալստեղ էլ առհասարակ աւելի մանչ են ուղում, քան աղջիկ. դա արդէն սովորական նախապաշարմունք է, որ ունի իր պատճառները: Բաց աչք չուղելը միայն սկզբումն է, նոր ծնած ժամանակը. աչքունհետ տարբերութիւնը աչքքան զգալի չէ լինում. աչքքան որ՝ աղջիկը մէկ հերկն ու պատը չի կարող անել, թէ չէ միւս ամեն բանում հօրը կ'օգնէ, մօրը հօ՛ մանչից աւելի: Բաց էլի, ի հարկէ, ում էլ հարցնէք, աւելի մանչ կուզեն, քան աղջիկ. կինը ընդհանրապէս մի ուրիշ զիրք ունի ժողովրդի մէջ, որ համակրութիւն ու չարդանք չէ վալելում ոչ միայն տղամարդկանց, ալ և իրանց շրջանում: Բանն ալստեղ է հասնում, որ մարդ իր կնոջ վերաբերեալ տեղեկութիւնները նոյն իսկ դժարանում է ասել, թէ և դրանց մեծ մասը շատ անմեղ բաներ են. անուն, հալրա-

նուն, ծնած տեղը, պարապմունքը, վիճակը և այլն: Նրիտասարդները հօռլղակի ամաչում են իրանց կնոջ անունը տալուց: Հերթը մէկին եկած ժամանակը, կամ քիչ առաջ, կամ դուրս է գնում, կամ լուռ է: Նրա տեղը դրացին կամ մի ուրիշն է խօսում: Կարծէք թէ մէկին նրա կնոջ անունն ու տարիքը հարցնելը ամօթ բան լինի: Թէն ալսպիսի բաներ էլ են պատահում: Մի հասակաւորի հարցնում են՝ կին ունի՞ս: պատասխանը լինում է. առանց կնոջ մարդ կը լինի: Նահապետական լողիկա. իբրեւ օրէնք ընդունում են, որ մարդ առանց կնոջ չի մնալ, անպատճառ կին պիտի ունենալ, իսկ հարցնելը խորթ է գալիս, քաշելով են պատասխանում: Ի հարկ է ամենքն աղղպէս չեն լինի, բայց շատերն աղղպէս են:

Համարեա թէ չպատահեց մէկը, որ իր կնոջ հօր անունը չգիտենար, ահա ինչ կանանց կողմից աղբ պատահում էր. կալին որ չգիտէին, թէ իրանց մարդը ում որդին է, նրա հօր անունն ինչ է: Տեղ-տեղ նուէն իսկ իրանց մի քանի ամուսն երեխակի անունը չէին կարողանում չիչել, մեղադրելով տէրտէրին, որ կամ դժւար անուն է դրել, և կամ չսիրւած՝ «հօրմի» (չուցի) կամ ալս ինչ անուն, որ ինքը «հազ չի անում» (սիրում):

Աղգանաւան վերաբերմամբ մի նորութիւն էլ ալս է, որ նրանց կարծիքով կանանց աղգանունը ջոկ է, մարդկանցը՝ ջոկ. ալսինքն, որ կնոջ իր հօր աղգովն են չիչում, մարդուն ջոկ իր հօր աղգով: Զարմանալի է, որ ամեն բանում կինը մոռացւում է. հասարակական ոչ մի գործում ու հարցում նրան ոչ հարցնող կալ և ոչ բանի տեղ դնող. ամեն բանում մարդկանց ասածն է անցնում, իսկ ալստեղ կնոջ ինքնուրոյնութիւնը պահպանում է: Նրանք դեռ չգիտեն, որ օրէնքը կնոջը ճանաչում է իր մարդու աղգանունով, և կնոջ անունն ու հօրանունը տալիս՝ հետն էլ կրկնում են նրա հօրական աղգը:

Աղգանուններին դեռ էլի շատերը հին ձևով թիւրքական օղլի են կպցնում, մանաւանդ նոր եկածները, որոնք իրանց կեանքում ու աշխարհում աղգալին ոչինչ չեն ունեցել, բալցի, գուցէ, եկեղեցուց: Ի հարկէ նրանից էլ բան չեն հասկացել, բալց էլի ալնքան՝ որ գոնէ ալստեղ էլ թիւրքերէն չէ եղել, ալ հալերէն, թէն հին ու մեռած լեզու:

Ոչ միայն հալրանունը, ալ և կանանցից շատերը իրանց ու իրանց մարդկանց տարիքն անգամ չէին իմանում: Մի տեղ պառաւի մէկը ասում էր, թէ 400 տարեկան եմ, երեք 100-ը 20-ի տեղ էր ընդունում: Նրան նկատում են, որ ալց շատ կը լինի. ակնարկում է թէ ալսինչ պառաւին ինչքան որ գրել էք, ինձ էլ ալնքան գրեցէք. մի օրալ երեխակ ենք: Դուրս է գալիս, որ էլի ստում է. ալցքան էլ քիչ չպիտի լինի. մի խօսքով կամ աւելի, կամ քիչ. իսկականը ինքն էլ չգիտէր: Մի տեղ էլ մի ուրիշ կին մի քանի հատ պատասխան տւեց տարիքը հարցնողին. ամենաքիչ — ամենաշատը. իսկ շիտակը չասեց: Ուղիղն ալս է, որ շատ շատերը,

Թէ տղամարդ և թէ կինմարդ, բաց աւելի վերջինները, իրանց տարիքը չէին իմանում: Շատ տեղ էլ մտածում էին՝ պակաս ասեն, թէ աւելի: Ոմանք կարծում էին, թէ աւելացնելը օգուտ կ'անի (էլի «վերկուի» տեսակէտից, իհարկէ): Ինչ վերաբերում է տղամարդկանց ու կանանց տարիքին, գրած պատասխանների հիման վրայ—մեծ մասով տղամարդը մեծ էր լինում իր կնոջից: Շատ քիչ տեղ պատահեց, որ տղամարդիկ նկատեցին, թէ իրանց «մօմը» (կին) իրանցից մեծ է. տարբերութիւնը մեծ բան չէ. 2—3 տարի, բաց ամենքի համար էլ խորթ երեւոյթ է: Իրանք էլ դիտեն աչք. աչնպէս որ, տեղ-տեղ երբ հարցնում էի կնոջ տարիքը, մարդը ուղղակի, առանց երկար—բարակ մտածելու, ասում էր—ես որ աչքքան եմ, երեխան էլ 2—3 տարի պակաս կը գրէք. աւելի գրելը «եաքըշուղ» (վազելութիւն) չի ունենալ: Սովորաբար նրանց ցուցմունքով մարդ ու կնոջ տարիքը շատերի մօտ իրար համապատասխան էին: Շատ քչերը կաշին, մէկ—երկուսը համարեա, որոնց տարիքը 1—15-ով աւելի էր իրանց կանանցից: Նկատելու բան էլ աչք էր, որ շատերը իրանց երեխայի իսկական տարիքը չէին իմանում, համարեա թէ մօտաւորապէս էին ասում, թէն դա էլ հին բան չէր, բայց նրանց հարկաւոր չէ եկել:

Թէն շատ տներում ծերեր ու պապեր պակաս չէին, բաց սովորաբար տէրը՝ կառավարիչը միշտ ծերը չէր լինում: Տեղ-տեղ նոյն իսկ հալըը կամ ծերը իրանք էին ակնարկում, որ «կազէինը» աչք ինչն է. իր տղի համար էր ասում: Տեղ-տեղ էլ եղբայրներից փոքրը «կազէին» էր ընդունւում, նաչելով որը աւելի խելք ունի, ձաշնը գիւղում մեծ է լուում և աչն: Իսկ ընդհանրապէս շատերը հալերից, իհարկէ, չէին ուղում իրանց աչք պատւից զրկել, ուղղակի իրանցից էին սկսում:

Կանանց ու աղջկերանց մէջ՝ հարցրածներից՝ ոչ մէկը կար կարգալ իմացող. գուր չէ՝ որ գիւղացին կարդացողին «տիրացու» է ասում: Աղջիկն ինչ պիտի անի «կարդումը», քանի որ տիրացու, տէրտէր դառնալու չէ. պատճառն էլ աչք է, բացատրութիւնն էլ: Նրեխանց ընտանեկան կրթութեան հարցը գոյութիւն չունի գիւղացու օջախում, որ մտածեն, թէ երեխային կրթողը մալրն է. ուրեմն առաջ նրան պէտք է կրթել, որ նա էլ իր երեխային կրթի: Դա արդէն գիւղի համար չապշութիւն է: Ո՞վ ունի աչքքան ժամանակ տանը երեխանց չետեն ընկնելու. աչք էլ հերիք է, որ նրանց դպրոց զրկեն. իսկ մինչև զրկելը, տանը կրթելը—աւելորդ բան է. ո՞վ ունի աչքքան ժամանակ և ինչ պիտի սովորեցնեն: Նրանք գոնէ աչքպէս են դատում ու արդարանում: Սուտ չէ, որ ոչ ժամանակ ունին և ոչ էլ չափունի է, թէ ինչ պիտի սովորեցնեն: Ազատ ժամանակ ո՞վ է տուել գիւղացուն: Գիւղացին մի քիչ ազատ տօներին է լինում. բաց աչք օրերին էլ աչքքան գործ է անում և ունենում, որ կարելի է ասել, թէ պարապ չէ մնում: Քաղաք կամ եկեղեցի աչք օրն է գնում,

մի տեղ ման գալու ալդ օրն է գնում, դրացիներին տեսութիւն, հիւանդին ալցելել և ուրիշ շատ բաներ ու տան պակասներ ալդ օրն է հոգում. իհարկէ՝ ալնալիսի բաներ, որ իր հասկացած «օրէնքը» չխախտեն. ալսինքն ինչ անի-չանի, միայն թէ հողի գործ չանի. թէ չէ՝ «մեղք է»:

Կարգալ իմացող տղամարդկանց մէջ բաւական շատ կար. դրանց մեծ մասը՝ իրանց հալոհների դիւղի դպրոցումն էին սովորել. ի հարկէ՝ չախնի է, թէ սովորածը ինչ պիտի լինի. Սաղմոս, Ժամագիրք. իսկ շատ-շատ՝ Շաբական:

Մալոհնի լեզուն համարեա ամենքի համար հալերէնն էր. Շատ քերը կալին, մի քանի հոգի, ալն էլ նորեկ Տրապիզոն—Պլատանացիների մէջ, որ հալերէն չգիտէին ու թիւրքերէն էին խօսում. Ալն ինչ կանանց մէջ մէկը չկար, որ հալերէն չխօսէր ու չգիտէնար—երեւի իրանց թրքախօս մարդկանց մեղքը քաւելու համար: Ալն մի քանի հատ թրքախօսներն էլ իրարու բարեն ու քահանալին «օրհնեա տէրը» միշտ հալերէն են ասում. Սովորաբար աւելի թրքախօսներ բոլոր հալ գաղթականների մէջ Տրապիզոնի մօտակալ հալ գիւղերից եկածների մէջ են լինում. հալերէն էլ իմանան, թիւրքերէնը ձեռքիցը չեն թողնի: Մի բան, որ նկատեցի. ճանաչում էի նրանց մէջ մի ծերուկի, որ նոյնպէս հալերէն չէր իմանում, բացի բարեից. Նա էլ նորեկներից է. անցած զարնան վերջերն է եկել, դեռ մի տարի չկալ. ինչքան ուրախացալ ու զարմացալ, երբ ալս անգամ նրան տեսալ և հարցմունքներիս հալերէն էր պատասխանում բաւական աղատ: Ծերուկը, որ ալդքան շատ էր սովորել, երևի ամենքն էլ մէկ օր սովորած կը լինին, եթէ ալսպէս նրանցից ամենքը հալախօսների մէջ ընկնեն. Պէտք է ասել, որ Տրապիզոնի վիլայէթի միւս կողմերից եկած հալախօս գաղթականները միշտ նրանց ծաղրում են ալդ բանի համար. Երևի մի կողմից չարունակ նրանց հետ նստել-վերկենալը, գործ ունենալը, ամեն օր նրանց տեսնելն ու լսելը, միւս կողմից նրանց նախատինքն ու ծաղրը իրանց օղոտն են ունեցել: Կամաց-կամաց միւսներն էլ կ'սկսեն հալերէն սովորել: Մէկ օր, երևի, ոչ մէկը չի լինի նրանց մէջ հալերէն չխօսող ու չիմացող, մանաւանդ որ՝ ինչպէս ամեն տեղ էլ նկատեցի, իրանք չգիտեցողներն էլ շատ են ամաչում ալդ բանից: Նրանց կանալք ամեն տեղ էլ ծածկում էին նրանց չգիտենալը և ուղում էին, որ չգրւի նրանց համար, թէ հալերէն չեն խօսում. Իսկ ընդհանրապէս բոլոր հալախօսներն էլ պատւի զգացմունքի դէմ էին համարում նրանց թրքախօս նշանակելը, և ամենքն էլ պնդում էին, որ ինչքան էլ հալերէն չգիտեն, էլի պէտք է հալախօս գրւեն. թէ չէ՝ ինչ կ'ասեն, չէ որ ամօթ բան է—մարդ իր լեզուն չիմանալ:

ՀԱՅ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԸ ԲՈԼՎԱՐԻԱՅՈՒՄ

Վառնա. 20 մարտ 1897 թ.

Գաղթականների հոսանքը, որ ամենէն աւելի ողողեց Բոլգարիան, ալ գրեթէ դադրած է: Շատ էր սահմուկած Պոլսի վերջին կոտորածին արհաւիրքովը և ուրիշ նոր ջարդէ մը ազատելու չոքով ինքզինքնին Պոլսէն դուրս նետել ուղեցին, իրենց գուքերը և կալածները կամ երեսի վրայ ձգելով և կամ չնչին դնով ծախելով:

Ու ահագին բազմութիւն մը ամեն օր կը լեցւէր Պոլսի նաւալին գործակալութեանց գրասենեակը: Պատրիարքարանը, ժողովրդի թախանձանքին վրայ, ստիպեցաւ անցագիր տալու զիւրութիւնները մտածել միայն անոնց համար որ չեն փնտռուիր և կաշկածելի չեն: Կառավարութիւնն ալ ջանքեր ըրաւ, Չամչեան բարձրաշնորհ Բարթողիմոս էֆէնդիին և Նուրիանին հետ, անցագիր տալու դժարութիւններ հանելով, ժողովրդին վախը տղաչական և ծիծաղելի գտնելով և նոր կոտորածի մը անկարելիութեան մասին համոզիչ խօսքեր լոլողելով: Բաւց պարսպ տեղը:

Գաղթականութեան հոսանքը սկսաւ Մարմարալի, Միջերկրականի և Սև ծովու ջուրերուն վրայ, Սև ծովու ալիքներուն պէս բուռն ու պտտաքող և որ շարունակեցաւ ամբողջ չորս ամիս: Հաջ գաղթականը ոտք կոխեց ոչ միայն ամեն նաւահանգիստ քաղաք, ալ և ներքին մեծ ու պզտիկ մօտաւոր և հեռաւոր քաղաքներն ու գիւղերն ալ:

Քանի մը մօտ պզտիկ երկիրներ, Յունաստան, Նգիպոտոս և մանաւանդ Բոլգարիա, հալերուս նկատմամբ շատ հիւրասէր ենթադրեցան, երբ անոնք իրենց նաւահանգիստները բացին մեր առջև: Պոլիս լուրեր կ'ըստացւէին, չես գիտեր թէ ուսկից, ու իբր թէ Բոլգարիա գաղթած բոլոր հաջ արհեստաւորները աղէկ կը չահին, Յունաստան գաղթածները տաք հիւրասիրութեամբ մը ընդունւած են, Նգիպոտոսի գաղթականներն ալ տեղացի մեծ հալերուն և անգլիացիներուն շնորհիւ կրցած են մէլմէկ գործ գտնել և ապրիլ Ալքսանը կը բաւէր սարսափահար հալերը բոլորովին թունդ հանելու համար և առանց երկար բարակ մտածելու, ամեն զոհողութիւն և նիւթական կորուստ չանձն առին՝ երազած օտար երկնքի մը տակն անդորր ապրելու երջանկութեանը համար:

Բողաբարիան ամենէն մօտիկ երկիրն էր, հետեապէս քիչ ծախքով կարելի էր Բողաբարիա անցնել և իմացեցաւ թէ Բողաբար կառավարութիւնը շատ հիւրասէր եղած է գաղթական հայերուն նկատմամբ: Մեթաղբեցաւ թէ բնականաբար աղտէս պէտք էր ըլլալ և Ռումանիոյ պէս իր դուռները տմարդաբար չպիտի փակէր հայերուն դիմաց: Աղբ մը, որ ինքն ալ բռնակալութեան լուծը կրած է վզին և ինքն ալ նոյնպիսի և նոյնքան խժոժանքներու ենթարկած է, որուն հողը արիւնարցունքով թրջւած է, գաղթականներուն վիճակը արգահատելի գտնելով իր եղբօր ձեռքը պիտի երկնցնէր բռնութեան դէմ բողոքող, խաղաղ կեանքի անհուն պապակն ունեցող հալածական ժողովուրդի մը: Ռումանիոյ, Ֆիլիպէ, Շումլա, Բուրգազ և մանաւանդ Վառնա լեցեցան գաղթական հայերով: Բողաբար, նաւալին զործակալութիւնը անազին շահեր ըրաւ և հին նաւ մը, որ իբր անպէտք և աւելորդ պիտի ծախէր, իր արժէքովը դրամ շահեցաւ՝ գաղթականներ փոխադրելէն: Տուներուն, սենեակներուն վարձքը եռապատկեցաւ, քառապատկեցաւ, ինչպէս նաև ուրիշ կարգ մը անհրաժեշտ եղող վաճառքներուն արժէքը: «Հիւրասէր» բողաբարները միայն ասոնցմով չբաւականացան, ասան վարձքը տարեկան և վեցամսեալ կանխիկ ուզեցին. շատ անգամ բռնութեամբ իրենց տունէն դուրս հանեցին հալ վարձուորը, որովհետև ուրիշ մէկը ամսական քանի մը ֆրանկ աւելի կուտաւ եղբր: Գաղթականներուն քովի քանի մը ոսկիներ շուտ մը անցան բողաբար տանտէրներուն ձեռքը. և հետզհետէ անգութ ալ եղան անոնք. միշտ սակարկութեան մը պահուն սա խօսքն է, որ կը լեղկեղէր մեզի, շահամոլութեան ցուրով վառելով աչւընին:

—Ձեր քով դեղին ոսկիներ տակաւին շատ ըլլալու են. դուք ալ շատ շատ տալու էք մեզի...

Ի՞նչ գործեր կրցան գտնել Բողաբարիոյ մէջ գաղթական հայերը: Հալ արհեստաւորը, ինչպէս նաև բժիշկն ու դասատուն, սկսան պարապ վեր վար պտըտել՝ գործ գտնելու կարելիութենէն լուսահատած: Փանի մը սըրճարաններ և ճաշարաններ բացեցան, ուրիշ գրեթէ ոչինչ աւելի: Վառավարութիւնը արգելեց հալ բժիշկներուն և դեղագործներուն հոս իրենց արհեստովն զբաղիլ, ինչ կարգի վկայական ալ ունենան: Նոյնպէս աստեմ մը լանկարծ վաւել տաւ հալ հացագործներուն փուռերը, ասպարէզը բոլոր հացագործներուն միայն թողլով: Հոս հայերը հացի անազին սպառում պիտի ընէին, ու հալ հացագործները իրաւունք պիտի չունենալէն իրենց արհեստը բանիլ...

Բողաբարիոյ գաղթական հալը անգործունէութեան և անօթութեան դատապարտած էր. ու ձմեռը արդէն եկած էր, բողաբարական խիստ ձմեռը, որ արհաւիրք մը պիտի ըլլար անգործ, անօթի, անսպասույթ հալ գաղթականներուն համար: Բողաբար կառավարութիւնը ոչ մէկ միջոց

չխորհեցաւ խեղճերուն օգնելու և արհեստաւորներուն գործ հալթհալթելու համար. տեղացի հալերը ահնչափ ողորմելի են, որ ոչ կրնան ուղել և ոչ ալ կարող են օգնել իրենց ազգակիցներուն: Գաղթական աղքատ դասակարգին վիճակը շատ չուսահատական էր. և քանին Պոլիս դարձան, երբ թիւրք կառավարութիւնն ալ պալմանաժամեր կուտար իր դարձողներուն համար, հակառակ պարագային անոնց ստացւածքը—եթէ երբէք ունին—գրաւելու սպառնալիքով:

* *

Այս տխուր և չուսահատական վիճակը շատերուն ենթադրել տւաւ թէ իրենց ամէն տեղ ճակատագրւած է դժբախտ ու թշուառ ըլլալ. ու իրենց գաղթելուն զղջացած, շատեր փափագեցան ետ դառնալ. և քանին եր ալ դարձան:

Հալասէր անգլիացի մեծ դիրքով մարդ մը, Ուէստմինստրի դուքսը ճիշտ ժամանակին օգնութեան կը հասնի Բոլգարիոյ տասնեակ հազարաւոր խեղճ գաղթականներուն. հոս զրկեց Կանադացի միսիոնարուհի մը, օրիորդ Ֆրայզըր, որ հաչ քաղաքներ պտըտած ու չորս տարի Վան ապրած է, որ մօտէն կը ճանչնայ հալերը և հալերէն խօսիլ, գրել ալ սորւած է: Օրիորդը քանի մը վստահելի կարծւած հալերէ իր կազմած չանձնաժողովին հետ գործի սկսաւ: Մեծ շէնք մը վարձեց, որ առաջ հիւանդանոց է եղեր, և հոն պատուարեց բնակարան չունեցող և անկարող ընտանիքները. կարօտներուն հագուստ, կօշիկ, վերմակ և հաց տրեցաւ: Կօշկակարի հաչ գործատուն մը իր 60 բանւորներով չէր կրնար համեմատ ստացած անհատնում ապսպարանքներուն, նոյնպէս ալ հիւանդանոցի մէջ աշխատող դերձակները շարունակ չափ կ'առնէին: Հացը կը բաժնէր և կը բաժնի ալս իբր ապաստանարան ծառաւոր հին հիւանդանոցի շէնքին մէջ, որ քաղաքին կէդրոնէն և քաղաքէն բաւական հեռու է: Օրիորդ Ֆրայզըր չուզեց պզտիկ կարգադրութեամբ մը ալք բաժնելիք հացերը ուղղակի կարօտներուն բնակարանները զրկել, որպէս զի անոնք չստիպւէին մուրացկանի պէս գալ հեռու տեղերէ և հացերը թեքնուել տակ առած ետ դառնալին՝ խուսափել ջանալով հետաքրքիր նաւածքներէ: Հաց առնելու համար հիւանդանոց—իր հին անունը կուտան օր. Ֆրայզըրի վարձած շէնքին—գնացողներուն մէջ շատ մը կիներ և աղջիկներ կան, որոնց մէջ կը գտնուին տնայնիկներ ալ որ տարի մը առաջ հարուստ կը համարուէին, ու ալսօր ամէն բան կորսնցուցած են: Հոս տեղի գաղթականները միայն Պոլսեցիներ չեն, Թիւրքիոյ ամէն կողմէն եկած են, Ակնէն ալ, ինչպէս Գասթէմունիէն ալ: Անգլիացիներու կողմէ մեզի եղած ալս համակրանքի արտայայտութիւնը իրաւցնէ ամէն շնորհակալութեան արժանի է. բալց տալու եղանակը շատ գէշ էր և շատ պախարակելի, շատ ստորնացուցիչ: Անձնասիրութեան, ամօթ խածութեան ամէն զգացում գուցենով իր մէջ՝ հաչ աղջիկը պէտք է

Թերթալ եղեր ալը հիւանդանոցը՝ բոււ մը հացի համար, ինքն ալ պիտի մտնէ «հաց առնող»-ներու խումբանին մէջ, հացը պիտի ուղէ և ձեռքն առած իր տեղը պիտի դառնալ։ առաջ խաղնելով, բալց հետզհետէ վարժելով՝ համակերպութեամբ մը մանաւանդ ուրիշներու օրինակին ալ հետեւելով, ուրիշներու, որ կը պոռկտան, կռիւներ կ'ընեն՝ կտոր մը հաց աւելի առնելու համար, երէկան ամօթխած և խաղկոտ աղջիկը կամ տղան ալսօր ամուր երես մուրացկան մը եղած պիտի գտնէք...

Ու մարդ կը փորձէի հարցնել թէ նպաստի ալս գործը մեզի համար օգտակար է թէ միաստակար։ Գաղթականներէն եղան շատեր որ սրճարան, ներու հեղձուցիկ օդին մէջ ինքզինքնին տւին առուընէ մինչև իրիկուն նարդ կամ թուղթ խաղալու և բնաւ հետամուտ չեղան գործ մը գտնել, վախճալով որ իրենց և իրենց ընտանիքին եղած նպաստը կը կտրի, երբ իրենք սկսեն շահիլ։ Վերջերս օրին մէկն ալ երբ օրիորդ Ֆրաչզըր կ'ըստիպէի տրւած հացին քանակը պակսեցնել, փոխանակ մէկ հօխալի, կէս հօխալ տալ, ահազին գոռում գոչում մը կը փրթի «հիւանդանոց»-ին մէջ։ մէկ կողմէ հոն գտնւած հացը քանի մը վաւրկեանի մէջ լախտակելով ասղին անդին կը փախնին, միւս կողմէն ալ օրիորդին վրա կը վազեն, բողբելով, զարանալով հացին պակսելուն մասին։ Օրիորդ Ֆրաչզըր կ'ըստիպէի ոտիկան կանչել, որոնք քանի մը երկտասարդ կը ձերբակալեն և նաչալնիկին հրամանով սոսկալի կը ծեծեն։ մէկը գրեթէ մահամերձ է։ Թէև Նաչալնիկին և ոտիկաններուն ըրածը շատ պախարակելի է՝ պատիժին ծաւրալեղութեամբը, բալց կտոր մը հացի համար ալսքան իրարանցում, ալսքան չիտթ հանելը անտեղի է և չարդարացւոր, կրնալին անոնք օրինաւորութեան սահմանին մէջ օրիորդին դիմել և խնդրել որ շարունակէ ան հացին նպաստը առջի քանակովը։ բնական է որ օրիորդ Ֆրաչզըր իր պատասխանը պիտի տար և ալրպէս ընել ստիպւած ըլլալուն ալ բացատրութեամբ մը գոհացնէր իրեն դիմողները։

Արդէն ժամանակէ մը ի վեր ալլես չեն տրւիր հագուստ, վերմակ, կօշիկ։ հացի նպաստը կը շարունակւի սակաջն։ Օրիորդ Ֆրաչզըր թերես ամիսէ մը մեկնի Վառնալէն։ չգիտեմ թէ աչն ատեն մուրալու վարժւած գաղթականները ինչ պիտի խորհին ընել։

Ըսի թէ օրիորդ Ֆրաչզըրի նպաստի գործը՝ իր վիրաւորիչ և դալթակղական կերպով տրւելու դրութեամբը՝ քննադատելի է։ նոյն բանը կարելի չէ ըսել միւթըր Աղամսի, որ հոս երեք գործատուներ (fabriques) բացաւ, ուր կ'աշխատեն գոհացուցիչ աւուրչէքով մը հալ արհեստաւորներ։ Արտադրւած գործերը, ինչպէս նաև ուրիշ ձեռարեւտի անհատական արդիւնքները կը ղրկւին Անգլիա և հոն կը ծախւին։

Չերկարելու համար չեմ խօսիր աչն ամբաստանութեանց մասին որ, եղան օրիորդին գործակից Կանձնաժողովին մէկ քանի անդամներու նկատմամբ, իբրև զրամ իւրացնող։ մեծահամբաւ հաճի Կիւլպէսէրը—նախկին

ձկնորս մը—կրցած է 6—700 ոսկի գրպանել՝ գնւած մեծաքանակ ապրանքները ինք սակարկելով:

* *

Տասնըփնգ օր առաջ հոս քաղաքապետութեան կողմէ հրատարակւած և զինւորական պաշտօնէութեան ալ վաւերացւած ազդարարագիր մը կը ծանուցանէր քիչ մը կծու լեզուով թէ անգործ պտըտողները մինչև մարտի 15-ը Բուզարիոյ միւս քաղաքները երթալով գործ մը պէտք է ձարեն:

Մարտ 15-ը եկաւ, ու ոստիկանները տուն, սրճարան խուզարկելով՝ շատ մը գաղթական հաւեր բռնեցին և ալլալ քաղաքներ ու գիւղեր ղրկեցին, աւելի ճիշտ՝ աքսորեցին: Այս ղրկւողներուն մէջ կան նաև գործ ունեցողներ, գրամատէրներ, ընտանիքի հաւեր, բաց ոստիկանները ոչ մէկ բան լսել կ'ուզեն: Չորս օրէ ի վեր մօտաւորապէս 300 հաւ ժողովեցին և ալլալ անկիւններ ղրկեցին: Հաւ արհեստաւորը ինչ գործ կրնալ ընել բոլգարական գիւղերուն մէջ, ուր բնիկները բարձրով, ճաշակով ու ամէն բանով շատ կոշտ են և մեզմէ շատ վար: Վառնա, Բուրգազ Պոլսի մօտ և ծովեզերեայ քաղաքներ ըլլալով, մանաւանդ հալաշատ կեդրոններ դառնալով հետզհետէ, ամենէն չարմար տեղերն են հաւ գաղթականներուն համար արժամապէս մնալու և ապրելու:

Այս տարօրինակ ծանուցագիրը և անոր խիստ գործադրութիւնը իր պատճառներն ունի: Երբ ոստիկանները մեռցնելու աստիճան ձեռնեցին «հայ աւելի ուզող» ներէն մէկ քանին, ալստեղէն քանի մը հաւեր Սոփիա հեռագիրով մը բողոքեցին գործադրւած բարբարիկ պատիժի մասին: Սոփիաէն անմիջապէս քննիչ մը եկաւ հոս՝ և չանցաւոր գտաւ տուած խիստ պատիժին համար ալն պաշտօնեան, որ հրաման տւած էր ալղպէս և ալղքան ձեռնելու: Բնականաբար հաւերուն կողմէ եղած բողոքը և անոր հետեանքը զալրութ է պատճառելու ալստեղի քաղաքապետական և զինւորական պաշտօնէութեան չրջանակին մէջ: Այս բողոքով տեղացի միւս աղգերուն գէշ օրինակ տւած եղան (1) հաւերը՝ անոնց սորեցնելով, որ արդարութեան պաշտօնեաներն ալ կը սխալին և անոնք ալ իրենց սխալին համար պէտք է պատժւին: Հաւ զարգացած երիտասարդներ կը մտերմանան և չարաբերութեան մէջ կը մտնեն եղեր բուլգար երիտասարդութեան հետ, ալս չարաբերութիւնն ալ, չես գիտէր ինչու համար, գաղթակողական և անախորժ կը թւի իրենց: Ահա Վարնայէն հաւերը ցիրուցան ընելուն շարժառիթները:

Քանիներ ալ ալս «աքսորին» շարժառիթ կը համարեն մարդասպանութիւն մը, որ երկու հաւ, աներ ու փեսայ, գործած են իրենց մէկ ընկերով 70 ոսկին կորզելու համար: Չորս ամիս առաջ կատարւած ալս ոճիրը անցած չարթու մէջտեղ ելաւ՝ զիական հետ, երբ արդէն հրատարակւած

էր քաղաքապետութեան ծանուցագիրը: Բնականաբար ոճրագործին համար պէտք է տուածն իր ազգակիցները. եթէ աչդպէս եղած ըլլար՝ պէտք էր նաև վաճառել թիւրքերը, որ վերջերս տարօրինակ խլրտումներ ունին: Վանի մը քաղաքներու մէջ տաճիկներուն տուներն ու մզկիթը խուղարկելով մեծ քանակութեամբ զէնք և ռազմամթերք գտնւած են. հոս ալ մզկիթին մէջէն զէնքեր գտնւեցան. աչ բոլոր պատրաստութիւնները ժամանակէ մը ի վեր կը տեսնուեն եղեր և բոլգար կառավարութիւնը, Թուրքիոյ բարեկամ ըլլալով, կ'երևայ թէ ահագին վտահովութիւն ունէր տաճիկ հպատակներուն վրայ: Թիւրքներուն աչ խլրտումներուն նպատակն է ներսէն օգնել իրենց ազգակիցներուն, երբ պատերազմ տեղի ունենալ Ադրիանապոլսի համար բոլգարներուն և թիւրքներուն միջև: Ամեն տարի բացրամէն ետքը Պոլսէն թիւրք սոֆթաներ կուգան աչ կողմերը՝ հոգևորապէս մխիթարելու համար իրենց ազգակիցները, ասոնք իրենց նւիրական պարտականութիւն կը համարեն դրզուել Բոլգարիոյ հպատակ միւտիւման ներք՝ ապստամբական ցոյցեր սարքելով բոլգար կառավարութեան դէմ: Մուհամմէդին արժանի դաւակ կարենալ ըլլալու համար: Չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար Բոլգար կառավարութիւնն ալ չարգելեր աչ հոճաններուն անախորժ աչցելութիւնը և քարոզութիւնները: Թիւրքերը հոս հաջու տուն մըն ալ կը կոխեն՝ ահաբեկելով անոր բնակիչները: Տակաւին ո՞վ գիտէ ինչե՞ր ալ երևան պիտի գան հետզհետէ: Կառավարութիւնը կը բաւականանալ քանի մը թիւրք ձերբակալելով. հալածանք բնաւ չկալ թիւրքերուն համար:

*
* *

Բողոքական հալ պատուելի մը, պարոն Ամիրխանեան, եկաւ անցաւ աչ տեղէն, որ Գերմանիա տանելու եկած էր 7—10 տարեկան հալ տղաներ, հոն որդեգրել տալու համար:

Հոս քանի մը երիտասարդներ Ամիրխանեանի դէմ բողոքեցին և անոր ձեռքէն կորզեցին ժողած պզտիկները. պատուելին բարկացաւ, պարսաւեց աչ երիտասարդները, որ ապերախտ կ'ըլլան իրենց բարերարներուն, Բիսմարկի ազգակիցներուն դէմ:

ԱՆՑՔԵՐԸ ԿՐԵՏԵՅՈՒՄ

Մինչև Եռյն-տաճկական պատերազմի յայտարարութիւնը

(Շարունակութիւն)

Ծովապետները յայտարարութիւն տւին, որի համաձայն ծովային պաշարման սահմաններում յունական նաւերի հետ պիտի վարեն որպէս թշնամական նաւերի հետ: (Հեռագիր Ստանդարտ լրագրի. 13 մարտ հին տոմար):

Կանդիա քաղաքի մօտ, Գազիպոլմ, լուրջ կռիւ եղաւ, ուր թուրքերը մեծ կորուստ ունեցան և յետքաշւեցին դէպի Կանդիա (16 մարտ):

Թրքական մի վաշտ Մալաքսի (Կանէայից $1\frac{1}{2}$ մղոն հեռու) բլրկհառւղում ¹⁾ շրջապատւեց յունական ապստամբներով, և զրկւեց ուտեստ բերելու հնարաւորութիւնից. ծովապետները սպառնացին ապստամբներին, որոնք ուշք չդարձրին: 13 մարտի եւրոպական նաւերից հրաձգութիւն եղաւ վեց րոպէ. ապստամբները կողոպտեցին և այրեցին բլրկհառւղը. 14-ին մարտի եւրոպական զօրքերը վերցրին բլրկհառւղը, հեռացրին թիւրք վաշտը: Կանէան պաշարւած է ապստամբներով և քաղաքին սպառնում են հիւանդութիւններ և քաղց: Ծովապետները պահանջեցին նոր զօրքեր իրենց տէրութիւններից, յայտնելով որ Կրետէյում դրութիւնը այնպէս է, որ կարծես գնդապետ Վառոս բացարձակ պատերազմ յայտարարած լինի մեծ պետութիւններին:

Մարտի 19-ին Թալմսին հեռագրեցին Սալոնիկից, թէ Թիւր-

¹⁾ Բլրկհառւղ միմեանց վրայ դարսած ծառերի բներից կաղմած շուրթիւն, որ չարմարեցրած է հրաձգութեան համար:

քիան էլաստնի մօտ կենդրոնացրել է 50.000 զօրք և 300 կրուպ-
պեան թնդանօթներ, սպասելով թէ Յունաստանը ցամաքով զօրքեր
կ'անցկացնի Թիւրքիայի սահմանները:

Մարտի 18-ից Ստանդարտին հեռագրեցին Կրետէյի Սպի-
նալունգա տեղում եղած կռիւ մասին, որ շարունակւել էր 48 ժամ.
Թրքերը մեծ կորուստներ ունեցան և յետ քաշեցին դէպի կղզու-
խորքը, ամուր տեղ:

Մարտի 19-ին ապստամբները յարձակեցին Իզեդզին ամրոցի
վրայ, որը իշխում է Սուդի ծոցի վրայ. եւրոպացիք հրաձգեցին
կրետացոց վրայ՝ պաշտպանելու համար ամրոցը, որ բռնւած է
Թուրքերով, որոնք ունին 12 թնդանօթ և մի միտրայլեօզ: Յար-
ձակումը կրկնեց մարտի 20-ին:

Մարտի 21-ին յայտնի է կացուցում որ մեծ պետութիւն-
ները համաձայնել են պաշարել Յունաստանի ափերը: Եւրոպական
զենեակ-նահանգապետ նշանակելու համար համաձայնութիւնը բո-
լոր տէրութիւններից չի տրւած:

Յունաստանը կենդրոնացնում է իւր նաւային ոյժերը: Պայ-
թուցիկ նաւերը կենտրոնանում են Վոլօի ծոցում, թափաժառանգ
Գէորգի հրամանատարութեամբ:

Մովսպեաները նոր պահանջ արին 50-ական հոգի ևս ուղար-
կել. (22 մարտ):

Կ. Պոլսում Թիւրքական մինիստրների ժողովում քննեցին
լուրերը այն մասին թէ Յունաստանը պատրաստում է մարտի
25-ին պատերազմական քայլ անելու. վճռեց արտակարգ զինու-
թական և ոստիկանական միջոցների դիմել:

Մովսպեաները համաձայնում են ընդունել Վասոսի յայտնած
պայմանը, որ Թիւրք զերիները ետ տրւեն պայմանով, որ նոքա
այլ ևս չմասնակցեն կռիւների մէջ:

Թիւրքիան նոտա է ուղարկում պետութիւններին, որով պա-
հանջում է որ Յունաստանը իւր զօրքերը յետ կանչի Կրետէից և
յայտնում, որ այլապէս Բ. Դուռը պատասխանատուութիւնը կը ձգի
Յունաստանի վրայ:

Յունաստանից ղուրս են վռնտում երեք զերմանական թըղ-

Թակիցներ, որոնք քննադատաբար էին վերաբերում դէպի յոյն կառավարութիւնը: (25 մարտ):

Կրետէի գեներալ-նահանգապետի պաշտօնի համար անւանում են պրինց Պրանց-Յովսէփ Բատտենբերգին:

Մարտի 26-ին հեռագրեցին Լոնդոնից որ պետութիւնները ընդունել են ռուսաց արտաքին գործ. մինիստր կոմս Մուրաւիովի առաջարկը, որով պիտի յայտնւի Թիւրքիային և Յունաստանին, որ եթէ նոցանից մէկն ու մէկը չարձակողպահան զիրք բռնելու լինի, յարձակող կողմը պիտի պատասխանատու ծանաչուի եւ նրան չպիտի թոյլ տրուի այդ քայլից որ եւ է օգուտ քաղել: Երկու պետութիւններին ուղարկած է այդ նոտան:

Թացմսի տեղեկութիւններով Կ. Պոլսում դեսպանները մշակել են Կրետէի ինքնավարութեան ծրագիր. կրեաական ազգային ժողովին տրւելու է իրաւունք կղզու գեներալ-նահանգապետը ընտրել:

Մովպպետները համաձայնութիւն կայացրին Յունաստանի Պիրէյ նաւահանգիստը պաշարելու մասին: Կրետէ ուղարկում են նոր զօրքեր Անգլիան, Ռուսիան և Ֆրանսիան:

Սիրիայում (Կրետէ) կենդրոնանում են ապստամբները. Ֆրանսիական «Գեներալ Դանդի» նաւի հրամանատարը, յարձակում ապասելով, ափ իջեցրեց 5 թնդանօթ:

Սուդի ծովն եկաւ ռուսաց մի կրէյսէր՝ մի բաւաւիճ՝ զօրքով և 6 թնդանօթով:

Սուլթանը հրաւիրեց Բուզարիայի իշխանին գալ Կ. Պոլիս (28 մարտ):

Յուլոնից ճամբայ ընկան դէպի Կրետէ 2 ռուս . Ֆրանսիական զօրք. Լեւանտ ուղևորեցին երկու պաշտակիրներ (29 մարտ):

Կիսամօջում (Կրետէ) յոյները ընդդիմացան որ ափ իջնեն տեղական գարնիզոնի մի քանի օֆիցէրներ և զինւորներ, որոնք ափին մօտեցան անգլիական և աւստրիական զրօշակների տակ. աւստրիական զրահակիրը սկսեց հրաձգութիւնը Կիսամօջում, ուստից մահմեդական ընտանիքները պիտի փոխադրեն Կսնէա (29 մարտ):

Յայտնի է դառնում որ անցեալ շաբաթ Դուռը երէք շրջաբերական է ուղարկած եղել, պահանջով որ յոյն զօրքերը հեռանան Կրետէն և որով գանդատում է այս անսարդարողութեան վրայ, որ

այնտեղի թիւրքերին զինագլուխք են անում, մինչդեռ քրիստոնեաներին թոյլատրում են զէնք գործածել:

Դուռը, 29 մարտի, դեսպաններին յայտնեց որ եթէ եւրոպական միջամտութիւնը կրետական գործում ձգձգւի և անզօր լինի, թիւրքիան կը սկսի ազատ գործել. Դուռը պահանջում է որ Կրէտէին տրուելիք ինքնավարութիւնը չխանգարի թիւրքիայի ծայրագոյն իրաւունքների ամբողջութիւնը:

Կրետէի մօտ կանգնած նաւախմբերի գլխաւորը պնդում է, որ փորթալին քաղաքներից հեռացւեն մահմեդական զաղթականները:

Ապստամբների բռնած թշնամական դիրքի համար՝ Կասիմօյում նաւերը արձակեցին 80 անգամ: Կարծում են որ շատ ապստամբներ սպանւեցին:

Ելատոնից ((յոյն տաճկական սահմանագլուխ) հեռագրեցին մարտի 29-ին, որ յոյն կամաւորները անցան տաճկական հողի վրայ Գրեկենայի մօտերքում. թիւրք զինւորները հրաձգեցին. Էդհէմ-փաշան (տաճիկ զօրքերի հրամանատար) հրամայեց պատրաստուել:

Էդհէմ փաշան հրաման ստացաւ անցնել սահմանը, եթէ կը համոզւի որ թիւրք հողի վրայ անցնող յոյների մէջ կան կանոնաւոր զօրքեր: Դրութիւնը համարւում է շատ լուրջ:

Սերբիական և բուլղարական դիպլոմատիական ագէնտները յայտնեցին սուլթանի պալատին որ եթէ Յունաստանը պատերազմ սկսի՝ Սերբիան և Բուլղարիան հանգիստ կը մնան (29 մարտ):

(Սուլթանը իրաւունք տուաւ Մակեդոնիայի Պրիլիպա քաղաքում սերբիական դպրոց բանալ, բուլղարացիք խիստ ջուղւում են և սպառնում եկեղեցական նշուխտի աջն բուլղարներին, որոնք իրենց որդիքը կը տան այդ դպրոցը):

Կ. Պոլսում մարտի 30-ին մի բրոշիւր տարածւեց, ուր նկարագրւում են քրիստոնեաների անգլթութիւնները Կրետէի մահմեդականների դէմ և վրէժխնդրութեան կոչ է անւում:

Էդհէմ-փաշան հեռագրեց թէ յունական զօրքերը մարտի 29-ին անցան սահմանը, փողահարութեամբ, Կրանիից 2 ժամ հեռու, թնթանօթի կրակով քանդեցին բլուհատուղը Բալտիմօյում, այրեցին պահնորդ տները Վենիկայում, Բիօտիցում և Սորունէյայում: Բ. Դուռը շրջաբերական հեռագրով դիմեց իւր դեսպաններին:

րին, որի մէջ անւանում է յոյներին որպէս յարձակող կողմ և նոցա վրայ է բարձում պատասխանատուութիւնը թշնամութիւններ սկսելու համար:

Սալայն հրամանը սահմանն անցնելու համար յետ առաւ սուլթանը, երբ յոյները ետ քաշւեցին: Յոյն կառավարութիւնը հերքեց իբր թէ կանոնաւոր զօրքերը միացած լինեն կամաւորների հետ թուրքերի վրայ յարձակելիս: Ապրիլի 3-ին Դարդանեղից զուրս եկաւ առաջին թրքական նաւախումբը: Սահմանի վրայ կամաւորները ամուր ոտք դրին Պինդոսի վրայ: Ապրիլի 5-ին Թիւրքիայի արտ. գործերի մինիստրը հաղորդեց զեսպանին թէ յոյն կանոնաւոր զօրքերը անցան սահմանը և յարձակեցին թիւրք զօրքերի վրայ Բայրակդարա, Կոդոն, Պերդիկի, Սոյոստեն և Ուլեսիօյի մօտ և 3 ժամ տեւած կռիւց յետոյ ետ մղւեցին: Թիւրքերի ասելով ապրիլի 4-ին յոյները 7 տեղերից անցան թրքական սահմանը:

Ապրիլի 5-ին ղեկավարողական յարաբերութիւնները Յունաստանի եւ Թիւրքիայի մէջ խզւեցին, Թիւրքիայի ղեսպանը Աթենքից, եւ Յունաստանի ղեսպանը Կ. Պոլսից յետ կանչւելով:

Այս դէպքերով սկսեց յոյն-տաճկական պատերազմը, որով Կրետէի անցքերը կորցնում են իրենց հրաշապ հետաքրքրութիւնը: Կրետէյում գործերը մնում են նոյն դրութեան մէջ. յունական զօրքը գեներալ Վասոսի հրամանատարութեամբ, յոյն ապստամբների հետ բռնել է կղզու մեծագոյն մասը. թիւրք զարնիզոնները նեղ դրութեան մէջ՝ Թիւրքիայից օգնութիւն չեն կարողանում ստանալ. եւրոպական նաւախումբերը պաշարել են կղզին և բռնել մի քանի նաւահանգիստներ, ունենալով իրենց կարգադրութեան ներքոյ փոքրիկ զօրք, բաւական միմիայն՝ որ ոչ յոյները և ոչ թիւրքերը օգնութիւն ստանան դրսից:

Ներկայումս, երբ գրում ենք այս առդերը (17 ապրիլ), թիւրքերը, յոյներին թրքական հողից յետ մղելուց և յունական սահմանը անցնելուց յետոյ՝ Էգէնա փաշայի հրամանատարութեամբ

վերցրել են Յունաստանի հիւսիսային սահմաններին ամենամօտ
գտնուող Տիրնաւոս և ապա հարթավայրում գտնուող Լարիսսա քա-
ղաքները, ու գտնւում են Վոլո քաղաքի մօտերքը: Այսպիսով ներ-
կայումս Յունաստանի Թեսալիա պրովինցը պիտի համարւի թիւր-
քերի ձեռքում:

Ն.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՄՈՒՐՃԻ ԳԱԼ № 5-ը ի միջի ալոց պարունակելու է—Լ. Մանուէլեանցի «Խորտակած կեանք» վէպի առաջին մասի վերջը.—Բէօրնսէնի «Հաւատարմութիւն», Բաբկենցի «Նորեկ» վէպի վերջը, Միք. Յովհան. նիսեանի «Էւոլյուցիա» չօղածի շարունակութիւնը.—Սովասիլնաչի (իշխ. Սոֆիա Երկաչնաբազուկ-Արղունթեանի) մի նամակաձև չօղածը կանանց խնդրի մասին.—Կ. Կուսիկեանի «Բանաստեղծ-քաղաքացի. Ռաֆ. Պատկանեանի գրական գործունէութեան ընդհանուր բնագիծը».—Մադաթ Պետրոսեանի «Ղազարի գաւառի դիւղացիների ներկայ գրութիւնը—Կոփի դիւղը» չօղածի վերջը:

ՇԱՆԹ, Մուրճի աշխատակիցը, Կ. Պոլսի անցեալ տարւոյ չափնի զէպքերից չեռոյ կորցրած լինելով ալն օգնութիւնը, որ մի խումբ բարեկամներ երեք տարի հասցնում էին նրան՝ Գերմանիայում բարձրագոյն ուսումն առնելու համար, 1896 թ. դեկտեմբերի 20-ին Լալպցիգից Թիֆլիս եկաւ չուսալով նոր ապահովութիւն գտնելու՝ 2—2½ տարի ևս ուսումը շարունակելու համար: Այդ ապահովութիւնը նա գտաւ և մարտի 30-ին ուղևորեց Նորից Գերմանիա:

Մինչ այժմ նա եղել է Մնա և Լալպցիգ՝ նախ մանկավարժութեան և ապա բնական գիտութիւնների համար. ապուհետեւ նա պիտի չնչիրի իրեն գլխավորապէս գրականութեան կուրսերին և մասամբ քաղաքական գիտութիւններին:

ՄՈՒՐՃ-Ը ՆԻՒՐՈՂՆԵՐ (շարունակութիւն). պ. Մարտիրոս Մանուսեան—Բարալէթի հալ-փրացական կենդրոնական ձրի գրադարան-ընթերցարանին, հետեւալ նամակով, որ աւելորդ չենք համարում հրատարակել, իբրև գիւղական կեանքի մի գիծ.

«Կարդալով Մուրճի անցեալ տարւոյ վերջին երկու համարներում Ձեր նկատողութիւնները՝ հալաբնակ մեծ գիւղերի Մուրճի բաժանորդութեանը մասնակցելու մասին և համակրութեամբ ընդունելով Ձեր առաջարկութիւնը, պարտք եմ համարում, իբրև մի մեծ գիւղական համայնքի տանուտէր-ներկայացուցիչ, ներփակած ուղարկել տասը ռուբլի և չարգոյաբար խնդրել, որ Մուրճի ալս տար»

ապ մի օրինակը իմ կողմից նւէր ուղարկէք Բարալէթի հալ-վրացական կենտրոնական ձրի գրադարան-ընթերցարանին: Աւելորդ չեմ համարում չափոնել, որ ինձ հաւատացած գիւղական համայնքը բաղ-կացած է 23 գիւղերից, որոնցից մէկը թրքաբնակ է, երեքը վրա-ցաբնակ, մէկը խառն հալ-վրացական գիւղ է, իսկ 18-ը զուտ հալա-բնակ են. վերջիններից էլ 4-ը աչքի ընկնող մեծ գիւղեր են: Ուրեմն ալ տարի Մուրճ պիտի կարգաչ Բարալէթի համայնքի 19 հալաբնակ գիւղերի գրագէտ տարրը: Տանուտէր Բարալէթի գիւղական համայնքի Մարտիրոս Մանուսաճեանց»:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ Խորագրով Մուրճ'ում տպւած ԲԺ. Թ. Զաքարեանի չօղածը արտատպութեամբ լոյս է տեսել առանձին գրքով: Գինն է 20 կոպ. և վաճառւում է Մուրճ'ի խմբագրա-տանը:

ԱՒՍՏՐԻԱՅԻ ԿԱՅՍՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ: Ապրիլի 13-ին վիեննայից դուրս գալով Աւստրիայի կայսր և Ունգարիայի թագաւոր Ֆրանց Յովսէփ II հասաւ Պետերբուրգ ալցելութեամբ թագաւոր Կայսր Նիկոլային և վերադարձաւ 17-ին:

ԲԱՎԱՐԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Ռուսաց և Աւստրո-Ունգարիայի արտաքին գործերի մինիստրները՝ կոմս Մուրաւիով և կոմս Դոլու-խովսկի, համանման նոտաներ են ուղարկել իրենց կառավարութիւն-ների ներկայացուցիչներին Բելգրադում, Սոֆիայում, Բուքարէստում և Յետինիէում: Նոտաներում առած է թէ երկու ինքնակալները տեսակցութեան և մտքերի փոխանակութեան ժամանակ դէպք եղաւ բաւականութեան զգացմունքով նկատելու աչն կանոնաւոր ընթացքը, որ պահպանել են Սերբիայի, Բուլգարիայի, Ռումինիայի և Չերնո-գորիայի կառավարութիւնները աչն Փաղխի մէջ, որով անցնում է եւրոպական Թիւրքիան, մանաւանդ որ երկու ինքնակալների հաս-տատ յանկուծիւնն է պահպանել ընդհանուր իսլաւոթիւնը և statu quo.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Մինիստրների նախագահ և ներքին գործոց մինիստր Նշանակաճ է Ամինը-Դովլէ (26 մարտի), որ Ատրպատականի նահանգապետն էր: Ատրպատականի նահանգապետ Նշանակաճ է Ամիր-Նիզամ, որ առաջ ալդ պաշտոնն էր վարած նոյն նահանգում:

Թաւրիզում խոշոր անկարգութիւններ եղան հալերի դէմ: Ամբոխը մոլեռանդաբար չարձակեց հալերի թաղի վրա՝ մարտի 20-ին, որից չետոյ Լիւաւա և Ղալա թաղերը, ուր հալերն են բնակւում, ամբոխի կողմից պաշարւած մնացին: Շուկայում կարգը պահպանեց ոստի-

կանութեան միջամտութեամբ, որի պաշտպանութեամբ հաջերը փակ-
ւեցին իրենց տներում, թաղերը պաշտպանեցին զօրքերը. բազմաթիւ
հաջեր ապաստանեցին ռուսաց և ֆրանսիական հիւպատոսարաններում:
Գործը սկսեց ալս պատրւակով թէ իբր ռուսաց հիւպատոսի հաշտու-
արարը չուկալում խօսքով վիրաւորել է մի պարսիկի կնօջ: Հանգըս-
տութիւնը կեռ. մինչ ալժամ կատարելապէս վերականգնած չէ:

ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՄՈՒՄԻ մարտի 22-ին ալցելութեամբ ժամանեց Երևան
և 24-ին վերադարձաւ Ս. Էջմիածին:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Թիֆլիսի ընտրողական ցուցակը իւր վերջնական ձևով հրատարակեց
ապրիլի 18-ին: Ցուցակի մէջ տեղ են գտած 2.854 ընտրողներ. դո-
ցանից 2061 հոգի նոքա են, որոնք 1500 ռուբլուց ոչ պակաս գնա-
հատած տներ ունեն միաշնակ, առանց ընկերների. 393-ը ներկա-
ւացնում են ալնպիսի շինութիւններ որոնք 1500 ռուբլուց պակաս
չեն գնահատւած և որոնցից ամէն մէկի տէրերը մի քանի հոգի են
(СООУЧАСТНИКИ). 456 հոգի նոքա են, որոնք առևտրական առաջին
և երկրորդ դիւղիաներ ունին. 17-ը կաղմում են լրացուցիչ ցուցակը:
Օտարահպատակներից նոքա (թւով 37), որոնք մուծւած էին սկզ-
բնական ցուցակում, վերջնական ցուցակում չեն մտել: Կարևոր ենք
համարում աւելցնել, որ տների գնահատութիւնը ամենամեծ մասով
կատարել է 1886 թ.-ին, որից զէս գները բարձրացել են. ալնպէս որ
նոր գնահատութեամբ, որ վճռւած է կատարել մօտ ապագայում,
1500 ռուբլուց ոչ պակաս արժէք ունեցող տների թիւը հաւանօրէն
զգալապէս բարձրանալու է:

Քաղաքալին ընտրութիւնները կատարւելու են 18 մայիսի:

Նրեանի քաղաքագլուխ ընտրւած և ալժամ կառավարութիւնից
հաստատւած է Նադւորնը խորհրդական Տէր. Սարգսեան, որ առաջ նոյն
քաղաքի քաղաքալին վարչութեան անդամը և քաղաքագլխի փո-
խանորդն էր:

ՅՕԳՈՒՏ ԹԻԻՐՔԱ-ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ Հայոց Բարեգ. ընկերութեան
խորհրդի նախագահը ստացել է Գանիալի թագուհուց 6253 ռուբլի,
որ նւիրւած է Գանիալում կարօտեալներին օգնելու լանձնաժողովից,
որը գործում է թագուհու հովանաւորութեան ներքոյ: Ներկիս կա-
ռավարչապետը թոյլատրել է Հայոց Բարեգ. ընկերութեան խորհրդ-
դին ընդունել ալդ գումարը՝ նպատակին գործադրելու համար:

Խոշորագոյն նոր նւիրաբերութիւններից չօգուտ հաշ-վախտա-
կանների Կովկասում չիչնէք Թիֆլիսի քաղաքալին վարի ընկերու-
թեան տարեկան ընդհանուր ժողովում զուտ արդիւնքից տրւած
5000 ռուբլին. և Նդր. Միրզախանների և ընկ. Նաւթարդիւնաբե-

րական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովում վճռւած 4000 ռուբլին: Այդ գումարները չանձնւած են երկրիս կառավարչապետին: **ԶԸ ՀԱՍՏԱՏԻԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ,** Մի-երկու տարի առաջ մշակեց կանոնադրութիւն մի ընկերութեան, որի նպատակը պիտի լինէր օգնել Անդրկովկասեան ուսանողներին, որոնք համալսարաններում և ալլ բարձրագոյն դպրոցներում են ուսանում: Կանոնադրութեան ծրագիրը ներկայացրին կառավարութեանը պետական խորհրդական Կալուշանով (ալթմ վախճանւած) և Թիֆլիսի գիւղատնտեսական վարկի ընկերութեան վարչութեան նախագահ գնդապետ Գ. Ս. Գանդիլիկ: Ներքին գործերի մինիստրութիւնը ալթմ չափունել է որ ալդ խնդիրքը առանց հետեանքի է թողնւած:

ՆԻԷՐՆԵՐ,

Մոսկւայի հալ ուսանողութիւնը ստացել է ալս տարի նւէրներ Բաքւից՝ Նդր. Ղուկասեաններից 400 ռուբլի, Բուդաղեանից 100 ռ., ալ. Խնունցի միջոցով ալլ և ալլ անձերից 250 ռ., ընդամէնը 750 ռ.:

Պետական խորհրդական Յով. Թ. Հախերդեան, որ մեռաւ ներկալ ապրիլին, կտակած է 8.000 ռուբլի, որի տոկոսներով պահելու է մշտապէս մի տան Թիֆլիսի ամենաաղքատ հալ երեխաներից Մոսկւայի Լազարեան ճեմարանում, ապա Մոսկւայի համալսարանում աւելի բարձր կրթութիւն ստանալու համար. թոչակը սահմանւած է լանուն հանգուցեալի աւագ եղբայր Գէորգ Հախերդեանի (որ չափունի է հմտալից հրատարակութիւնով Սալադ Նովալի երգերի):

Հանգուցեալի քուր Ա. Հախերդեան և եղբոր աղջիկը Մ. Հախերդեան հանգուցեալի լիշտակի համար նւիրեցին 500 ռուբլի ալլ և ալլ բարեգործական նպատակներով:

ՔԱՀԱՆԱՆՆԵՐԻ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ, Շարունակ լսում ենք և կարդում քահանաների ձեռնադրութեան մասին. շարունակ բողոքներ ենք լսում տգէտ և անհամապատասխան մարդոց քահանալ ձեռնադրելու դէմ: Նւ հոսանքը, ըստ երեութիւն, շարունակում է: Նթէ ալդ գանգատները արդարացի են—հասարակաց կարծիքին պէտք է բաւարարութիւն տալ. ալլապէս վտանգաւոր հետեանքներ կարող են առաջանալ. Քահանաներ ձեռնադրելը եղել է և մնում է եկամուտի խոշոր աղբիւր թեմական առաջնորդների և Էջմիածնի համար: Ճիշդ է, առանց ծխականների համաձայնութեան ձեռնադրութիւնը չի կարող կատարուել, բալց անուրանալի է, որ ձեռնադրողները աւելի տէր են դառել ալդ գործում, քան ծխականները: Թէ ուրքան բարձր հողեր իշխանութիւնը ինքն էլ զգում է որ քահանաներ ձեռնադրելով նա մութ գործեր է կատարում, դորա եթէ ոչ ապացուցը, գէթ նշանը գտնում ենք ալս բանում, որ Ս. Էջմիածնի պաշտօնական թեր-

թում, Արարատ ամսագրում, չեն տպւում ձեռնադրուողների ցուցակները, մինչդեռ, օրինակ, Նոյն Արարատը տպւում է ուսուցչութեան իրաւունք ձեռք բերողների անւանացուցակը: Էջմիածինը, արհամարելով քահանաների ցուցակագրութիւնը, դորանով իսկ ցույց է տալիս թէ ինչ ստոր աստիճան է չտակացնում քահանաներին: Արարատի մարտի համարում մի տարկաւադի արեղալութեան աստիճան տրւելու առիթով, միմիա՛ն իբր երկրորդական լուր, հաղորդում է երեք քահանաների ձեռնադրութեան մասին պարզ աչապէս. «նորա հետ ձեռնադրւեցան նաև երեք քահանա, որոնցից մէկը Ռէորգեան ձեմարանի դպրոցական ընթացաւարտ է»: Կարձ—ոչ ազգ ու անուն, ոչ էլ տեղեկութիւն, թէ հապա միւս երկուսը ինչ կրթութիւն ունին, թէ ինչ տեղերի համար են ձեռնադրւել և ուրքեր են դռքա ամենքը և ալլն:

Քահանաների ձեռնադրութեան մի շարք դէպքերի մասին Նրււանից մի պատահական թղթակիցը մեզ գրում է, մարտ 30 թւակիրով.

«Տգէտ քահանաների ձեռնադրութիւնը աչապիսի չափերով է շարունակւում, որ հաշիւը կորել է: Ս. Սարգիս եկեղեցում 2 շաբաթ առաջ ձեռնադրւեցին 5 տղէտներ. նոյնպիսի 5 տղէտներ էլ ալսօր ձեռնադրւեցին. մի քանի աղապիսիներ էլ անցեալ շաբաթ Էջմիածնում են ձեռնադրւել: Մեր հոգեւորականութիւնը ուզում է աղապիսիներով լոյս տարածել ժողովրդի մէջ... և ալապէս անվերջ կատակներ»:

ԼԷ0, Մշակի ղլխաւոր աշխատակիցը, պատասխանելով Մուրճի անցեալ համարում տպւած Լուսինի «Պրական արաբեակ»-ին, Մշակ № 37 և 38-ում ջանքեր դործ դրեց միջնացնել իւր գրած նամակների իմաստը, կիսաբերան չպտարարելով թէ իբր տաղտկալի, ժանձրոյթ պատճառով, անտանելի ուղղութիւն ունեցող և նորա ալ խօսքերը իբր թէ Մշակին չէին վերաբերում: Մուրճի ներկալ համարում ընթերցողները կը գտնեն Լուսինի պնդածի պարզ ապացոյցը:

Լէօն վստահացել էր նաև պարծենալ, որ իբր թէ նա 1889-ից չհտու, աչն է 1890 թւականի ընթացքում ալ ևս չըկամեցաւ Մուրճին աշխատակցել վիպական գրածքներով: Ընթերցողները ալժմ (Մուրճի ներկալ համարում) կը գտնեն ապացոյց (նամակով), որ 1890-ին ինքը Լէօն էր առաջարկում մեզ իւր վէպերը տպել, բալց նոքա չըտպւեցին:

Նոյն Լէօն պնդեց Մշակ'ում, թէ Մուրճ'ում տպւած մի գրախօսականում 1889 թ-ից, իբր թէ ինքը, Լէօն, գրւած է հեղել Զուլայի կողքին: Ընթերցողները ներկալ համարում կը կարդան Մուրճի գրախօսականի ալդ տողերը և կը համոզւեն, որ Մուրճի գրախօսի մտքով բնաւ չի անցկացել մի աղապիսի համեմատութիւն անել Լէօի

ու Զուլալի մէջ, ալ որ աղպլտի համեմատութիւն ինքը Լէօն է որ կը կամենար թէ անդի:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՎԻԼՀԷԼԻ II ապրիլի 8-ին եկաւ Վեննա, տեսակցը-
ւելու Ֆրանց Յովսէփ II հայսեր հետ:

ԿՈՒՆՕ ՖԻՇԷՐԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ տօնեց նորերումս, ճորա 50 ամեալ գիտա-
կան գործունէութեան առիթով: Կունօ Ֆիշէր գերմանական ֆիլո-
սոփաբանն է քննադատութեան ամենախոշոր ներկայացուցիչնե-
րից է: Այժմ նա 73 տարեկան է: Նորա ամենանշանաւոր գործն է
«Նոր ժամանակների ֆիլոսոփաբանական պատմութիւնը», նշանաւոր
են նաև ճորա «Գեթէի Ֆաուստը», «Լեսսինգի Նաթանը» և ուրիշ
գրած քննարկները: Կունօ Ֆիշէր պրոֆեսոր էր Նախ Ենապոլս, 1856 թա-
կանից, ապա 1872-ից դէս Հալլեքլէրգ'ում:

ՍՏԵՆՏԱՏ: Իտալիայի թագաւոր Հումբերտի վրալ ոմն Աչչիարիտտօ դա-
շոնով լարձակումն գործեց, երբ թագաւորը կառքով գնում էր ձիար-
չաւի հանդէսի: Սպանման փորձը անաջող անցաւ. թագաւորը բոլո-
րովին ղերծ մնաց: Աչչիարիտտօն արհեստով երկաթագործ է և իբրեւ
միակ պատճառ իւր արարքի նա լալտնեց իւր անգործ և ապրուս-
տից զուրկ լինելը: Հումբերտ թագաւորը սորանով չորրորդ, իսկ
լուրջ կերպով երկրորդ անգամն է լարձակման ենթարկում. առա-
ջին տնգամ 1878-ին (Պասանանտէ):

ԹԱԼԿԱՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ: Հիմք կալ կարծելու, որ ճիշդ են լուրերը
թէ Սերբիայի, Բուլղարիայի և Չերնոգորիայի միջև կապած է մի
դաշն, քաղաքական և առևտրական: Բրիտէլի «Նորդ» ֆրանսիա-
կան լրագիրը, որ ռուսաց ղեկավարութիւնի քերանն է, ջերմ լցւած
նախնայեց Բալկանեան պետութիւնների դաշնակցութեան առիթով:

† ԽՈՍՐՈՎԵԱՆ, Նիկիդալոս վախճանեց մարտ ամսին. եղած էր տեսուչ
Գէորգեան ճեմարանի և իւր խմբագրութեամբ հրատարակեց «Վար-
ժարան» անունով ամսագիրը 1882—84 թականներին:

† ԲՐԱՀՄՍ, Իոսիփ, լալտնի կոմպոզիտոր մանաւանդ հոգեւոր երգերի,
վախճանեց մարտի 27-ին Վիեննայում:

† ՍՏԵՖԱՆ, ստատս-սեկրետար, կառավարիչ պոստու հեռագրի Պրուսիա-
լում վախճանեց 27 մարտի: Նշանաւոր դեր է կատարել պոստ-հե-
ռագրական գործի կանոնաւորման ու բարենորոգման մէջ Եւրոպա-
լում առհասարակ:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԵՐ

1) ԶԱՔԱՐԵԱՆ, Թադէոս, Բժ.—Ամուսնական առողջապահութիւն (Արտա-
տպած Մուրճ ամսագրից): Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1897. դիւն
է 20 կողէկ:

- 2) ՔԱՄԱԼԵԱՆ, Ս.—Հողածին և անմեռ աշխարհ, Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանց. 1897. գինն է 8 կոպէկ:
- 3) ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ—Նապաստակի և ողնու գրազը (պատկերազարդ), Հրատ. Թիֆ. Հրատ. ընկերութեան, տպ. Ռոտինեանցի, 1897. գինն է 40 կոպ.
- 4) МЕЛИКЪ-САРКИСЯНЪ, С. А.—Муганская стена. (Естественно-историческій и сельскохозяйственный очеркъ). Изд. Минист. земледѣлія и госуд. имуществъ, Отдѣла земельныхъ улучшеній. С. Петербургъ, 1897.
- 5) TCHOBANIAN. Archac. L'Arménie, sonhistoire, sa littérature, son role en Orient. Avec une introduction par Anatole France. Paris. Société du Mercure de France. 1897.

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ.

Վարնա. Հալիական ցնթերցարան. Յանձնեցինք Մշակի և Ար. ձաղանքի խմբագրութիւններին ձեր ղրկած 5-ական ռուբլին. Մուրճին մնում էք պարտ 3 ռուբլի:

ՎՐԻՊԱԿ, Մուրճ № 2—3.

«Լեզուական զրոյցներ», էջ 328, տող 13, տպւած է՝ բացի ուղղել՝ բալի. (պէտք է տեսնել՝ բալի արմատի ու վերջաւորութեան մէջ և ալն.)

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

I

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Թիֆլիսից-Բաքու. ա) ելք—1 ժ. 10 ռ. օրւայ, հասնում է Բաքու—7 ժ. 30 ռ. առաւ. բ) ելք—10 ժ. 50 ռ. երեկ. հասնում է Բաքու—4 ժ. 49 ռ. օրւայ:

Բաքուից-Թիֆլիս. ա) ելք—2 ժ. 30 ռ. օրւայ, հասնում է Թիֆլիս—8 ժ. 21 ռ. առաւօտ. բ) ելք—11 ժ. 5 ռ. գիշերւայ հասնում է Թիֆլիս—5 ժ. 50 ռ. գիշերւայ:

Թիֆլիսից-Բաթում. ա) ելք—9 ժ. 10 ռ. առաւ., հասնում է Բաթում—9 ժ. 45 ռ. գիշերւայ. բ) ելք—6 ժ. 50 ռ. երեկոյեան, հասնում է Բաթում—8 ժ. 15 ռ. առաւօտեան:

Բաթումից-Թիֆլիս. ա) ելք—9 ժ. 40 ռ. առաւ., հասնում է Թիֆլիս—9 ժ. 55 ռ. երեկոյեան, բ) ելք—11 ժ. 20 ռ. գիշերւայ, հասնում է Թիֆլիս—12 ժ. 25 ռ. ցերեկւայ:

II

ՌԱՁՄԱՎԻՐԱԿԱՆ ԽՃՈՒՂՈՎ, ԹԻՖԼԻՍԻՑ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՁ
ԳՆԱՅՈՂ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից—Հինգ տեղով կառքեր. ա) Դուրս է գալիս առ ժամը 7-ին, գիշերում է Մէթում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Վլադիկավկազ: բ) Դուրս է գնում առաւ. ժամը 9-ին, գիշերում Պասանաուրում և միւս օրը գիշերւայ ժամը 8-ին հասնում է տեղ:


Վեցտեղով հանրակառքեր (օմնիբուս) գնում են երկու անգամ, առանց գիշերելու, ա) 9 ժ. 30^ր. առաւօտ և բ) 7 ժ. երեկոյեան: Հասնում են Վլադիկաւկազ, առաջինը՝ միւս օր 12 ժ. օրւայ և երկրորդը՝ 8 ժ. 50^ր. երեկոյեան:


ՎԼԱԴԻԿԱՅԱՍՏԱՅԻՑ—Հինգ տեղով կառք. ա) Դուրս է գալիս առաւ. 7 ժ., գիշերում է Մլէթ, հասնում է Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 6-ին. բ) Դուրս է գալիս ժամը 9-ի ն, գիշերում է Դուդաուր, հասնում է Թիֆլիզ միւս օր ժամը 7-ին երեկոյեան:

Վեցտեղով հանրակառք. երկու անգամ, առանց գիշերելու, ա) առ. ժ. 10-ին և բ) երեկ. ժ. 7-ին. հասնում են Թիֆլիզ. առաջինը՝ միւս օրւայ ժամ 11-ին առ., երկրորդը՝ ժամը 8-ին երեկոյեան:

Գներն են: Կառքի ներսում իւրաքանչիւր անձի համար 19 ռ. 60 կոպէկ: Կառքի կից կաբրիօլետում՝ 13 ռ. 20 կ. կառապանի մօտ՝ 5 ռ. 40 կոպէկ:

Մլէթի կապարանում գտնուում են ամեն կառքի համար մանուկների և կանանց համար առանձին համարներ գիշերելու՝ առանց վարձի, իսկ տղամարդիկ կարող են գիշերել ընդհանուր սենեակում կամ վճարելով՝ մասնաւոր համարներում:





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻՒԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ տարեկան 10 ռուբլի, կամ 30 ֆռանկ:
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներ-
ից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.
Արտատաճմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“. և կամ հեռուստալանձերին.

ԲԱՔՈՒ—այ.պ. Ֆրիդոն Մարզանեան՝ Հ. Մելիքեանի զրասնեակ:

ԲԱԼԱՍԱՆԻ.—այ. Մկրտիչ Էհրամճեան:

ԲԱԹՈՒՄ—այ. Սարգիս Մակարեան և այ. Ալեքս. Խոջամիրեան:

ՆՐԵՒԱՆ—այ. Գեորգ Ղարաջեանց:

ԿԱՐՍ—այ. Աբել Ապրեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—այ. Զաւադ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԻԻ—այ. Աբրահամ Բունիաթեան:

ՂԶԼԱՐ—այ. Ստեփ. Սողոմոնեան:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—այ. Յովհ. Տէր-Միրաքեան:

ՄՈՍԿԱ—այ. Ալեքսանդր Ծառուբեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—այ. Քրիստ. Բաշինջաղեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—այ. Ալեքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում: